



ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ԹԻՄԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆ

2009



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am

Այս հրատարակությունը ստեղծվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի շնորհիվ, Ամերիկայի ժողովրդի նվիրատվության միջոցով, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ: Մույն հրատարակության բովանդակության համար պատասխանատու է Երեւանի մամուլի ակումբը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

Ժողովածուն ընդգրկում է Երեւանի մամուլի ակումբի «Հայ-թուրքական թիմային լրագրողական նախագծի» շրջանակներում լրագրողների փոխայցելությունների արդյունքում հրապարակված հոդվածները, ինչպես նաեւ մամուլի ուսումնասիրության նյութեր:

Ծրագրի իրականացման աջակցել են Եվրասիա համագործակցություն եւ Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամները:

Միմյանց հանդեպ դարավոր թշնամանքով, անվերապահ կարծրատիպերով եւ բացասական հուզականությամբ ուղղորդվող հասարակություններն իրար ճանաչելու, առանց վրեժխնդրության ու չարության՝ հարաբերություններ հաստատելու, միմյանց լսելու խնդիր ունեն: Երբեմն հասարակ մարդու՝ կարսեցի մի ծերունու կամ «Ֆեներբախչե»-ի երկրպագու հայ երիտասարդի՝ ձեականություններից զերծ խոսքն ավելի շատ բան է ասում հարեւանների հանդեպ վերաբերմունքի եւ մերձեցման հնարավորությունների մասին, քան այդ թեմաներով ընթացող քաղաքագիտական երկարուձիգ քննարկումներն ու դիվանագիտական երկխոսությունները:

Հայկական եւ թուրքական մամուլում լույս տեսած այս անկեղծ ռեպորտաժները, հարցազրույցներն ու ակնարկներն ուղղված են օգնելու փոխադարձ ճանաչողության եւ հանդուրժողականության հաստատմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊՐՈՔԼԵՄԱՏԻԿԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ	7
ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	15
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	20
ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ	27
Ծոփինար ՆԱԶԱՐՅԱՆ «ԴՈՒՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ՎԵՐԱՇԱՐԱԴՐԵԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»	29
«ՃԱԿԱՏՍ ԲԱՑ՝ ՀԱՅԵՐԵՆ ԷԼ ԵՄ ԽՈՍՈՒՄ, ԹՈՒՐՔԵՐԵՆ ԷԼ»	33
ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ՝ ՓԱԹԵԹՈՎ	35
Աշոտ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ. ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ	38
Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ «ԵՐԿԱԹԵ ՎԱՐԱԳՈՒՅՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԿԻԼՈՄԵՏՐԸ»	43
Ալին ՕՋԻՆՅԱՆ ԱՐՏԱԳԱՂՁ ԴԵՊԻ ՓԱԿ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ԵՐԿԻՐ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	52
Վերջին ԶԻՖԼԻՕՂԼՈՒ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ Է ՓՇԱԼԱՐԵ ՑԱՆԿԱՊԱՏԸ	57
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐՆ ԱՐՎԵԼ ԵՆ 1995-ԻՆ	60
Նազեհան ԱԼՋԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է ՁԵՁ՝ ՋԱՆԱՆ ԱՐԸԹՄԱՆ	63
ԵՍ ՆՈՒՅՆՊԵՍ ՀԱՅ ԵՄ	65
ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՎՆԱԲԱՆԵՑ ՆԵՐՈՂՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔԸ	66
Բերիվան ԹԱՓԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԹՈՒՐՔԻԱ՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴ» ՀԱՅԱՑՔ	70
Իփեք ԵՉԴԱՆԻ «ՍԱՀՄԱՆԸ ՄԻ ՔԱՆԻ ԱՄՍՈՒՄ ԿԲԱՑՎԻ»	77

ՀԱՅ - ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊՐՈՔԼԵՄԱՏԻԿԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ

«Հայ-թուրքական թիմային լրագրողական նախագծի» իրականացման ընթացքում՝ 2007-2009 թվականներին, հայկական եւ թուրքական ՁԼՄ-ներում հայ-թուրքական հարաբերությունների եւ հարեւան երկրում ընթացող իրադարձությունների ու գոյություն ունեցող պրոբլեմների տարբեր կողմերի լուսաբանումն էականորեն փոփոխվեց: Չափից ավելի հավակնոտ կյիներ այդ փոփոխություններում առաջնակարգ նշանակություն վերագրել այս նախագծին, սակայն որոշակի դեր այն, իհարկե, կատարեց:

Անցած երկու տարում լուրջ շրջադարձ տեղի ունեցավ երկու երկրների հարաբերություններում, եւ դա ինքնին՝ վճռորոշ ազդեցություն թողեց ՁԼՄ-ների լուսաբանումների բնույթի վրա: Երկու երկրներում էլ աճեց հասարակայնության հետաքրքրությունը հարեւանի հանդեպ, եւ հիրավի բեկումնային դարձավ 2008-ը, երբ դրվեց «Ֆուտբոլային դիվանագիտության» սկիզբը: Միաժամանակ, ինչպես ցույց է տալիս այս նախագծի շնորհիվ մամուլում ի հայտ եկած հրապարակումների վերլուծությունը, դրանք զգալիորեն ընդարձակեցին համապատասխան տեղեկատվական ընդհանուր հոսքում մինչ այդ առկա ավանդական թեմատիկան:

Երեւանի մամուլի ակումբը հայ-թուրքական երկխոսությանն աջակցելու գործին միացել է 2000-ին: Իսկ 2001-ին ԵՄԱ-ն սկսել է հետետղականորեն ուսումնասիրել Հայաստանի եւ Թուրքիայի մամուլի գործունեությունը՝ երկկողմանի հարաբերությունների, տարածաշրջանային խնդիրների եւ հարեւան երկրում ընթացող իրադարձությունների լուսաբանման տեսանկյունից: Երեւանի մամուլի ակումբի նախաձեռնությամբ 2002-2007-ին թողարկված «Մեդիադիալոգ» օն-լայն տեղեկագիրը, որը Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի ՁԼՄ-ների՝ տարածաշրջանին վերաբերող հիմնական հրապարակումների դայջեսթ էր, նույնպես հնարավորություն ընձեռեց պատկերացում կազմել այդ թեմատիկայի լուսաբանման բնույթի մասին:

Վերջին տարիներին մամուլի այսօրինակ հետազոտությունները հետաքրքրեցին նաեւ մեր թուրք գործընկերներին, ովքեր օգտվելով համակարգչային հաստիկ ծրագրերից եւ թերթերի ինտերնետային հրատարակություններից՝ վերլուծեցին, թե որքանով ակտիվ է եղել Հայաստանի արտացոլումը թուրքական թերթերի էջերում, ըստ որում՝ 2008-2009-ի տվյալները համեմատելով տասնամյա վաղեմության ցուցանիշների հետ:

Ինչպես ԵՄԱ-ի, այնպես էլ այլ կազմակերպությունների իրականացրած բոլոր հետազոտությունների համեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ մինչեւ 2008-ը սկզբունքային տարբերություն կար հայկական ՁԼՄ-ներում՝ թուրքական, եւ թուրքական ՁԼՄ-ներում՝ հայկական թեմատիկային անդրադարձերի միջեւ: Եթե Հայաստանում լուսաբանման ծավալով եւ մշտական հետաքրքրության առկա-

յության տեսանկյունից Թուրքիան հաստատորեն գրավում էր առաջատար տեղերից մեկն արտասահմանյան երկրների շարքում, ապա հայկական թեմատիկան թուրքական երթում եւ տպագիր ՁԼՄ-ների էջերում հայտնվում էր դեպքից դեպք: Այն ժամանակահատվածներում, երբ ակտիվանում էր Հայաստանի հետ կապված որեւէ հարց՝ լինէր դա Լեւոնային Ղարաբաղի խնդրով ընթացող բանակցություններին վերաբերող նորություն, հայերի կողմից նշվող՝ ցեղասպանության զոհերի հիշատակի մոտեցող օրվան կամ երրորդ երկրների խորհրդարանների կամ կառավարությունների օրակարգում ցեղասպանության ճանաչմանն առնչվող հարց, «հայկական թեմատիկան» լայն քննարկման առարկա էր դառնում թուրքական ՁԼՄ-ներում: Սակայն հրատապ առիթի սպառման հետ՝ Հայաստանն էլ երկար ժամանակով անհետանում էր թերթերի էջերից եւ եթերից:

2000-ի սկզբից հարեան երկրի հանդեպ թուրքական ՁԼՄ-ների հետաքրքրության առիթ հանդիսացավ Թուրքիայի՝ Եվրոպական Միություն մտնելու հեռանկարի համատեքստում հայ-թուրքական հարաբերությունների հարցը: Եվ քանի որ հենց այդ ընթացքում մեծացավ ԱՄՆ կոնգրեսի կողմից հայոց ցեղասպանությանն առնչվող բանաձեռի ընդունման հավանականությունը, Հայաստանը սկսեց դիտարկվել ոչ թե պարզապես հարեան երկիր, որի հետ Թուրքիան եւ իր բարեկամ Ադրբեջանն ունեն յուրջ պրոբլեմներ, այլ նաեւ՝ որպես Անկարայի արտաքին քաղաքականության վրա որոշակի ազդեցություն ունեցող մշտական գործոն: Հայաստանի հանդեպ հետաքրքրությունն էլ, համապատասխանաբար, սկսեց ավելի համակարգված բնույթ ստանալ: Դրան նպաստեց նաեւ հայ-թուրքական երկխոսության զարգացման հարցում մի շարք միջազգային/արտասահմանյան կազմակերպությունների ջանքերի ակտիվացումը: Այստեղ նախեսառաջ հարկ է նշել ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ստեղծված՝ Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի (ՀԹՀՀ) եւ զուգահեռ իրականացվող՝ երկու կողմերի ավելի քան տասնյակ ոչ կառավարական կազմակերպություններին մեկտեղած՝ «Երկրորդ ուղի» (Track II) ծրագրի գործունեությունը: Քաղաքագետների, լրագրողների, գործարարների, մշակույթի գործիչների, կանանց եւ երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների այսօրինակ շփումների բովանդակությունը ժամանակ առ ժամանակ իր արտացոլումն էր գտնում թուրքական ՁԼՄ-ներում՝ հայկական թեմատիկային արվող անդրադարձները դարձնելով ավելի հաճախակի:

Միաժամանակ, հարեան երկրի մասին հիշատակումը շարունակեց կախվածության մեջ մնալ հրատապ առիթներից՝ լինէր դա Անկարայի եւ Բյուսեյի միջեւ բանակցությունների հերթական փուլը, թե՛ ՀԹՀՀ հանդիպում: Իսկ 2004-ին, ծրագրերի այդ շարքի ավարտից հետո, կրկին տեղեկատվական լրություն տիրեց: Այն 2005-ի մայիսին մի կարճ ժամանակահատված ընդհատվեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի եւ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի միջեւ նամակագրությամբ: Եվ միայն 2008-ին Հայաստանն ու հայ-թուրքական հարաբերությունները պատվավոր եւ մշտական տեղ գրավեցին թուրքական ՁԼՄ-ների էջերում եւ եթերում:

Հայկական ՁԼՄ-ներում մինչեւ 2008-ը արձանագրվեցին վերելքային իրավիճակներ, երբ Թուրքիայի եւ հայ-թուրքական հարաբերությունների թեման հաստուկ ուշադրության արժանացավ: Դրանք առաջին հերթին կրկին պայմանավորվեցին ցեղաս-

պանության ճանաչման հարցի եւ արտասահմանյան երկրներում դրա հետ կապված գործընթացների հանկարծական փոփոխություններով: Սակայն այս ծայրահեղ իրադարձություններից դուրս էլ՝ թուրքական թեմատիկան շարունակեց որոշակի ուշադրություն գրավել: Մի շարք թերթեր, հեռուստատաղիոալիքներ, ինտերնետ- հրատարակություններ հետեւեցին եւ լուսաբանեցին Ստամբուլի հայ համայնքի կյանքի տարբեր ոլորտները, ԱՄՆ-ի, Եվրամիության, Ռուսաստանի, Ադրբեջանի, Վրաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների զարգացումը, հարեւան երկրի ներքաղաքական վիճակը, նրա մասնակցությունը տարածաշրջանային ծրագրերին, քրդական եւ կիպրոսյան խնդիրը եւ այլն: Պարզ է, որ հայկական ՁԼՄ-ները նշված թեմաների հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք դրսևորեցին հայ-թուրքական հարաբերությունների տեսանկյունից, սակայն այդօրինակ բժախնդրությունը բոլորովին էլ անհրաժեշտ պայման չէր հանդիսանում հարեւան երկրի կյանքի տարբեր ոլորտները լուսաբանելու համար: Այսինքն, Թուրքիան ինքնին՝ որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում:

Բավական տարածված երեւոյթ էր՝ լուսաբանված փաստերում, իրադարձություններում եւ երեւոյթներում բացասական կողմերի փնտրտուքը: Հաճախ նման մոտեցում կար նաեւ Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի գործունեությանն անդրադառնալիս, հայ եւ թուրք գործարարների համագործակցությանը, թուրքական ապրանքների արտահանմանը, ոչ կառավարական կազմակերպությունների կապերին եւ համատեղ նախագծերին, թուրքական առողջարաններում հանգստին, մանր առևտրականներին եւ Թուրքիա՝ աշխատելու մեկնած Հայաստանի այլ քաղաքացիներին վերաբերող հրապարակումներում:

Միևնույն ժամանակ, չնայած հայաստանյան ՁԼՄ-ներում «թուրքական» թեմայի մշտական առկայությանը, չի կարելի ասել, որ այն քաղաքական կարեւորության առումով առաջնայնություն է ունեցել ինչպես մամուլի, այնպես էլ լսարանի համար: Այդ մասին է վկայում, մասնավորապես, ԵՄԱ-ի «Ղարաբաղյան հիմնախնդիրը եւ հայ-թուրքական հարաբերությունները Հայաստանի քաղաքական գործիչների նախընտրական ելույթներում» ուսումնասիրությունը: Այն իրականացվել էր 2007 թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին՝ ընդգրկելով քաղաքական տարբեր ուղղվածություն ունեցող 7 առաջատար համերկրային թերթեր: Ծուրջ երկու ամիս, երբ ընտրություններին մասնակցող քաղաքական գործիչները պետք է որ իրենց ընտրողներին համոզեին, որ իրենք լավագույնս կլուծեն երկրի առջեւ ծառայած խնդիրները, հայ-թուրքական հարաբերությունները կուսակցական դիրքորոշումների համատեքստում հիշատակվել էին ընդամենը 27 անգամ, ըստ որում՝ 4 անգամ դրանք եղել էին համառոտ հայտարարություններ: Այլ կերպ ասած՝ ուսումնասիրության թեման արժարժվել էր դիտարկված թերթերի 10 համարից մեկում միայն: Այդ հրապարակումներում առկա էին երկու երկրների միջեւ հարաբերությունների տարբեր կողմերի 66 հիշատակում: Առավել հաճախ՝ 16 անգամ, խոսվել էր դիվանագիտական եւ այլ պաշտոնական հարաբերություններ հաստատելու մասին, 15 անգամ՝ 1915 թվականին հայերի ցեղասպանության, 10 անգամ՝ երկու երկրների ներքին եւ արտաքին քաղաքականության վրա հայ-թուրքական հարաբերությունների ազդեցության, 7 անգամ՝ հայ-թուրքական սահմանի բացման մասին, եւ միայն մեկ անգամ էր հիշատակում եղել ժողովրդական (քաղաքացիական) դիվանագիտության եւ ուղիղ/բազմակողմ հանդիպումների մասին:

Դիտարկված 7 թերթերի հրապարակումներում ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ իրենց դիրքորոշումներն էին արտահայտել նախընտրական պայքարի տարբեր փուլերին մասնակցած 25 կուսակցություններից ընդամենը 9-ը: Հայկական ՁԼՄ-ների՝ անգամ թռուցիկ դիտարկումը, սկսած 2008- կեսերից, երբ սկսվեց «Ֆուտբոլային դիվանագիտություն» կոչված գործընթացը, ցույց է տալիս, որ թերթերի հազվադեպ համարներում էին շրջանցվում հայ-թուրքական հարաբերությունների այս կամ այն կողմի մասին քաղաքական ուժերի դիրքորոշումների հիշատակումները: Այդպիսով, Հայաստանում նույնպես կարելի է խոսել վերջին տարում թուրքական թեմատիկայի նկատմամբ հայկական ՁԼՄ-ների վերաբերմունքի սկզբունքային տարբերություն մասին:

Երկու թուրք գործընկերների կողմից՝ առաջատար երկու համերկրային օրաթերթերի՝ «Հյուրիեթ»-ի (տիրաժը՝ 465 հազար օրինակ) և «Չաման»-ի (767 հազար օրինակ) ուսումնասիրության համաձայն՝ համապատասխան փոփոխությունները դրանցում կատարվել են բավական հարաճուն կերպով:

1998-2004-ին «Հյուրիեթ»-ում Հայաստանին առնչվող հրապարակումների թիվը եղել է 300-ից ավելի: 2008-ին դրանց թիվն աճել է 929-ի, իսկ 2009-ի միայն առաջին կեսին՝ հասել 726-ի: Գրեթե համանման աճ է նկատվել նաև «Չաման» օրաթերթում: Ընդամենի, անհրաժեշտ է նկատի առնել, որ «Հյուրիեթ»-ը քննադատական դիրքորոշում ունի թուրքական ներկայիս կառավարության նկատմամբ, իսկ «Չաման»-ը, ընդհակառակը, դասվում է իշխանությունների հանդեպ լոյալ վերաբերմունք ունեցող ՁԼՄ-ների շարքին:

Եթե 10-11 տարվա վաղեմություն ունեցող հրապարակումները համեմատելու լինենք այս վերջին տարում տպագրվածների հետ, կարելի է եզրակացնել, որ թե՛ այն ժամանակ, թե՛ հիմա՝ հայ-թուրքական սահմանի բացումը և դարաբաղյան հակամարտության կարգավորումը գտնվել են ուշադրություն կենտրոնում: Դրա հետ միասին, հետագայում, ինչպես արդեն նշվեց, այդ թեմայով նյութերը հայտնվել են շատ ավելի հազվադեպ և անկանոն, բացի այդ, անդրադարձն այդ թեմաներին՝ 1997-1998-ին հաճախ շաղկապվել է այլ, առավել ջանադրորոն լուսաբանվող պրոբլեմների՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շինարարության կամ Քրդական աշխատավորական կուսակցության առաջնորդ Աբդուլլահ Օջալանի գտնվելու վայրի հետ կապված ենթադրությունների հետ (Հայաստանը դասվել էր հնարավոր տարբերակների շարքում): Բնութագրական է, որ «Չաման» թերթում «Հայաստան» և նույնարմատ բառերը առավել հաճախ հանդիպել են թերթի Բաքվի թղթակցի հոդվածներում, ինչը ևս մեկ անգամ վկայում է այդ երկրի հանդեպ միջնորդավորված հետաքրքրության մասին: Մինչդեռ հիմա «հայկական» թեման ինքնին դարձել է կենտրոնականներից մեկը: Այս առումով նույնպես, հայկական և թուրքական ՁԼՄ-ներում երկու երկրների փոխհարաբերությունների լուսաբանումներում ավելի շատ ընդհանուր գծեր են ի հայտ եկել:

Միայն 2008-ի սեպտեմբերին, երբ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլն այցելեց Հայաստան, «Հյուրիեթ»-ում 340 (ավելին, քան նախորդած յուրաքանչյուր տարում) հրապարակում եղավ «Հայաստան» բառի և նույնարմատ բառերի հիշատակմամբ, և հրապարակումների ճնշող մեծամասնությունը նվիրված էր հենց հարեւան երկրին և հայ-թուրքական հարաբերություններին: Անցած տարիներին թերթերը

«հայկական» թեմային զուտ քաղաքական, դիվանագիտական առումով էին անդրադառնում: Թե երկիրը, մարդիկ իրենից ինչ են ներկայացնում՝ լրագրողներին գրեթե չէր հետաքրքրում: 2008-2009-ին, քաղաքական թեմաներին զուգահեռ, սկսեցին հայտնվել նաև Հայաստանի կյանքի տարբեր կողմերին վերաբերող նյութեր: Վերջին ամիսներին արագորեն հաղթահարվեցին չգրված տաբուները՝ կապված հայերի և թուրքերի միջև եղած պոթելմների հետ, թուրքական մամուլում լուսաբանվեց մտավորականների խմբի նախաձեռնությունը՝ Ինտերնետ համացանցում հայերին ուղղված՝ 1915-ի «մեծ ողբերգության» համար ներողության ստորագրահավաքը: Թուրքական հայտնի լրագրող Չինգիզ Չանդարը, լուսաբանելով Աբդուլլահ Գյուլի այցը Երևան, կարծիք հայտնեց այն մասին, որ Երևան մեկնելը և ցեղասպանության գոհերի հուշահամալիր չայցելելը համարժեք է Մեքքա գնալուն և Քաբայի տաճարը չտեսնելուն:

Հրապարակումների ի հայտ գալուն, որոնցում Թուրքիայի և Հայաստանի ընթերցողները հնարավորություն ստացան ավելի շատ բան իմանալ հարեան երկրի մասին՝ անկախ քաղաքական հարաբերություններից, ավելի լավ պատկերացնել, թե ինչով են ապրում, ինչ են մտածում մարդիկ (այդ երկրների քաղաքացիները), մեծապես նպաստեցին լրագրողների փոխանակման ծրագրերը, մասնավորապես՝ Եվրասիա համագործակցություն և Ֆրիդրիխ Էրերտի անվան հիմնադրամների աջակցությամբ իրականացված՝ Երևանի մամուլի ակումբի նախաձեռնությունը: «Հայ-թուրքական թիմային լրագրողական նախագծի» շրջանակներում Հայաստան այցելած թուրք լրագրողները գրեցին Թուրքիային սահմանակից մարզերում ապրող հասարակ մարդկանց կյանքի, երկկողմանի հարաբերությունների բարելավման դեպքում այդ տարածաշրջանների զարգացման հեռանկարների, հայ և թուրք գործարարների իրականացրած համատեղ փոքր բիզնես - ծրագրերի, երկու երկրների մերձեցման գործընթացների հանդեպ հայկական Սփյուռքի վերաբերմունքի մասին...

Թուրք ընթերցողները հնարավորություն ստացան այդ հրապարակումների միջոցով իմանալ՝ ինչպես են ապրում և այլևայլ հարցերի մասին ինչ են մտածում հասարակ հայ մարդիկ, տարբեր մասնագիտություններ, տարբեր տարիք ունեցող քաղաքացիներն ինչպես են վերաբերվում Թուրքիայի և Հայաստանի մերձեցման գործընթացներին: Այդ հրապարակումների շնորհիվ թուրքական լսարանին ավելի հասկանալի դարձան հայկական տարբեր քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների դիրքորոշումները երկու երկրների հասարակայնությանը հուզող հարցերի վերաբերյալ:

Թուրքական հասարակայնության կողմից Հայաստանն ավելի լավ ճանաչելու խնդրում կարեւոր դեր խաղաց 2009-ի մայիսին «Հրանտ Դինք» հիմնադրամի կողմից կազմակերպված՝ Թուրքիայի տարբեր ՋԼՄ-ներում աշխատող 10 լրագրողների այցելությունը հարեան երկիր: Ուղեորության մասնակից յուրաքանչյուր լրագրող լուսաբանման համար ընտրել էր Հայաստանի կյանքի որեւէ կոնկրետ ոլորտ:

Իրենց հերթին ԵՄԱ «Հայ-թուրքական թիմային լրագրողական նախագծի» մասնակից հայ լրագրողները նույնպես կարողացան էական բազմազանություն մտցնել Թուրքիայի և հայ-թուրքական հարաբերությունների մասին իրենց ՋԼՄ-ների հրապարակումների թեմատիկայում: Նրանք, մասնավորապես, ընթերցողին ներկայացրեցին վերջին տարիների երկկողմանի քաղաքացիական նախաձեռնությունները՝

փորձելով վերլուծել դրանց արդյունավետությունը: Այդ նյութերում պատմվում էին նաև լրագրողների, ոչ կառավարական կազմակերպությունների, տարբեր ոլորտներ ուսումնասիրող մասնագետների հետ հաստատված կապերի և այլնի մասին: Հետաքրքրություն էին ներկայացնում Թուրքիայի հայ համայնքի, ինչպես նաև դեպի հարևան երկիր, որի հետ Հայաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ, Հայաստանի քաղաքացիների աշխատանային միգրացիայի հիմնախնդիրների մասին հրապարակումները:

Հենց թեմատիկայի ընդլայնման տեսանկյունից ԵՄԱ նախագիծն իր դերը խաղաց ինչպես հայկական, այնպես էլ թուրքական ՁԼՄ-ներում Թուրքիայի և թուրք-հայկական հարաբերությունների լուսաբանման ինտենսիվություն և բնույթի մեջ փոփոխություններ մտցնելու հարցում: Բացի բազմազան նյութերից, որ լույս տեսան հենց այս նախագծի շնորհիվ, այն մյուս լրագրողներին նույնպես հուշեց, թե ինչպես կարելի է դուրս գալ ավանդական թեմաների շրջանակից, հարևան երկիրն ավելի լավ ճանաչելու, առկա հիմնահարցերի էության մեջ խորամուխ լինելու նոր, թարմ մոտեցումներ առաջարկեց ընթերցողներին:

**ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ**

Մամուլի տեսություն

Այս հետազոտությունն անցկացվել է «Հայ-թուրքական թիմային լրագրողական նախագծի» շրջանակներում, որն իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությամբ:

Հետազոտությունն ընդգրկում է 2002-2007 թթ. ընկած ժամանակահատվածը եւ նպատակ ունի ուրվագծել Հայաստանի եւ Թուրքիայի քաղաքացիական հասարակությունների միջեւ ընթացող նախաձեռնությունների լուսաբանումը:

Ստորեւ ներկայացվում է հայկական եւ թուրքական լրատվամիջոցների կողմից համատեղ քաղաքացիական նախաձեռնությունների լուսաբանման տեսություն:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայկական մամուլի լուսաբանման հետազոտությունն ընդգրկում է 2002-2007 թթ. ժամանակահատվածը: Դրանում օգտագործվել են հայաստանյան մամուլի ինտերնետային արխիվները եւ 2002-ից ի վեր Երեւանի մամուլի ակումբի նախաձեռնությամբ գործող MediaDialogue կայքի արխիվները: Վերջինիս գործածությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կայքի ուշադրության առանցքում մամուլի՝ Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններին վերաբերող հրապարակումներ են:

Հետազոտված հրապարակումները տեղ են գտել հետեւյալ պարբերականներում.

- «Առավոտ»
- «Հայաստանի Հանրապետություն»
- «Ազգ»
- «Հայոց աշխարհ»
- «Հայկական ժամանակ»
- «Իրավունք»
- «Գոլոս Արմենիի»
- «Նովոյե վրեմյա»
- «Ռեսպուբլիկա Արմենիա»

ՀԱՅ-ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱՇՏԵՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի (TARC) գործունեությունը բավական լայնորեն է լուսաբանվել մամուլում: Առաջին հրապարակումներում (2001) կասկածամիտ վերապահումներ էին արվում, ոմանք իրենց տարակուսանքն էին հայտնում

TARC-ի անդամների վերաբերյալ: Մամուլում հրապարակվել են մի շարք հարցազրույցներ Հանձնաժողովի՝ հայկական կողմի անդամների հետ, ովքեր բացատրել են TARC-ի նպատակներն ու խնդիրները (տե՛ս «Առավոտ», հուլիսի 14, դեկտեմբերի 8, 2001): Շուտով հայկական մամուլի զգալի մասը սկսեց քննադատել TARC-ի գործունեությունը՝ որպես հիմնական փաստարկ բերելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի առկայությունը թուրքական կողմին թույլ է տալիս Հայաստանի հետ երկխոսության պատրանք ստեղծել, ինչի իրական նպատակն է՝ խափանել Ցեղասպանության միջազգային ճանաչումը:

Դրա ամենաբնորոշ օրինակը TARC-ի անդամ, մոսկվացի պրոֆեսոր Անդրանիկ Միրանյանի հարցազրույցն է «Գոլոս Արմենիի» թերթին (հ. 8, 9, 2002 թ.), որում ռուսաստանցի քաղաքագետը բացատրում է, թե որն էր Հանձնաժողովի առաքելությունը, եւ թե ինչու էին նրա ջանքերն ապարդյուն: Մասնավորապես, Անդրանիկ Միրանյանի քննադատության առարկան էին Հայաստանի իշխանությունների վերաբերմունքը եւ TARC-ի գործունեության լուսաբանումը մամուլում: «Իհարկե, երկրի ղեկավարության հասցեին նախատինքն ու մեղադրանքները, եթե պարոն Միրանյանի պնդումները համապատասխանում են իրականությանը, անխոս, արդարացի են: Եվ պահանջում են, մեր կարծիքով, լրացուցիչ պարզաբանումներ՝ գոնե ԱԳՆ կողմից: Մակայն, ինչ վերաբերում է հանձնաժողովի հակառակորդների համատարած մեղադրանքներին, իսկ դա, ըստ էության, ամբողջ հայկական աշխարհն է, պարոն Միրանյանը ցուցաբերում է ոչ միայն լիակատար քամահրանք դրանց նկատմամբ, այլեւ հայկական ազգային մտածողության, ցեղասպանության նկատմամբ վերաբերմունքի լիակատար անընթեռնողություն, ըստ էության նրան դնում է քաղաքական եւ այլ կոնյուկտուրայից կախման մեջ»,- մասնավորապես ասված է Անդրանիկ Միրանյանի հարցազրույցի խմբագրական մեկնաբանությունում:

Այնուհետեւ մամուլն այդ թեման քննարկել է Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ICTJ) եզրակացության համատեքստում, որը վերաբերում էր 1915-ի դեպքերի համապատասխանությանը Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիային (տե՛ս «Հայկական ժամանակ», նոյեմբերի 7, 2003), Հանձնաժողովի գործունեության ամփոփման համատեքստում (տե՛ս «Հայկական ժամանակ», սպրիլի 21, 2004) եւ TARC-ի համակարգող Դեփո Ֆիլիպսի հուշագրության մասին հրապարակումում (տե՛ս «Ազգ», փետրվարի 9 եւ 11, 2005):

ՀԱՅ-ԹՐԻՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Հայ-թուրքական գործարար զարգացման խորհրդի գործունեությունը լուսաբանվել է, երբ դրան վերաբերող որեւէ նորություն է եղել: Այն մեծ ուշադրության է արժանացել իր հիմնադրման առաջին տարիներին: Հայկական մամուլը նույնիսկ հրապարակել է Խորհրդի թուրքական համանախագահ Քասն Սոյաքի հարցազրույցները, ելույթներն ասուլիսներում, որ նա ունեցել է հայկական կողմի համանախագահի հետ համատեղ: Վերջին տարիների ընթացքում մամուլն ավելի շատ լրատվական բնույթի ռեպորտաժներ է հրապարակել (տե՛ս, օրինակ, «Հայաստանի Հանրապետություն», սեպտեմբերի 30, 2005, եւ «Ռեսպուբլիկա Արմենիա», սպրիլի 4, 2007):

ՔԱՉՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱՏՕ-ի հովանու ներքո Հայաստանում անցկացվող զորավարություններին Թուրքիայի ներկայացուցիչների մասնակցությունը մեծապես բացասական արձագանք է գտել հայկական մամուլում (ամենաբնորոշ օրինակն է «Ասկյարները՝ Հայաստանում» հոդվածը, «Գոլոս Արմենիի», նոյեմբերի 7, 2003):

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱՔԱՆՈՒՄԸ

Ստորև բերվում են հոդվածներ, որոնցում լուսաբանվել են համատեղ քաղաքացիական նախաձեռնությունները տարբեր ոլորտներում:

Քաղաքականություն, պատմություն, խաղաղասիրական նախաձեռնություններ

«Կարսի պայմանագրի վերանայման յուրաքանչյուր նախաձեռնություն պետք է հիմնավորված լինի» («Ազգ», մարտի 21, 2004)՝ մտավորականների ֆորումի մասին, որը հրավիրել էր Հայաստանի գրողների միությունը, եւ որը վերաբերում էր 1921-ի մարտի 16-ի Ռուս-թուրքական պայմանագրին եւ հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրին:

«Կովկասյան հաշտության կոնֆերանս» Անկարայում («Ազգ», մարտի 29 եւ 31, 2005)՝ ռեպորտաժ Թուրքիայում անցկացված՝ Երեւանի, Գյումրիի, Թբիլիսիի եւ Բաքվի Ռոտարի ակումբների խաղաղասիրական կոնֆերանսի մասին:

Հայկական մամուլը լայն լուսաբանման արժանացրեց հայկական պատվիրակության այցը Թուրքիա՝ Վանա լճի Աղթամար կղզում վերանորոգված Սուրբ Խաչ եկեղեցու բացման արարողության առթիվ: («Ռեպուբլիկա Արմենիա», մարտի 23 եւ 30, 2007):

Եվրոպական ինտեգրում

«Թուրքիան զգուշանում է Ադրբեջանից» («Ռեպուբլիկա Արմենիա», նոյեմբերի 23, 2007)՝ Գլոբալացման եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կազմակերպած «Հայաստանը եւ Թուրքիան եվրոպական ինտեգրման գործընթացում» կոնֆերանսի մասին, որին մասնակցում էին թուրքական մամուլի եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (մասնավորապես՝ «Թուրքական կայունության նախաձեռնություն» հրատարակության խմբագիր Նիզար Գյոքսելը):

Տնտեսություն և բիզնես

«**Հայ-թուրքական սահմանը շուտով կբացվի՞**» («Նովոյե վրեմյա», նոյեմբերի 7, 2003)՝ Հայաստանի և Թուրքիայի բեռնափաղորդների ընկերակցությունների միջև նամակագրության մասին:

«**Սահմանի բացում. իսկ հետո՞**» («Ռեսպուբլիկա Արմենիա», հուլիսի 15, 2005)՝ ռեպորտաժ «Հայ-թուրքական սահմանի բացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար» հետազոտության շնորհանդեսի մասին: Այն իրականացրել էր Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերով հայ-եվրոպական խորհրդատվական կենտրոնը (AEPLAC)՝ Հայաստանի կառավարության պատվերով: Ուսումնասիրության կենտրոնում են սահմանի բացման կարճաժամկետ (մինչև 1 տարի) և միջնաժամկետ (մինչև 5 տարի) հետևանքները: Հետազոտության որոշ եզրակացություններ, ըստ որոնց սահմանի բացումը դրական տնտեսական ազդեցություն կունենա Հայաստանի վրա, մեջբերվել են «Հայկական ժամանակ» օրաթերթում (հուլիսի 14, 2005) «Օրվա թիվը» խորագրի ներքո:

«Կովկասյան գործարար զարգացման ցանց» երկարաժամկետ ծրագիրը նախաձեռնել է Մեծ Բրիտանիայում հիմնված «Միջազգային ահազանգ» (International Alert) կազմակերպությունը: Ծրագիրն իրականացվում է Հայաստանում, Ադրբեյջանում, Վրաստանում, Թուրքիայում, Աբխազիայում, Լեռնային Ղարաբաղում, Հարավային Օսեթիայում և լուսաբանվել է, մասնավորապես, «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում («Գործարար և խաղաղասիրական նախաձեռնություններ»՝ հոկտեմբերի 27, 2006, և «Քաղաքական իրողությունները զիջում են կյանքին»՝ ապրիլի 4, 2007): Վերջին հոդվածը վերաբերում էր մարտի 22-25-ը Կարսում կայացած՝ հայ և թուրք գործարարների ֆորումին: Այն կազմակերպել էին Հայ-թուրքական գործարար զարգացման խորհուրդը (TABDC) և Հակամարտությունների կարգավորման ոչ ավանդական եղանակների կովկասյան կենտրոնը՝ «Բիզնեսի և զարգացման կովկասյան ցանց» ծրագրի շրջանակներում:

«**Խաղաղով նույն դաշտում**» («Հայաստանի Հանրապետություն», հունվարի 16, 2007)՝ «Հայ-թուրքական սահմանի բացման տնտեսական և սոցիալական հետևանքները Հայաստանի համար» կոնֆերանսի մասին, որը կազմակերպել էր Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբը (AIPRG)՝ USAID-ի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Հայաստանում բրիտանական դեսպանության ֆինանսական աջակցությամբ: Հոդվածը պատմում է նաև Հայաստանի և Թուրքիայի միջև քաղաքացիական երկխոսության այլ փորձերի մասին, խոսում է նույնպիսի մի կոնֆերանս Թուրքիայում անցկացնելու մտադրության մասին:

ՄՇԱԿՈՒՅԹ

«**Երկխոսությունը հնարավոր է**» («Ռեսպուբլիկա Արմենիա», դեկտեմբերի 12, 2005)՝ հարցազրույց հայ-թուրքական «Կանանց ամսագրի» հայկական համախմբագիր Նարինե Միրզոյանի հետ՝ առաջին համարի հրատարակման կապակցությամբ:

«**Հայկական «Նավը» նվաճեց Թուրքիան**» («Ռեսպուբլիկա Արմենիա», սեպտեմբերի 27, 2006)՝ հարցազրույց Արտո Թունջբոյաջյանի հետ՝ նրա ֆոլք-ջազ խմբի համերգների մասին:

Երկկողմ հարաբերությունների խթանում. իրազեկությունն աճում է

«**Շփվե՞նք դրացիաբար**» («Ռեսպուբլիկա Արմենիա», սեպտեմբերի 5, 2007)՝ ռեպորտաժ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի մասին, որը Հայաստանի և Թուրքիայի հասարակությունների միջև կառուցողական երկխոսություն խթանելու նպատակով ֆինանսական միջոցներ էր հատկացնում 6 կազմակերպությունների՝ «Կոմիտաս» պետական լրատվական քառյակին, «Երիտասարդական ակադեմիա» ՀԿ-ին, Երեւանի մամուլի ակումբին, «Ազգ» օրաթերթին, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամին և «Պատկեր» ՄՊԸ-ին:

«**Հայ-թուրքական «Մերհարաբե**» (ԵՄԱ տեղեկագիր, հոկտեմբերի 20-26, 2006)՝ հայ-թուրքական «Մերհարաբե» լուսանկարչական ցուցահանդեսի մասին, որն իրականացվել է «ՊատկերՖոտո»-ի և «Նար»-ի համատեղ ծրագրով՝ Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի հետ համագործակցությամբ, Հայնրիխ Բյոլ հիմնադրամի և թուրքական «Անադոլու Բուլթուր» կազմակերպության աջակցությամբ:

Երեւանի մամուլի ակումբը վերջին տարիների ընթացքում մի շարք ծրագրեր է իրականացրել, որոնք մանրամասնորեն նկարագրված են կազմակերպության կայքերում՝ www.ypc.am, www.mediadialogue.org, ինչպես նաև հետևյալ ծրագրերում. «Լարաբադի հարցը և հայ-թուրքական հարաբերությունները Հայաստանի քաղաքական գործիչների նախընտրական ելույթներում» (2007, ԵՄԱ, Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամի աջակցությամբ), «MediaDialogue կայքը՝ որպես տարածաշրջանային տեղեկատվական հանգույց» և «MediaDialogue կայքի զարգացումը՝ արդիական պահանջները բավարարելու համար» (2005-2006, ԵՄԱ, ԲՀԻ-ի մամուլի ցանցային ծրագրի աջակցությամբ), «Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա. Լրագրողական նախաձեռնություն 2002» և դրա զարգացումը (2002-2004, ծրագիրն իրականացրել են ԵՄԱ-ն, Ադրբեջանի «Yeni Nesil» լրագրողների միությունը և Թուրքիայի դիվանագիտական լրագրողների ընկերակցությունը՝ ԲՀԻ-ի մամուլի ցանցային ծրագրի աջակցությամբ), «Հայաստանի և Թուրքիայի լրագրողների փոխադարձ այցեր» (2002, իրականացրել են ԵՄԱ-ն և Թուրքիայի դիվանագիտական լրագրողների ընկերակցությունը՝ Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի Գլոբալ խաղաղության կենտրոնի աջակցությամբ):

Վերոհիշյալ ծրագրերի մի մասը լուսաբանվել է նաև մի շարք տեղական լրատվամիջոցներում (օրինակ՝ «Առավոտ», մայիսի 9 և 10, սեպտեմբերի 26, 2002):

ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Թուրքական մամուլի լուսաբանման հետազոտությունն ընդգրկում է 2002-2007 թթ. ժամանակահատվածը: Դրանում օգտագործվել են թուրքական մամուլի ինտերնետային արխիվները և 2002-ից ի վեր Երեսանի մամուլի ակումբի նախաձեռնությամբ գործող MediaDilaogue կայքի արխիվները: Կայքի գործածությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2002-2007 թթ. ընթացքում կայքն ամեն շաբաթ թարմացվել է թուրքական մամուլի հոդվածներով, որոնք վերաբերել են հայ-թուրքական հարաբերություններին:

Հետազոտված հրապարակումները տեղ են գտել հետևյալ պարբերականներում.

- «Թըրքիշ դեյլի նյուզ» (Turkish Daily News)
- «Հյուրիեթ» (Hurriyet)
- «Միլլիեթ» (Milliet)
- «Աքսամ» (Aksam)
- «Չաման» (Zaman)
- «Ռադիկալ» (Radikal)
- «Նյու Անատոլյան» (The New Anatolian)

Այստեղ պետք է նշել, որ իր ուշադրության կենտրոնում պահելով Հայաստանը և հայերին վերաբերող թեմաները՝ թուրքական մամուլի լուսաբանման դաշտն ինքնին այնքան էլ լայն չէ, և այն շատ փոքր ուշադրություն է դարձնում ժողովրդական դիվանագիտության առանձնահատուկ նախաձեռնություններին:

Այս նախաձեռնությունների նկատմամբ ուշադրության մեծ մասը հատկացվել է երկու կառույցների՝ Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովին և Հայ-թուրքական գործարար զարգացման խորհրդին: Այդ պատճառով ուսումնասիրությունը այս երկու նախաձեռնություններին առանձին թեմաներով է անդրադառնում: Պետք է նշել նաև, որ այս երկու կառույցները հիմնականում կան հիշատակվում են հայ-թուրքական հարաբերությունների ավելի լայն համատեքստում, կան դրանց ներկայացուցիչներին թուրքական մամուլը հաճախ դիմում է երկու երկրների հարաբերությունների տարաբնույթ զարգացումների հետ կապված մեկնաբանությունների և կարծիքների խնդրանքով:

ՀԱՅ-ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ՀԱՇՏԵՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Այս նախաձեռնությունը, թերեւս, ամենաակտիվն է լուսաբանվել թուրքական մամուլում: Հրապարակումների զգալի մասը բաժին է ընկել 2001-2002 թթ.: Թեև հրապար-

րակումներից շատերը վերաբերում էին հենց Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովին, հաճախ այն մեջբերվում էր նաև այլ, տարբեր թեմաներում, որոնք առնչվում էին հայոց ցեղասպանությանը: Թուրքական մամուլը հիմնականում ձախողում էր համարում Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը և ավստասանք հայտնում այդ առթիվ: («Շատ ավելի հեշտ կլիներ երկու ազգերին հաշտեցնել, եթե հաղթահարվեր Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի ձախողումը, և «ցեղասպանության» հարցը վերջնականապես լուծվեր»,- «Ռադիկալ»-ի 2002 թ.-ի մայիսի 19-ի համարում գրում է Գունդուզ Աքթանը) TARC-ի գործունեության մասին հրապարակումներից կարելի է մեջբերել հետևյալները. «Հայերի հետ հաշտություն որոնելիս»՝ Մեմիհ Իդիզի հոդվածը «Աքշամ»-ում (հունվարի 15, 2003), որը հանձնաժողովի ձախողում է դիտարկում. «Հանձնաժողովը, որը հենց առաջին օրից գրոհի ենթարկեցին դաշնակցականները, ի վերջո չկարողացավ արդյունավետ լինել: Եթե TARC-ի հանդիպումների մասին տեղեկություն է հայտնվում, այդ ջանքերն ավելի նման են ցայտող շիթերի»:

Հանգամանայից ուշադրության է արժանացել Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱԱՄԿ՝ ICTJ) զեկույցը, որը թողարկվել է TARC-ի պատվերով և շատ բացասաբար է ընդունվել հանձնաժողովի թուրքական անդամների կողմից (տե՛ս «Թուրքական տեսակետ՝ հայկական միջադեպերի վերաբերմամբ, Ցեղասպանության կոնվենցիայի կիրարկելիության և ԱԱՄԿ զեկույցի մասին», Գունդուզ Աքթանի հոդվածը «Turkish Daily News»-ում, փետրվարի 18, 2003):

Մինչ TARC-ի մասին հրապարակումների մեծ մասը թուրքական մամուլում հայտնվել է 2001-2002 թթ., ավելի ուշ նույնպես եղել են անդրադարձեր հանձնաժողովին՝ հայ-թուրքական հաշտեցման ավելի լայն համատեքստում (տե՛ս «Բարեկամներ և ակտյաններ, թուրքեր և հայեր», Յուսուֆ Սոլյեմեզի հոդվածը «Turkish Daily News»-ում, ապրիլի 23, 2006):

ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայ-թուրքական գործարար զարգացման խորհուրդը (TABDC) հիմնադրվել է 1997-ին՝ Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրային հարաբերությունները խթանելու նպատակով և ղեկավարվել է երկու երկրներում այս կազմակերպության համանախագահների կողմից: Կազմակերպությունը 2003-ի մարտին գրասենյակ է բացել Բրյուսելում և դարձել է Եվրոպական միության ոչ կառավարական կազմակերպություն: «Ջիհան» լրատվական գործակալության տեղեկություններով, որ հրապարակվել են «Turkish Daily News»-ում, նշվել է, որ կազմակերպությունը միակ հասարակական կազմակերպությունն է եղել, որ ստորագրել է Եվրոպական հանձնաժողովի՝ Թուրքիային վերաբերող առաջընթացի զեկույցը: TABDC-ի թուրքական համանախագահին մեջբերել են նաև մի շարք այլ նյութերում՝ նրան հղում անելով նաև որպես հայ-թուրքական մերձեցման և համատեղ գործարար նախաձեռնությունների գծով փորձագետ (տե՛ս «Մի հայ-թուրք-ամերիկյան բարեկամ», Յուսուֆ Քանլիի հոդվածը «Turkish Daily News»-ում, հոկտեմբերի 9, 2005):

Տնտեսություն/Քնական միջավայր

Ընդհանուր առմամբ, երկու երկրների միջև տնտեսական շփումները քիչ են լուսաբանվել թուրքական մամուլում: Ամենաբարձր մակարդակի՝ միջպետական առևտրի մասին մամուլի անդրադարձը եղել է Սեծովյան տնտեսական համագործակցության համատեքստում՝ այդ կազմակերպությունում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Կարեն Միրզոյանին մեջբերելով: («Հայաստանի նպատակը տարածաշրջանային համագործակցությունն է», «Turkish Daily News», փետրվարի 24, 2007): Թուրքական մամուլը լուսաբանել է նաև Հայաստանի եւ Թուրքիայի առաջատար գործարարների հանդիպումը, որը կազմակերպել էր Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խումբը (AIPRG): Այդ առիթով մեջբերվել են TABDC-ի երկու ղեկավարների՝ Քասան Սոյաքի եւ Արսեն Ղազարյանի խոսքերը: Ըստ «Turkish Daily News»-ի 2007-ի հունվարի 15-ի տեղեկատվության, մինչ գործարարները պաշտպանում են սահմանի բացման գաղափարը, Հայաստանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչն ավելի թերահավատ էր: «Հայաստանի արտգործնախարարի տեղակալ Արման Կիրակոսյանը ողջունեց կոնֆերանսի ոգին, բայց ասաց, որ երկու երկրների միջև վիճակը մոտ ապագայում չի փոխվի: Այսպիսի ամեն մի կոնֆերանս ազդում է հանրային կարծիքի վրա & բայց մենք պետք է հասկանանք, որ դա չի հասցնելու հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը: Ներկայում մենք հարաբերություններ չունենք», - ասել էր նա AFP-ին, ինչպես հաղորդում էր «Turkish Daily News»-ը: Պակաս պաշտոնական մակարդակով հնարավոր տնտեսական համագործակցության մեկ այլ քննարկում եղել էր «Ռոտարի» ակումբի շրջանակներում, 2005-ի մարտին:

Թուրքական մամուլը երբեմն-երբեմն անդրադառնում է նաև Հայաստանի հետ հնարավոր տնտեսական հարաբերությունների թեմաների՝ սահմանի բացման (մասնավորապես՝ սահմանամերձ համարվող Կարս քաղաքի հնարավոր զարգացման առումով) համատեքստում, տարածաշրջանում տարբեր ենթակառուցվածքային ծրագրերի (որոնք, որպես կանոն, շրջանցում են Հայաստանը), Հայկական ատոմակայանին առնչվող թեմաների եւ վերջինի բնապահպանական հավանական վտանգներին: Այսպես, «Սաբահ» թերթն իր 2003-ի հունվարի 19-ի համարում «Չեռնոբիլի սպառնալիքը՝ Կարսի մերձակայքում» վերնագրով հոդվածում վկայակոչում է Իտալիայի Ֆեռարա համալսարանի ակադեմիկոս, պրոֆեսոր Հայրեթին Քիլիջին, ըստ որի՝ Հայաստանի Մեծամորի ատոմակայանը սպառնալիք է Թուրքիայի համար: «Նա զգուշացրեց, որ հին տեխնոլոգիայով կառուցված ատոմակայանից որեւէ արտահոսք կարող է հարեւան երկրների միլիոնավոր մարդկանց մահվան պատճառ դառնալ: Քիլիջն ընդգծեց, որ ատոմակայանը պետք է փակել», - գրում է «Սաբահ»-ը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ

Քաղաքացիական հասարակության շփումների մասին լուսաբանումներն, ընդհանուր առմամբ, ինքնին հետետում էին այդ շփումների միտումներին և բավական անկանոն էին: Քաղաքացիական հասարակության շփումներին ամենավաղ անդրադարձերից մեկն արել է «Միլլիեթ» թերթը 2002-ի հուլիսի 4-ի համարում: Թերթի լրագրող Էջե Թեմելքուրանը գրում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի կազմակերպած «Քաղաքացիական մոտեցումներ հայ-թուրքական երկխոսությունում» երկօրյա հանդիպման մասին: «Հանդիպման մասնակիցներին շատ ավելի հետաքրքրում էր կյանքը, քան՝ մահը, և ավելի շատ՝ ապագան, քան՝ անցյալը», - գրում է լրագրողը:

Քաղաքացիական հասարակության վաղ շփումներից էին նաև հայ և թուրք լրագրողների փոխադարձ հետազոտական այցերը՝ Երեւանի մամուլի ակումբի նախագծի շրջանակներում, որին աջակցում էր Գլոբալ խաղաղության կենտրոնը (տե՛ս «Մանկական քայլերով Հայաստանի և Թուրքիայի լրագրողները մոտենում են իրար», հրատարակվել է «Turkish Probe»-ում, օգոստոսի 3, 2002)

Սեֆա Գալաթիյան տնտեսական համագործակցության և խաղաղության համար Հայ և թուրք կանանց հաղորդակցության խմբի հանդիպումը նույնպես լուսաբանվել է «Turkish Daily News»-ի 2002-ի դեկտեմբերի 15-ի համարում: Թերթը մեջբերել է հայկական կողմի համակարգող Հրանուշ Խառատյանի խոսքերը, որ խումբը պետք երկար և դժվարին ճանապարհ անցնի և որ իրենք ուզում են այդ գործընթացը սկսել համատեղ ծրագրերով:

Թուրքական մամուլը լուսաբանել է նաև թուրք մասնագետների տարբեր այցեր Հայաստան, ինչպես օրինակ՝ Թուրքական տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (TESEV) փաստահավաք խմբի այցը Երեւան: Միլվիա Տիրյակին այդ այցի մասին «Turkish Daily News»-ի 2008-ի դեկտեմբերի 18-ի համարում գրում է. «Ցավոք, հայ-թուրքական հարաբերությունների այս ուղղությունն ամենաքիչ քննարկված թեման էր, եթե առհասարակ քննարկվում էր, Հայաստանի քաղաքացիական հասարակության, մամուլի և նույնիսկ կառավարական շրջանակների ներկայացուցիչների հետ հանդիպումներում: Քննարկումների կենտրոնում գլխավորապես սահմանների, դարաբաղյան հակամարտության և 20-րդ դարասկզբի ողբերգական իրադարձությունների հետ կապված թեմաներն էին: Ոչ թեմաների բնական ընտրությունը, ոչ էլ դրանց իմաստային տարբերությունը՝ երկու կողմերի մասնակիցների համար անսպասելի չէին»:

Քաղաքացիական հասարակության շփումների վերաբերյալ թուրքական մամուլն առավել կանոնավոր լուսաբանում է Թուրքիայի հայկական համայնքի հետ կապված թեմաներ (տե՛ս, օրինակ, «Մենք դատապարտում ենք հալածանքների և ճնշումների մասին հայտարարությունները», Սեֆա Քափլանի նյութը «Հյուրիեթ»-ում, հոկտեմբերի 29, 2002):

Թուրքական մամուլը լուսաբանել է նաև հայկական թեմային առնչվող տարբեր ակադեմիական միջոցառումներ, ինչպես օրինակ՝ Բիլգի համալսարանում 2007-ի մարտին անցկացված «Օսմանյան հասարակությունում միասին ապրելու արվեստը», Մի-

ջազգային սոցիալական հետազոտությունների գիտաժողովը, Բիլգի համալսարանի կոնֆերանսը եւ այլն: Այսպես, հոկտեմբերի 13-ին «Turkish Daily News»-ը գրեց, որ ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի փոխանախազահ Վահիթ Էրդենը վրդովմունք է հայտնել, որ Երեւանում Վեհաժողովի կազմակերպած սեմինարին հրավիրվել է նաեւ Հայիլ Բերքթայր:

Հայ-թուրքական մերձեցման գործում ինչ-որ կերպ քաղաքացիական հասարակության ներգրավվածության հետ կապված՝ ավելի մոտ ժամանակներս թուրքական մամուլը լուսաբանեց Նոբելյան 53 մրցանակակիրների նամակը՝ հայ-թուրքական սահմանի բացման ուղերձով («Sabah», ապրիլի 12, 2007):

ՄՇԱԿՈՒՅԹ

Թուրքական մամուլում աչքի զարնող մի առանձնահատկություն է նկատվում՝ վերջին 1 տարվա ընթացքում բավական շատ են եղել անդրադարձերը Թուրքիայում Հայաստանին վերաբերվող մշակութային իրադարձություններին, ինչն ինքնին պայմանավորված է այդ իրադարձությունների ավելի մեծ թվով:

2002-ին մշակութային ամենաթեժ թեման, որ վերաբերում էր Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններին, Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմն էր: Այսպես, Մեհմեթ Բասուքուն մայիսի 23-ի «Ռադիկալ»-ում գրում է. «Արդյունքում Ատոմ Էգոյանը տառապում է նույն այն զգացումով, որ լավ ծանոթ է մեզ՝ թուրքերիս. սխալ հասկացված լինելու զգացումը, երբ շունչդ այրվում է ինքդ քո նկատմամբ զայրույթից, որ ի վիճակի չես արտահայտել զգացումներդ՝ ջախջախվածության դառը համով զայրույթից: Կինոնկարը, որ մեզ պատմում է մի ժամանակի մասին, որ շարունակվում է մինչեւ այսօր, առաջին անգամ ուժեղ քննադատության թիրախ դարձավ: Մինչդեռ ռեժիսորը մտածում էր այս արձագանքի մասին, երբ առաջին անգամ սկսեց ուսումնասիրել թեման, որ հսկայական անձնական նշանակություն ուներ: Յնցումը, որ պատեց Էգոյանին, երբ մեզ էր հանդիպում, նման էր փրկօղակի փնտրտուքի»:

Հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող մեկ այլ մշակութային իրադարձություն էլ, որ լուսաբանվեց թուրքական մամուլում, թուրք երգչուհի Սեզեն Աքսուի համերգն էր՝ 2002-ի օգոստոսի 30-ին, որտեղ նա կատարեց թուրքերեն, հունարեն, հայերեն եւ հրեերեն երգեր: «Ուստի անհրաժեշտ է Սեզենի համերգները կազմակերպել Ստամբուլում, եւ բոլոր՝ ներառյալ զինվորականները, պետք է ապահովենք այդ համերգի շուրջ առողջ քննարկման մթնոլորտ», - գրել է Մեհմեթ Ալի Բիրանը լ «Հյուրիեթ»-ի սեպտեմբերի 4-ի համարում:

2005-ի սեպտեմբերին Հայաստանի Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը Ստամբուլի Աթաթուրք մշակութային կենտրոնում ներկայացրեց «Գայանե» բալետը: Ինչպես Դեմիթ Ջադսուն է գրել «Turkish Daily News»-ում 2005-ի հունիսի 17-ին. «Բոլորս էլ գիտենք, որ աշխարհը հազվադեպ է սեւ ու սպիտակ լինում: Այդ գորշերն են, որ փորձարկում են մեր ստերեոտիպերն ու նախապաշարմունքները: Սակայն կիրակի երեկոյան ոչ մի գորշ երանգ չկար թուրքերի եւ հայերի հարաբերու-

թյուններում ընդունված տեսակետների, սեւ-սպիտակ կանխակալ կարծիքների փորձարկման մեջ: Ոչ, փորձարկումը Հայաստանի ազգային օպերայի եւ բալետի բեմական ձեւավորման եւ հանդերձների զարթոն, գլխասպտույտ, ցայտուն եւ կենսալի կարմիր, նարնջագույն, կապույտ եւ մանուշակագույն երանգներում էր: Եվ այն առկա էր բազմության հոտընկալ օվացիայում, Աթաթուրք մշակութային կենտրոնում, ուր հայերի ու թուրքերի այդ հավաքը զորեղ միասնական ուղերձ էր հղում. «Մենք հոգնել ենք ստատուս-քվոյից»:

Մշակութային լուսաբանման մասնակի ակտիվացում նկատվեց 2007-ին, երբ անցկացվեցին մի շարք համատեղ մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ հայկական ծագումով թուրքական լրագրող Հրանտ Դինքի հիշատակին, ով 2007-ի հունվարին սպանվել էր Ստամբուլում: Այսպես, 2007-ի մայիսին անցկացված՝ հայ եւ թուրք լուսանկարիչների «Մերհաբարեւ. Երեւան- Ստամբուլ» համատեղ ցուցահանդեսը լայնորեն լուսաբանվեց թուրքական մամուլում: Սեպտեմբերին մի խումբ թուրք արվեստագետներ այցելեցին Երեւան եւ գործնական դասընթաց անցկացրեցին հայ ուսանողներ հետ: «Անցյալի վերքերը կարող են հաղթահարվել միայն արվեստի եւ երկխոսության միջոցով,- ասում էին արվեստագետները՝ երկխոսության մասնակցելու կոչ անելով թուրքական եւ հայկական երիտասարդությանը»,- գրում է Վերջինիան Ջիֆլիոլուն «Turkish Daily News»-ում (սեպտեմբերի 29, 2007): Նույն հեղինակը լուսաբանել է նաեւ հայկական դուդուկի վիրտուոզ վարպետ Ջիվան Գասպարյանի համատեղ համերգը թուրքական սագահար եւ վոկալիստ Յավուզ Բինգյուլի հետ: Համերգը տեղի էր ունեցել Ստամբուլում՝ Խաղաղության միջազգային օրը (սեպտեմբերի 1, 2007), ինչպես նաեւ արվեստագետ Սարքիսի (Սարգիս Ջաբունյան, Ֆրանսիա) մասնակցությունը Ստամբուլի բիենալեին՝ «ի սեր համերաշխության»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեսագոտությունը ցույց տվեց, որ եւ հայկական, եւ թուրքական լրատվամիջոցները բավական անկանոն են լուսաբանում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ քաղաքացիական նախաձեռնությունները. ավելի շատ կենտրոնանում են իրադարձությունների վրա, քան քննարկում են ծրագրերը՝ դրանց ամբողջ ծավալով, եւ վերլուծում դրանց արդյունքները: Երկու երկրում էլ ամենաակտիվ լուսաբանված նախաձեռնությունները Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի եւ Հայ-թուրքական գործարար զարգացման խորհրդի գործունեությունն է:

Միաժամանակ պետք է նկատել, որ 2007-ի ընթացքում մշակութային նախաձեռնությունների լուսաբանման ակտիվացում է եղել, որը, մասնավորապես, տեսանելի էր թուրքական մամուլում:

Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ քաղաքացիական նախաձեռնությունների լուսաբանումը եւ Հայաստանում, եւ Թուրքիայում բավականաչափ հետետողական եւ ոլորտային առումով բազմազան չեն: Մամուլն արձագանքում է ավելի շատ երկու երկրների միջեւ պաշտոնական դիվանագիտությանը, առկա քաղաքա-

կան եւ պատմական հակասություններին, քան՝ քաղաքացիական հասարակությունների ջանքերին, որոնք գուցե բավարար չեն, բայց դրանց հրապարակայնացումը ծայրահեղ կարեւոր է երկու երկրների ժողովուրդների հարաբերությունների բարելավման համար:

ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐԻՔ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ
ՓՈԽԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ
ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ծովինար ՆԱԶԱՐՅԱՆ

Ներկայումս ազատ լրագրող է: Ավելի քան 5 տարի աշխատել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում՝ որպես քաղաքական թղթակից: Նախկինում աշխատել է տարբեր ՋԼՄ-ներում, այդ թվում՝ հեռուստատեսությունում, ներկայացնելով տարբեր թեմաներ՝ մշակույթից մինչև քաղաքականություն:

Ծովինար Նազարյանն ավարտել է Երեւանի պետական լսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

«ԴՈՒՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ՎԵՐԱՇԱՐԱԳՐԵԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

**Չնայած պատմության մութ էջերին,
հայ եւ թուրք լրագրողներն արդեն գիտեն, որ
«թուրքերը մարդակեր չեն, հայերն էլ դավաճան չեն»**

«Միանգամայն ճիշտ է, որ թուրքական մամուլը հիմնականում անդրադառնում է հայ-թուրքական հարաբերություններին, երբ ինչ-որ կարեւոր իրադարձություն կամ դրա ակնկալիք կա: Այլ փուլերում, երբ կարծես որեւէ կարեւոր բան տեղի չի ունենում, թուրքական մամուլն այդ հարաբերություններին շատ քիչ է անդրադառնում:

Վերջին 9 տարվա մեր հետազոտությունները համոզում են, որ հենց այդ ուղղությամբ է զարգանում Հայաստանի եւ հայ-թուրքական հարաբերությունների լուսաբանումը թուրքական մամուլում: Հայաստանում ավելի հետետղական են՝ հարցերին անդրադառնալու առումով, բայց հետաքրքրությունը նեղ ոլորտների է վերաբերում՝ ցեղասպանություն, սահմանի բացում, դիվանագիտական հարաբերությունների հաստատում», - ասում է Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը:

Խորը լուսաբանման նպատակային խրախուսում

Լրագրողական փոխանակման ծրագիրը, որի շնորհիվ տարիներ հետո նորից հայտնվեցի Ստամբուլում, նախաձեռնել էր հենց Երեւանի մամուլի ակումբը՝ Ֆրիդրիխ Նաումանի, Ֆրիդրիխ Էբերտի եւ Եվրասիա համագործակցություն հիմնադրամների աջակցությամբ: ԵՄԱ-ի գործընկերը Թուրքիայում հայտնի «ԱԲԻ մուլմենթ»-ն է. նա էր ընտրել Հայաստան այցելելու պատրաստ լրագրողներին: Երկու կողմն էլ պատրաստ էին ջանքեր ներդնել՝ լրագրողական փոխլուսաբանումն ավանդույթ դարձնելու համար:

- Մեր նպատակն էր շահագրգռել Հայաստանի եւ Թուրքիայի լրագրողներին եւ առաջատար լրատվամիջոցներին՝ ուշադրություն դարձնել հայ-թուրքական հարաբերությունների տարբեր ուղղություններին եւ, հնարավորության դեպքում, նաեւ համա-

պատասխան հետաքննական նյութեր պատրաստել՝ երկխոսության համատեքստում տարբեր նախաձեռնությունների արդյունավետության եւ հեռանկարների մասին, պատմում է Բորիս Նավասարդյանը:

Այս ծրագրով 4 հայաստանցի եւ 6 թուրքական լրագրողներ փոխայցելություններ են կատարել հարեան երկիր, լուսաբանել երկու երկրների կյանքի տարբեր ոլորտներում վերջին տարիներին համատեղ իրականացված ծրագրերը, ինչպես նաեւ երկու երկրների քաղաքականության, ժողովրդական դիվանագիտության, մշակույթի, տնտեսական եւ այլ հարցեր: Ի տարբերություն հետազոտող կազմակերպությունների, որոնք շատ չեն այս գործում, լրագրողներն իրենց հասարակությանն ավելի պարզ լեզվով են ներկայացրել հարեաններին: Պետք է նկատել, որ որոշ նյութերում արտահայտվել են նաեւ միմյանց մասին հասարակություններում առկա կարծրատիպերը:

Բորիս Նավասարդյանը նկատում է, որ ի տարբերություն առանցքային քաղաքական իրադարձությունների, հիմնական լրատվամիջոցների տեսադաշտից վրիպում են հարեան երկրի կյանքի ավելի խորը շերտերի լուսաբանումը, երկկողմ քաղաքացիական նախաձեռնությունները, որոնք պակաս ներդրում չունեն հայ-թուրքական երկխոսության մեջ: «Այդ լուսաբանման մի քիչ արհեստական ակտիվացում միշտ էլ պետք է լինի, եւ ո՛վ, եթե ոչ հասարակական կազմակերպությունները, մանավանդ, եթե աշխատում են լրագրողական ոլորտում, պետք է այդ նպատակային խրախուսումն ապահովեն՝ օգտագործելով նաեւ միջազգային կազմակերպությունների տրամադրած հնարավորությունները», - նկատում է Բորիս Նավասարդյանը:

«Չեմ ուզում մեղավոր զգալ պապիս փոխարեն»

Թուրքիայում մեզ հանդիպած լրագրողները, ինչպես եւ հայաստանցիները միաբերան պնդում էին, որ նման ծրագրերը շատ օգտակար են, գոհ էին իրենց ուղեորությունից, եւ չնայած նրանցից ոմանք դեմ էին առել այնպիսի իրողությունների եւ զգացողությունների, որոնք ընդունելն այնքան էլ հեշտ չէ, պատրաստ էին հնարավորության դեպքում նորից այցելել Հայաստան:

«Ես չեմ ուզում մեղավոր զգալ, երբ գալիս եմ Հայաստան: Ես ի՞նչ կապ ունեմ պապս ինչ է արել: Գուցե նա սրիկա է եղել, է՛ս ինչ կապ ունեմ: Բոլորն ինձ այնպես են նայում, կարծես՝ ահա՛ սա այն թուրքի թռն է, որ... Ես չեմ ուզում, որ ինձ այդպես նայեն», - Գալաթա կամրջի սբանչելի տեսարանի առջեւ մի փոքրիկ բացօթյա թեյարանում այսպես սկսեց մեր զրույցը «Աքշամ» թերթի թղթակից Նազեհան Ալջըն: Մեր հարցին ի պատասխան նա ասաց, որ իրեն նման բան չեն ասել, շատ բարի են եղել իր հանդեպ, բայց նա դա զգացել է իրեն ուղղված հայացքներից: - Սահմանի երկու կողմում չգիտեն, որ թուրքերը մարդակեր չեն, հայերն էլ դավաճան չեն,- ասում էր Նազեհանը:

- Հայաստանը փոքր է, իր մեջ ներփակված, եւ ազգայնականությունն այնտեղ աճում է,- այդպիսի տպավորություն էր ստացել Նազեհանը: «Ես հասկանում եմ այդ ազգայնականությունը. դա գուցե գոհ լինելու զգացումից է: Բայց եթե մենք ուզում ենք հարաբերություններ կարգավորել, պետք է ազատվենք այդ զգացումից: Մեզ՝ թուրքերիս համար էլ հաճելի չէ մեղավոր լինելու զգացումը, երբ հանդիպում ենք հայերի:

Կարծում եմ, հայերն էլ չեն կարողանում ազատվել մեր մասին այն մտայնությունից, թե՛ «այ՛ սրանք են անցյալում այդ բանն անողները»: Երկու կողմից էլ վերաբերմունքը սխալ է: Ես ոչ մեկին չեմ մեղադրում: Մենք բոլորս միասին ենք մեծացել, բայց իրար չենք ճանաչում»:

«Հյուրիեթ»-ի թղթակից Վերջիհան Զիֆլիօղլուի համոզմամբ՝ թշնամանքի հիմնական պատճառն իրար չճանաչելն է: «Մարդիկ չգիտեն անցյալում ինչ է եղել: Պետք չէ նրանց քննադատել, որովհետև նրանք ամեն ինչ չէ, որ գիտեն»: Վերջիհան Զիֆլիօղլուն պատմում է, թե ինքն ինչպես է շահել Թուրքիայի լրագրողների ասոցիացիայի մրցանակը՝ Փարաջանովի մասին իր հրապարակումների համար: Նույն կազմակերպության մյուս գլխավոր մրցանակը տրվել է նույնպես «հայկական թեմայի» համշենցի մի թուրք լրագրողի՝ համշենահայերի մասին նյութի հրապարակմանը:

- Մինչդեռ նախկինում,- ասում է Վերջիհանը,- Հայաստանի եւ հայերի մասին դրական նյութեր դժվար էր գտնել թուրքական մամուլում. «Հայերը հեռավոր կղզու նման մի բան էին թուրք լրագրողների համար, եւ նյութերը երբեմն նույնիսկ վիրավորական կարող էին դառնալ: Օրինակ, եթե մեկը մյուսին սպանում էր, նշում էին, որ սպանողը հայկական ծագում ունի: Այսինքն, բացասական իմաստով՝ հայ, հրեա կամ հույն ինքնությունն ավելի էր կարեւորվում, քան ինքը՝ դեպքը, որ ամեն երկրում էլ կարող էր պատահել»:

Խոսքը ոչ միայն եւ ոչ այնքան Հայաստանի մասին է, որքան ընդհանրապես հայերի, ովքեր Թուրքիային միշտ հիշեցնում են պատմական անցյալը: Սակայն վերջերս թուրքական մամուլում դրական միտումներ են նկատվում: Մանավանդ Հրանտ Դինքի սպանությունից հետո թուրքական թերթերն ավելի շատ են անդրադառնում հայկական թեմաների՝ դեպի ապագա ուղղված հայացքով: Գործընկերս, որ Հայաստան գնալուց առաջ մտահոգվել էր՝ «ինձ այնտեղ չե՞ն վնասի», վերադարձել էր ամենադրական տպավորություններով:

Թուրքական մամուլի հայ լրագրողը

Վերջիհանն ազգությամբ հայ է, եւ լեզվի իմացությունը նրան շատ է օգնում: Առաջին անգամ Հայաստան է եկել հենց «Հյուրիեթ»-ի հանձնարարությամբ: Վերջին երկուսուկես տարում հիմնականում գրում է հայերի, հատկապես՝ Թուրքիայի հայերի մասին. «Մարդիկ զարմանում էին եւ ինձ անընդհատ հարցնում՝ իսկապե՞ս Թուրքիայում նման բաներ եղել են, իսկապե՞ս թուրքական թատրոնը հայերն են հիմնել»: Վերջիհանն ասում է, որ դա գրեթե հայտնություն էր թուրքական մամուլի համար:

Մեզ հետ զրույցում Վերջիհանն ասում է, որ իր հայկական ինքնության հետ կապված դժվարություններ չի ունեցել 11 տարվա կարիերայի ընթացքում: Իր մեկ այլ մրցանակ, որը դարձյալ հայկական թեմայի համար շնորհել էր Շվեդական ակադեմիայի Աննա Լինդ հիմնադրամը, Աթենք էր հասցրել նաեւ Թուրքիայի մշակույթի նախարարին եւ մրցանակաբաշխության քննարկման գլխավոր թեման էր դարձրել հայերին ու Հայաստանը:

«Ես հավատացի, որ պետք է դեպի ապագա նայել: Այո, մեր գլխով շատ վատ բաներ են անցել, բայց ես կարծում եմ, որ ապագայի համար, մեր ապագա սերունդների համար պետք է լավ հիմքեր թողնել», - ասում է Վերջիհան Զիֆլիօղլուն:

Ընթերցողները պետք է իմանան

«Ջումհյուրիէթ»-ի փորձառու լրագրող Լեյլա Թավչանօղլուն թուրքական մամուլի առաջին ներկայացուցիչներից էր, որ այցելեց Հայաստան՝ ընկերակցելով Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին: Դրանից հետո նրան բազմիցս հրավիրել են Հայաստան, այդ թվում՝ ԵՄԱ-ն: Լեյլան ընդգրկվել է նաև կանանց հայ-թուրքական մի խմբում եւ հասարակական նախաձեռնությունների շրջանակում բազմիցս այցելել Հայաստան:

«Նման նախաձեռնությունները պետք է խրախուսվեն: Ուզում եմ ասել, որ ժողովրդական դիվանագիտությունը շատ օգտակար է. ծանոթանալ իրար հետ, տեսնել, որ ո՛չ հայերը, ո՛չ թուրքերը բարբարոսներ չեն, մեզ նման սովորական մարդիկ են: Ճանաչելը, բարեկամանալը եւ ընկերություն անելը շատ կարեւոր բաներ են: Լրագրողները քաղաքացիական հասարակության մի մասն են, եւ այս կապերը պետք է ավելի ու ավելի խրախուսվեն»:

Մեզ հետ զրույցում Լեյլան հավատացրեց, որ մինչեւ Հայաստան ոտք դնելն էլ ոչ մի նախապաշարմունք չունեի՝ գալիս էր ծանոթանալու: «Ինձ երբեք չեն մերժել: Ես գնում եմ Երեւան, ներկայանում եմ, առաջարկում եմ հարցազրույց տալ, եւ նրանք համաձայնում են: Այդպես հարցազրույց եմ վերցրել Արման Կիրակոսյանից. մեկ ժամում, մի մեծ կոնֆերանսի ժամանակ: Նույնը՝ Օսկանյանի հետ: Նա ինձ հրավիրեց Երեւան՝ հարցազրույցի համար: Շատ լավ դիվանագետ է: Երեւանում երբեք դժվարություն չեմ ունեցել: Երբեք»:

Լեյլա Թավչանօղլուն ասում է, որ իրեն գնահատում են որպես անկողմնակալ լրագրողի, իրեն վստահում են, եւ «դա փոխադարձ է»: Դրա շնորհիվ Լեյլան ինֆորմացիայի իր աղբյուրներն ունի Հայաստանում եւ երբ ինչ-որ լուր առաջին ձեռքից չի ստանում, միշտ կարողանում է ստուգել հայկական լրատվամիջոցներից ստացված տեղեկությունները:

Հայաստանում պատրաստած նյութերից զրուցակիցս ամենաշատը հավանում է նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի եւ երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի հետ հարցազրույցները. «Ինձ դուր եկան նրանց իրատեսական պատասխանները: Ես նախապես բավական կողմնակալ կարծիք ունեի երջանկահիշատակ կաթողիկոսի մասին: Նա հիանալի ջենթլմեն էր, եւ նրան շատ հավանեցի: Շատ առաջադեմ էր: Թե՛ նրա, թե՛ Օսկանյանի պատասխանները շատ կառուցողական էին հայ-թուրքական հարաբերությունների համար: Հիմնական ուղերձն այն էր, որ հարաբերությունները պետք է կարգավորվեն առանց որեւէ նախապայմանի: Այստեղ դա շատ լավ արձագանք ունեցավ»:

Լեյլան հաստատեց Ստամբուլում ստացած մեր տպավորությունը, որ «հայկական թեման» հիմա «մոդայիկ» է թուրքական մամուլում: Վերջինիս դիտարկմամբ՝ «Դա սկսվեց Արդարություն եւ զարգացում կուսակցության (AKP) իշխանության գալուց հետո, երբ նրանք հանդես եկան հայկական սահմանը բացելու գաղափարով: Խրախուսվում էին թուրք լրագրողների այցելությունները Հայաստան, տարբեր հասարակական կազմակերպություններ հրավերներ էին ուղարկում: Բորիս Նավասարդյանը լրագրողական հանդիպումներ կազմակերպելու նախաձեռնողներից մեկն էր եւ հիմա էլ շարունակում է»:

Յուրօրինակ էր Թավշանօղյուի պատասխանը հարցիս. «Ո՞րն է այն ուղերձը, որ ընթերցողներն ուզում են լսել ձեզնից, կամ որո՞նք են այն ցավոտ հարցերը, որոնց մասին չեն ուզում լսել»: «Բայց ստիպված են,- ասաց Թավշանօղյուն,- այո, ստիպված են: Փաստեր կան, ես չեմ կարող դրանք սրբել պատմությունից, այնպես որ, ես պետք է գրեմ դրանց մասին»:

Խոսքի ազատություն՝ առանց սահմանների

Թուրքիայում խոսքի ազատության լուրջ սահմանափակում համարվող 301-րդ հոդվածը քրեական օրենսգրքում վերածեակերպվել է, բայց դրանից հետո էլ այդ հոդվածով հետապնդվող մարդիկ կան: Հրանտ Դինքի եւ նրա ընտանիքի փաստաբան Ֆեթիյե Չեթինը, ում հանդիպեցինք Դինքին նվիրված մի ֆիլմի շնորհանդեսում, այսպես գնահատեց օրենքը. «Փոփոխությունը սկզբունքորեն մեծ չէ, բայց փաստը, որ այն փոխվել է, դրական ազդեցություն է ունեցել ընթացիկ գործերի վրա»:

Շնորհանդեսը տեղի էր ունենում Ստամբուլի առաջատար՝ Բիզի համալսարանում: Ֆիլմի հեղինակը Գերմանիայում վերաբնակված թուրք լրագրող, ռեժիսոր Օսման Օքքանն էր: Մինչ այդ նա դեռեւս միայն Գերմանիայում էր արել ֆիլմի շնորհանդեսը (առաջինը՝ Նյուրեմբերգում) եւ մտադիր էր այն բերել նաեւ Երեւան: Այդ լուրն ինքս հայտնեցի Ջիվան Գասպարյանին՝ ֆիլմի երաժշտության հեղինակին, երբ Երեւանում գտնվող թուրք գործընկերոջս ուղեկցում էի նրա հետ հարցազրույցի:

Ֆիլմը հայերի մասին է՝ Թուրքիայում ապրած եւ դեռեւս ապրող հայերի մասին: Դինքը պետք է լիներ ֆիլմի խորհրդատուն, բայց սպանությունից հետո դարձավ այն կերպարը, ում միջոցով Օսման Օքքանը փորձում էր հասցնել իր ասելիքը. «Հրանտը փորձում էր բացատրել մարդկանց, որ շատ օգտակար է իմանալ սեփական պատմությունը, խոսել միմյանց հետ: Թուրքերը պետք է հասկանան, թե հայերն ինչպես են ապրում, ինչ խնդիրներ ունեն, ինչ են զգում: Սա երկար ճանապարհ է, բայց Թուրքիան պետք է քայլեր ձեռնարկի այդ ուղղությամբ, եւ, հուսով եմք, հաջողության կհասնի: Կարծում եմ, որ Հրանտը շատ բան փոխեց, ինչպես որ նրա մահը փոխեց շատ բան: Հինգ տարի առաջ դուք չէիք կարող նման ֆիլմ տեսնել Ստամբուլում, հիմա՝ կարող եք»:

«ՃԱԿԱՏՍ ԲԱՑ՝ ՀԱՅԵՐԵՆ ԷԼ ԵՄ ԽՈՍՈՒՄ, ԹՈՒՐԲԵՐԵՆ ԷԼ»,-

ասում է Շիշլիի փոխքաղաքապետ Վազգեն Պարընը

Վազգեն Պարընը (թուրքերեն՝ Vasken Barin) ներկայիս Թուրքիայում ամենաբարձր պաշտոն զբաղեցնող հայն է. արդեն տասը տարուց ավելի նա Շիշլիի փոխքաղաքապետն է: Դրանից ավելի բարձր պաշտոն հայերը զբաղեցրել են մեկ էլ 1950-ականներին, երբ Շելեխյանն ընտրվել էր Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր:

Շիշլին Ստամբուլի թաղամասերից մեկն է՝ 450 հազար բնակչությամբ, որից մոտ 30 հազարը հնարման հայեր են: Կան նաև նորեկ հայաստանցիներ, բայց նրանց թիվը հայտնի չէ: Հնարման ասելով՝ մենք նկատի ունենք ոչ միայն բնիկ պոլսեցիներին, այլ նաև ուրիշ թուրքահայերի, որոնք վերջին 40-50 տարում են Ստամբուլ եկել Անատոլիայի խորքերից: Ինքը՝ Պարրեն էլ Վանից 100 կմ հարավ գտնվող Շրնաքից է՝ քրդաբնակ շրջաններից: Մինչև 13 տարեկանը հայերեն բառ չէր լսել. հայրը քրդախոս էր, հայերեն գիր չէր տեսել, մինչև տեղափոխվեցին Ստամբուլ, եւ ուսում առավ հայկական դպրավանդում: Մեր գրույցի վերջում նա այնտեղ սովորած՝ արեւմտահայ պոեզիայի չքնաղ նմուշներ արտասանեց:

Անցած կիրակի Թուրքիայում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում այս էլ երրորդ անգամ Շիշլիի քաղաքապետ ընտրվեց Մուսթաֆա Սարրգյուլը՝ հավաքելով քվեների 54,65%-ը: Նրա հաղթանակում մեծ էր իր տեղակալի՝ Վազգեն Պարրենի դերը: Վերջինս ինքն էլ հպարտությամբ նշում է, որ առաջին ընտրություններում իրենք՝ ի դեմս Սարրգյուլի, հավաքել են 42%, իսկ երկրորդում՝ 68,6%:

- Մենք որեւէ խտրականություն չենք դնում հայերի եւ մահմեդականների միջև: Մեր քաղաքապետարանը Մուսթաֆա Սարրգյուլի ղեկավարության օրոք շատ օգտակար է եղել հայ համայնքին: Մեր ծառայությունն ենք մատուցում ինչպես ամբողջ Շիշլիին, այնպես էլ, նույն հոգածությամբ, դեռ ավելին՝ հայկական համայնքին,- ասում է Վազգեն Պարրենը: Նա թվարկում է հայկական հաստատություններ՝ եկեղեցի, դպրոց, մշակութային համույթներ, հիվանդանոց, գերեզմանոց, որոնց նկատմամբ հոգածություն են ստանձնել, եւ ավելացնում. «Բայց ծառայություն ենք տանում նաև մզկիթների, տեղական մյուս դպրոցների եւ միությունների համար: Քանի որ որեւէ խտրականություն չեմ դնում մարդկանց միջև, ճակատս բաց՝ հայերեն էլ եմ խոսում, թուրքերեն էլ»:

Հայկական համայնքի շրջանակներում տեղի ունեցող բոլոր միջոցառումներում Պարրենը խոսում է միայն հայերեն, եւ դրան ըմբռնումով են վերաբերվում նաև ներկա թուրք պաշտոնյաները: Մեր հարցազրույցը նույնպես հայերեն էր: Այն տեղի էր ունենում Շիշլիում՝ դերձակ Մկրտիչ Օզջյանի արհեստանոցում, որը գրուցակիցս նախընտրեց բոլոր անաղմուկ տեղերից:

- Մինչև վերջին 10 տարին հայերը չէին զբաղվում պետական գործերով եւ սովորում էին մնում, բայց վերջին տարիներին Թուրքիայում մտայնությունը փոխվել է: Եվրամիության հետ մշակված կապերի արդյունքում, անշուշտ, որոշ բարելավում կա Թուրքիայի օրենքներում եւ մտածողության մեջ,- ասում է Վազգեն Պարրենը:

«Հանգամանքների բերմամբ, 10 տարի առաջ եւ նշանակվեցի փոխքաղաքապետ, 5 տարի հետո՝ երկրորդ անգամ ընտրվեցի բոլոր շիշլիցիների կողմից՝ հայ, մահմեդական, հրեա եւ այլն: Եվ ես խրախուսեցի հայ ընկերներիս եւ հայ համայնքի այլ անդամների, որ Շիշլիում եւ իրենց բնակության մյուս վայրերում ընդգրկվեն պետական գործերի մեջ: Որովհետեւ, եթե մտնենք, եթե զբաղվենք՝ մեր համայնքի համար շատ ավելի լավ պիտի լինի, պետության օգնությունն էլ՝ նաև ի նպաստ մեր հաստատությունների կլինի: Եվ հիմա 8-10 հայ կա, որ պաշտոնավարում են տարբեր քաղաքապետարաններում՝ որպես ատյանի անդամ»:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների մասին խոսելիս գրուցակիցս նշում է, որ այն, ինչի մասին ինքը 4-5 տարի առաջ խոսել է հայկական հեռուստատեսու-

թյամբ, այսօր «կամաց-կամաց իրականանում է»: Ասել էր, որ պիտի սահմանները բացվեն. «1915-ի դեպքերն անհեթեթ բաներ չեն, բայց դրանց անվանումն ինձ համար այնքան կարևոր չէ՝ ցեղասպանություն, թե ուրիշ բան: Երկու կողմում էլ շատ սարսափելի բաներ են եղել, եւ հնարավոր է, անշուշտ, հայերն ավելի շատ են տուժել: Բայց եթե միայն դրա վրա կենտրոնանանք եւ սպագային չնայենք, եթե հազարավոր տարիների թշնամությամբ ապրեն երկու կողմերը, ինչպե՞ս կլինի: Սխալ է գործվել՝ ջարդ դնես անունը, թե՛ ցեղասպանություն: Եթե այդ սխալի վրա միշտ պնդենք, հայերի գալիք սերնդի սպագան չպատրաստենք, ինչպե՞ս կլինի»:

- Հնարավոր չէ խնդիր լուծել՝ այն անտեսելով կամ միայն կրքոտ զայրույթով խոսելով,- ասում է Պարրընը: Նա անընդունելի է համարում միագիծ մտածողությունը, այլ տեսակետներ լսելը մերժելը: «Եթե դու Թուրքիայում ես ծնվել, եթե թուրքի զավակ ես, պիտի ասես՝ մենք ցեղասպանություն չենք արել, հայերին չենք սպանել (եւ արդեն ասում են), հայերն են մեզ սպանել: Ինչո՞ւ: Որովհետեւ իր հայրն այդպես է ասում, գրքերում այդպես է գրված», - նկատում է Պարրընը, հուսալով, որ մի օր այդպես խոսողները նաեւ այլ գրքեր կկարդան: Նույնը ցանկանում է նաեւ հայերին:

Իր միտքը հասկանալի դարձնելու համար Վազգեն Պարրընը դիմում է այլապատումի. «Ասենք, Մկրտիչն ինձանից 1000 ոսկի փող ուզեց, ասաց՝ 2 ամիս հետո կվերադարձնեմ: Չվերադարձրեց, ասաց՝ չկա: Նորից՝ չկա ու չկա: Ես էլ զայիս-գնում եմ, կռվում եմք: Ուրիշների մոտ էլ ասում եմ՝ էսպես բան չի լինի, քանի ամիս է, թե տարի է՝ Մկրտիչը փողս չի տալիս: Հինգ տարի անցնում է, դեռ ասում եմ: Նրա տղային եմ տեսնում՝ ասում եմ, թե հայրդ գեշ մարդ է, ինձանից 2 հազար ոսկի է առել, 7 տարի է անցել, դեռ չի տվել: Նրա որդին էլ պիտի ասի՝ կորի՞ր դու, ստախոս մարդ: Ի՛նձ կասի ստախոս: Հասկանո՞ւմ ես՝ ինչ եմ ասում: Ուրեմն պիտի նայես, որ խելոք կերպով վարվես: Այդ մտքերով գլուխդ զբաղեցնելու փոխարեն ուրիշ բանով զբաղեցնես՝ մտածես, թե ի՞նչ անես, որ այդ 1000 ոսկու փոխարեն 2 հազարը շահես»:

Ու վերջում, որպես Թուրքիայի քաղաքացի ինտեգրված եզակի հայ, Վազգեն Պարրընը ցանկանում, թե վստահեցնում է. «Հուսով եմ, որ փայլուն օրեր պիտի ապրեն հայաստանցիները, հուսով եմ՝ սահմանները կբացվեն, մշակութային կապեր կհաստատվեն, հազարավոր տարիների թշնամությունը կվերանա»:

ՍԱՀՄԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ՝ ՓԱԹԵԹՈՎ

Հայացք Արարսի այն ասից

Ազգային գործողության կուսակցությունից Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Մեհթաթ Մելինը կողմ է հայ-թուրքական սահմանի բացմանը՝ մնացած բոլոր երկկողմ կնճիռները հարթելու պարագայում. «Չես կարող Հայաստանի կամ Կովկասի որեւէ այլ պետության հետ քննարկել միայն մեկ հարց՝ սահմանները: Պետք է ամեն բան քննարկես՝ թե՛ Սփյուռքի պահվածքը Միացյալ Նահանգներում, թե՛ սահ-

մանների բացումը, որովհետև մենք որոշ առևտուր անում ենք, իհարկե: Բայց չես կարող այդ հարցերին անդրադառնալ՝ առանց Ղարաբաղի հարցը քննարկելու: Չես կարող խոստանալ որեւէ մեկին, ԱՄՆ-ին, որ սահմանը վաղը բացվելու է: Որովհետև դու պետք է ամբողջական ծրագիր ունենաս: Արդյոք այս ամենը քննարկվել է, թե՞ ոչ, չգիտեմ»:

Չնայած Հայաստանում ավելի շատ հակված են Թուրքիայի հետ հարաբերությունների «փուլ առ փուլ» կարգավորմանը, բայց Մելենը պնդում է, որ դա կարճատև լուծում կլինի: Լոզանի պայմանագրի պես տեսական համաձայնության համար պետք է հարթվեն բոլոր խնդիրները. «Ես դեմ չեմ Հայաստանի հետ քննարկումներին: Վերջին 10 տարում միշտ պնդել եմ, որ մենք պետք է ավելի սերտ հարաբերություններ ունենանք Կովկասի, այդ թվում՝ Հայաստանի հետ: Որովհետև դրանք անօրինական ճանապարհով են տեղի ունենում. այստեղ ապրում ես աշխատում է 70 հազար հայ: Այնպես որ, մենք պետք է բացենք մեր... անշուշտ, ո՛չ սրտերը, այլ՝ դռները, ես հաստատենք պատշաճ հարաբերություններ»:

Մեխաթ Մելենը, ով նաև սյունակներ է վարում «Թրքիշ դեյլի նյուզ» եւ «Դունյա» պարբերականներում, Վաշինգտոնում անձամբ լսել է թուրք պաշտոնյաների «մասնավոր» հայտարարությանը, թե ՏԻՄ ընտրություններից՝ մարտի 29-ից հետո, սահմանները բացվելու են: Սակայն նա կասկածում է, թե հայերի հետ իսկապես քննարկվում են սահմանը բացելու կամ պատմաբանների հանձնաժողով ստեղծելու հարցեր: ՏԻՄ ընտրությունների օրակարգում, նրա պնդմամբ, այս հարցերը չեն բարձրաձայնվել նույնիսկ Հայաստանին եւ միայն Հայաստանին սահմանակից Կարսի շրջանում: Մեզ հետ զրույցում Մեխաթ Մելենը նկատում է, որ հատկապես ԱՄՆ-ում կարծում են, թե այս հարցերը քննարկվում են Թուրքիայում, բայց դա այդպես չէ: Սահմանի բացման «փաթեթային» տարբերակի մասին խոսելով՝ նա հիշեցնում է, որ ԱՄՆ-ն շատ խնդիրներ ունի տարածաշրջանում. պատրաստվում է զորքեր դուրս բերել Իրաքից, Աֆղանստանում ԱՄՆ-ն ՆԱՏՕ-ի աջակցության կարիքն ունի, ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության ընդլայնման հարցեր կան եւ այլն:

Զրուցակիցս կասկածում է, թե Օբաման ապրիլի 24-ին կարտասանի «ցեղասպանություն» բառը. «Ես վստահում եմ հայերի ողջամտությանը՝ Հայաստանի հայերի, ո՛չ թե՛ ԱՄՆ-ի: Նրանք դա օգտագործում են, ընդ որում՝ ընդդեմ հայերի, որոնք ապրում են ՀՀ-ում, եւ վնաս են հասցնում մեր հարաբերություններին: Դուք էլ տնտեսապես շատ վատ վիճակում եք, ինչպես բոլորն այս տարածաշրջանում, եւ նրանք այդպիսով վնասում են ձեզ: Որովհետև բոլոր տնտեսական խնդիրները, ինչպես եւ պարոն Էրդողանի կողմից, դուրս են թողնվել: Ո՞վ է դրանից շահում՝ որոշ մարդիկ, ովքեր ապրում են Նահանգներում»:

Մելենը պնդում է, որ վանեցիների իր ընտանիքին էլ հայերն են սպանել, ուստի եղածը ոչ թե ցեղասպանություն է եղել, այլ՝ պատերազմ: Համենայնդեպս, ասում է, որ իրեն հակահայկական ոգով չեն դաստիարակել. «Որովհետև մենք իսկապես ստեղծում էինք մի նոր ազգ, նոր գաղափարներ, եւ Լոզանն այստեղ շատ կարեւոր էր: Մենք պետք է փորձենք կիսել բարեկեցությունն այս տարածաշրջանում, ավելի շատ առևտուր անել, ընդունելի լուծումներ գտնել եւ չօգտագործվել ուրիշների կողմից: Ընդգծում եմ՝ չօգտագործվել»:

- Եվրամիության հետ հարաբերությունների օրակարգում եղած հայկական խնդիրը Թուրքիան պետք է լուծի հայերի հետ, ո՛չ թե եվրոպացիների,- պնդում է գրուցակիցս: Հարցիս, թե թուրքերն ուզո՞ւմ են ԵՄ մտնել, Մելենը պատասխանեց, որ եթե հարցնեի 5 տարի առաջ՝ այո, իսկ այսօր մարդիկ անտարբեր են. «Եվրոպացիները ձեռացնում են, թե մի օր մեզ ներս են թողնելու, մենք էլ ձեռացնում ենք, թե մի օր լիարժեք անդամ ենք դառնալու: Այնպես որ, երկու կողմն էլ կատարյալ հաջողությամբ ձեռացնում են»:

Մեհթաթ Մելենը, լինելով թուրք-եվրոպական «ներդաշնակեցման հանձնաժողովի» անդամ, ասում է, որ մինչև կոկորդը կուշտ է այդ ամենից եւ դա չի թաքցնում եվրոպացիների հետ բանակցություններում:

«Թուրքիայի առևտրի 40%-ից ավելին Եվրոպայի հետ է, այնտեղ 5 մլն թուրք է ապրում: ԱՄՆ-ի ՀՆԱ-ի 18%-ը ԵՄ-ի հետ առևտուրն է, բայց մեզ համար դա 50%-ից ավելին է: Ինչպե՞ս կարող է իմ կուսակցությունում մեկը դեմ լինել Եվրոպային: Բայց ինչպե՞ս կարող են ամենակարեւոր ֆինանսական գործընկերները, ինչպիսին Թուրքիան է, անտեսվել եւ լուրջ չընդունվել Եվրոպայում: Եվ իսկապես, ինչպե՞ս կարող ենք մենք օր օրի հետաձգել այս հարցերի լուծումը՝ չօգտագործելով առկա հնարավորությունները»:

Աշուտ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Ավարտել է Երեւանի պետական լսարանի արեւելագիտության ֆակուլտետը,

թուրքագետ է, պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դոցենտ:

Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ վերլուծություններով եւ հոդվածներով

հանդես է գալիս հայաստանյան ՋԼՄ-ներում: Աշխատել է «Ազգ» եւ «Երկիր»

պարբերականում, «Արմենպրես» լրատվական գործակալությունում:

ՏԵՂԵԿԱՆՔ. ՀԱՅ - ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԻ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայ - թուրքական հարաբերություններում տեղի ունեցող վերջին զարգացումները եւ հատկապես ֆուտբոլային դիվանագիտության միջոցով հարաբերությունների նոր փուլ սկսելու փորձերը ստիպում են եւս մեկ անգամ ուսումնասիրել վերջին տարիներին երկու երկրների միջեւ պետական եւ ոչ պետական մակարդակով տեղի ունեցած շփումները: Ֆուտբոլային մրցախաղից հետո շատերն ակնկալում էին, որ հայ - թուրքական հարաբերություններն ակտիվանալու են, եւ այդ ուղղությամբ արձանագրվելու է լուրջ առաջընթաց:

Երկու երկրների միջեւ տեղի ունեցած շփումները

Հայ - թուրքական շփումներ հիմնականում տեղի են ունեցել հասարակական կազմակերպությունների շրջանակներում: Պետական մակարդակով երկու կողմերը սկսել են ավելի ակտիվ շփվել ՄԾՏՀ շրջանակներում՝ հատկապես Ստամբուլում Հայաստանի մշտական ներկայացուցչության հիմնումից հետո: Մինչ այդ, կողմերը պետական մակարդակով շփվում էին ԱԳ նախարարությունների պաշտոնյաների մակարդակով:

Հասարակական կազմակերպությունների ակտիվ շփումներ սկսվել են դեռեւս 1997 թվականից, երբ ստեղծվեց Հայ - թուրքական բիզնեսի զարգացման խորհուրդը: Այդ կառույցի ստեղծումն իրականում ուներ քաղաքական նպատակ, սակայն այդ շրջանում չկարողացավ ծառայել իր նպատակին եւ շատ կարճ ժամանակում կորցրեց հետաքրքրությունը քաղաքական իշխանությունների համար:

Հասարակական կազմակերպությունների շրջանակներում երկու կողմերի շփումներն ակտիվացան 2001 թվականից, երբ ԱՄՆ-ի կառավարության կողմից Վաշինգտոնի Ամերիկյան համալսարան հիմնադրամին հատկացվեց մեկ միլիոն ԱՄՆ դոլար՝ հայ - թուրքական հարաբերությունների զարգացման նպատակով: Այս դրամաշնորհի

շրջանակներում մոտ 3 տարի տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվեցին մի շարք մեծ ու փոքր ծրագրեր:

Տեղի ունեցած շփումների արդյունավետությունը

2000 թվականին ամբողջ աշխարհում սկսվեց ցեղասպանության ճանաչման մի նոր գործընթաց: Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման բանաձեւեր էին ընդունվում տարբեր երկրների խորհրդարաններում: Նման իրավիճակում հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը, որքան էլ նպատակաուղղված լինեին երկու ժողովուրդների՝ միմյանց ճանաչելուն, միեւնույն է, չէին կարող արդյունավետ լինել: Ցանկացած հանդիպման ժամանակ ցեղասպանության ճանաչման գործընթացն արգելք էր հանդիսանում երկու կողմերի՝ միմյանց հետ ավելի ազատ շփվելու հարցում: Պատկերն այլ է վերջին տարիների շփումների արդյունքում:

Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու եւ ժողովրդավարական պետություն դառնալու ձգտումն իրականում փոխում է հասարակայնության ավելի կիրթ խավի մտածելակերպը եւ վերաբերմունքը՝ ինչպես հայ - թուրքական հարաբերությունների զարգացման, այնպես էլ Հայոց ցեղասպանության իրողության ընկալման վերաբերյալ: Թուրք մտավորականները եւ հասարակայնության մի ստվար մասը բացի այն, որ վերջին երկու - երեք տարիներին կարողանում են ավելի ազատ արտահայտվել, դեռ ավելին, նրանց մեջ առաջացել է Հայոց ցեղասպանության մասին ավելի ճշգրիտ եւ մանրամասն տեղեկություններ ձեռք բերելու ցանկություն: Այս իրողության վերջին արտացոլումը թուրք մտավորականների կողմից կազմակերպված՝ ցեղասպանության զոհերից ներողության ստորագրահավաքն էր՝ «Հայեր, ներեցեք մեզ» ակցիան, որին մի քանի օրերի ընթացքում միացան 30 հազարից ավելի թուրք:

Ինքնության գիտակցության հարցը Թուրքիայում

Թուրքիայում չափազանց զգայուն խնդիր է հանդիսանում ինքնության գիտակցության թեման: Վերջին տարիներին Թուրքիայում ժողովրդավարացման ուղղությամբ փոփոխությունները տարաբնույթ խնդիրներ են առաջացրել իշխանությունների եւ հասարակության որոշակի շերտերի համար:

Թուրքիայում շատ դժվար է գտնել գտարյուն թուրք, որի ծնողները լինեն ծագումով թուրքեր: Այդ խնդիրը պատճառ հանդիսացավ, որ քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերում նշվի ոչ թե ազգային պատկանելությունը, այլ՝ քաղաքացիությունը: Ինքնության գիտակցության տեսանկյունից թուրքական պետության համար լուրջ խնդիր է նաեւ մահմեդականացած (ծպոյալ) հայերի հարցը:

Մեր կողմից կատարված բազմաթիվ եւ երկարատե (շուրջ 6 տարի) ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Թուրքիայի արեւելյան շրջաններում ապրող քրդերի զգալի մասն իրեն համարում է ծագումով հայ: Նրանք ապրում են պապերից ժառան-

գած հին սովորույթներով եւ իրենց տղաներին կամ աղջիկներին ամուսնացնում են ծագումով հայ ընտանիքների աղջիկների կամ տղաների հետ:

Թուրքական պետության համար վտանգավոր այս խնդիրը բարձրացնելուց եւ մի քանի հրապարակային ելույթներ եւ հարցազրույցներ ունենալուց հետո պաշտոնից հեռացվեց Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ, հայտնի հակահայ պատմաբան Յուսուֆ Հալաչօղլուն:

Թուրքական իշխանությունները Հալաչօղլուին պաշտոնից հեռացնելը հիմնավորում են երկու պատճառաբանությամբ. նախ այն, որ վերջինս քաղաքականացված պատմաբան էր, եւ երկրորդ, որ նրա հակահայկական հայտարարությունները կարող էին խոչընդոտել նոր զարգացող հայ - թուրքական հարաբերությունների ընթացքին:

Իրականում Յուսուֆ Հալաչօղլուն պաշտոնից հեռացվեց, քանի որ մահմեդականացած հայերի վերաբերյալ նրա հայտարարությունները ծպտյալ հայերին հնարավորություն էին տալիս համախմբվելու եւ մտածելու իրենց ինքնության մասին: Հալաչօղլուի հայտարարություններին զուգընթաց՝ Թուրքիայի Սասուն գավառում ստեղծվել է Սասունում ապրող հայերի միություն, որի առաջին ժողովը տեղի է ունեցել 2008 թվականի հուլիսին: Միությանն անդամագրված են շուրջ 2000 մահմեդականացած հայեր:

Թուրքիայում ինքնության գիտակցության հարցն առաջ եկավ նաեւ Հրանտ Դինքի սպանությունից հետո, երբ բազմաթիվ մահմեդականացած հայեր (որոնք ներկայումս ապրում են Ստամբուլ քաղաքում) միացան բողոքի երթերին:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինքնության գիտակցության խնդիրն ի դեմս մահմեդականացած հայերի, Թուրքիայի արեւելյան շրջաններից տեղափոխվում է երկրի ամենամեծ քաղաք՝ Ստամբուլ:

Թուրք հասարակայնությունը դառնում է անկառավարելի

Արդեն երկար տարիներ Թուրքիայում շրջանառվում է «Խորքային պետություն» արտահայտությունը: Խորքային պետությունն այն է, որ պետության մեջ վերնախավի որոշ ներկայացուցիչներ ուղղակիորեն որոշում են պետության ներքաղաքական, արտաքին քաղաքական եւ տնտեսական, ինչպես նաեւ երկրում առկա բոլոր խնդիրները:

Խորքային պետությունը վերջին տասնամյակներում կարողացել է կառավարել ժողովրդին եւ վերահսկել ցանկացած ընդդիմություն կամ անհանդուրժողականություն: Վերջին մի քանի տարիներին Թուրքիայում առկա ժողովրդավարական գործընթացն իրոք թուրքական հասարակայնության համար ավելի ազատ մտածելու եւ գործելու հնարավորություն է ստեղծել: Նշված փոփոխություններին զուգընթաց շրջանառվում է «Խորքային Թուրքիա» արտահայտությունը, որը հակակշռում է «Խորքային պետություն» հասկացությանը:

«Խորքային Թուրքիա» է համարվում ներկայիս թուրքական հասարակայնությունը, որը դարձել է անկառավարելի եւ փորձում է խոչընդոտել «Խորքային պետության» գործողությունները: Թուրքական հասարակայնությանը զայելու եւ կառավարել կարողանալու նպատակով Խորքային պետությունը սկսել է համագործակցել

PKK-ի (Քրդական բանվորական կուսակցություն) ղեկավարության հետ: Վերջին երկու տարիներին թուրքական բանակի եւ քուրդ զինյալների միջեւ բախումները կազմակերպվել են Խորքային պետության եւ PKK-ի ղեկավարների միջեւ ձեռք բերված համաձայնության արդյունքում:

Թուրքական պետության համար ներկայումս վտանգ են հանդիսանում ինչպես քրդերը, այնպես էլ քրդացած հայերը եւ պլեիները: Նշենք, որ պլեիների մեծ մասը նույնպես կրոնափոխ հայեր են, եւ այժմ Թուրքիայի Թունջեյի (Դերսիմ) նահանգում ապրում են մի քանի տասնյակ հազար պլեիներ:

Խորքային պետությունը գործադրում է բոլոր հնարավորությունները երկրի կառավարման ղեկն իր ձեռքում պահելու համար, սակայն տեղի ունեցող զարգացումների արդյունքում Թուրքիան փոխվում է, եւ այդ երկրի կառավարման ձեւերը նույնպես փոխվում են:

Երկու ժողովուրդների միջեւ գոյություն ունեցող կարծրատիպերը

Թուրքական հասարակայնության մտածելակերպում հայ կամ Հայաստան արտահայտություններն ուղեկցվում են մի քանի կարծրատիպերով: Թուրքիայի քաղաքացին (թուրքը) լսելով հայի մասին՝ անմիջապես հիշում է ASALA-ին (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ), տարբեր երկրներում թուրքական դիվանագիտական ներկայացուցիչների սպանությունները եւ շատ է վախենում այդ կազմակերպությունից:

Թուրքերի մեջ որպես կարծրատիպ արմատավորված են նաեւ հայկական ավանդական կուսակցությունները, նախ եւ առաջ՝ Դաշնակցությունը, այնուհետեւ՝ Հնչակյան կուսակցությունը եւ այդ կառույցների կողմից կազմակերպված «ապստամբությունները»: Նոր կարծրատիպ է ձեւավորվել՝ ի դեմս ԱՄՆ-ում ապրող հայերի, որոնց գործողություններն, ըստ թուրքերի, կրում են ագրեսիվ եւ նպատակատուղված բնույթ:

Հայերի մեջ թուրքերի նկատմամբ կարծրատիպերը հիմնականում կապվում են ցեղասպանության իրագործման եւ թուրքերի՝ մարդասպան լինելու հետ: Մինչեւ հիմա կան մարդիկ, ովքեր վախենում են անգամ թուրքերի հետ շփվելուց:

Ձեւավորված կարծրատիպերը արմատավորված են ժողովուրդների գիտակցության մեջ, եւ դրանք հնարավոր է վերացնել միայն փոխադարձ ճանաչողության, շփումների եւ երկարաժամկետ խաղաղ հարաբերությունների արդյունքում ձեռք բերված վստահության միջոցով:

Իրականում հայ - թուրքական հարաբերությունները չեն կարող լուծել ո՛չ ֆուտբոլային մրցախաղերը, ո՛չ պատմաբանները, ո՛չ քաղաքական գործիչները, ո՛չ նախագահները: Խնդիրը կարող են կարգավորել միայն ժողովուրդները, երբ դրա ժամանակը գա:

Հայ - թուրքական սահման... Բացե՛լ, թե՛ չբացել...

Հայ - թուրքական սահմանի բացման խնդիրն արդեն երկար տարիներ քննարկման առարկա է դարձել երկու երկրների՝ ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական շրջանակների համար:

Մինչեւ 2008 թվականը թուրքական կողմը սահմանի բացման համար ներկայացնում էր մի քանի նախապայման՝ դարաբաղյան խնդիր, Թուրքիայի տարածքա-

յին ամբողջականության ճանաչման խնդիր, ցեղասպանության ճանաչման խնդիր... Ներկայումս թուրքական կողմը ոչ մի պահանջ չի ներկայացնում սահմանի բացման համար:

ԱՄՆ-ը Թուրքիայի ներկայիս կառավարությունից պահանջում է բացել հայ - թուրքական սահմանը: Թուրքական իշխանությունների համար ներկայումս դա լուրջ խնդիր է, քանի որ երկրում վերջին տարիներին բավական ակտիվացել են ազգայնական ուժերը, եւ հայ - թուրքական սահմանի բացման թեման կարող է շահարկվել նրանց կողմից:

Բանն այն է, որ Թուրքիայում 2009 թ. մարտին տեղի են ունենալու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Մինչ այդ ընտրությունները՝ Էրդոզանի կուսակցությունը ոչ միայն չի բացի Հայաստանի հետ սահմանը, այլեւ չի փորձի անգամ շարունակել սկսված շփումները: Թուրքիայի ներկայիս վարչակազմի ցանկացած շփում հայկական կողմի հետ կարող է անհաջողության մատնել Էրդոզանի կուսակցությանը եւ հնարավորություն տալ ազգայնականներին՝ հասնելու լուրջ հաջողությունների:

Սկսված շփումների շարունակությունը տեսականորեն հնարավոր է ապրիլ ամսից, երբ Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման գործընթացը շահարկելով, կփորձի կանխել ԱՄՆ-ի նորընտիր նախագահի կողմից ապրիլի 24-ի ցավակցական ուղերձում ցեղասպանություն բառի արտասանումը, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը ԱՄՆ-ի սենատի օրակարգ մտցնելը:

Սահմանի բացման եւ հարաբերությունների հաստատման հետ կապված՝ Թուրքիան ունի մի մեծ խնդիր: Թուրք հասարակայնությունը դեռեւս պատրաստ չէ Հայաստանի հետ սահմանի բացմանը եւ հարաբերությունների հաստատմանը: Թուրքական իշխանությունները փորձում են հատուկ կազմակերպված քարոզչությունների միջոցով իրենց ժողովրդին պատրաստել հայ - թուրքական հարաբերությունների բարելավմանը եւ սահմանի բացմանը, սակայն դրան խոչընդոտում են դարձյալ ազգայնական ուժերը:

Երկու երկրներում էլ արվում են քաղաքական եւ տնտեսագիտական վերլուծություններ, մամուլում եւ տարբեր հանդեսներում հրատարակվում են նյութեր՝ փորձելով ներկայացնել սահմանի բացման կարեւորությունն ինչպես Թուրքիայի, այնպես էլ Հայաստանի համար:

Իրականում սահմանի բացման հարցը կարելի է միայն Հայաստանի համար՝ երկրի առջեւ ծառացած տնտեսական խնդիրները լուծելու նպատակով: Հայաստանի հետ սահմանի բացումը թե՛ քաղաքական եւ թե՛ տնտեսական տեսանկյունից՝ Թուրքիային բոլորովին չի հետաքրքրում: Տնտեսագետների մի մասը համարում է, որ սահմանի բացման պարագայում Հայաստանի տնտեսությունը մի քանի ամիսների ընթացքում կաճի մոտ 30 տոկոսով: Սակայն մասնագետները չեն նշում, թե Հայաստանի տնտեսությունը մեկ-երկու տարիների ընթացքում ինչ ծավալների կախվածության մեջ կընկնի թուրքական տնտեսությունից: Ակնհայտ է, որ թուրքական տնտեսության համար Հայաստանի հետ սամանների բացումն էական ազդեցություն չի ունենա:

Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ Գյումրի քաղաքում գործող լրագրողների «Ասպարեզ» ակումբի հիմնադիր նախագահն է եւ ՀՀ Շիրակի մարզի հակակոռուպցիոն կենտրոնի ղեկավարը:
Լրագրողական շուրջ 30 տարվա փորձառություն ունի, աշխատել է Գյումրու տեղական հեռուստառադիոկայաններում եւ թերթերում՝ որպէս գլխավոր խմբագիր եւ օպերատոր:
Աշխատանքային եւ անձնական այցերով բազմիցս եղել է Թուրքիայում, գործընկերային կապեր ունի Կարսի նահանգի եւ Ստամբուլի մի շարք թուրք լրագրողների հետ:

ԵՐԿԱԹԵ ՎԱՐԱԳՈՒՅՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԿԻՆՈՄԵՏՐԸ

«Ես սպասում եմ, թե երբ է Հայաստանը ձեռք մեկնելու մեզ»

Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումից գրեթե մեկ տարի առաջ այսպէս խոսեց Կարսի տեղական թերթերից ամենաազդեցիկը համարվող «Կարս Հաբեր» օրաթերթի խմբագիր Գյումուշփալլա Քորտազը, կոշտ որակումներ տալով այն ուժերին, որոնք, իր համոզմամբ, երկու հարեւան երկրներում միմյանց նկատմամբ թշնամանք են սերմանում եւ խորացնում: Իր թերթում նա պարբերաբար անդրադառնում է այս խնդիրներին. «Մենք մեր պապերից ենք լսել, որ այստեղ հայեր են ապրել: Ճիշտ է, այժմ մեր կառավարությունն է փակել սահմանը, բայց ինձ հետաքրքրում է նաեւ, թե ինչ է լինելու Թուրքիայի նկատմամբ անհանդուրժողականություն որդեգրած հայկական Սփյուռքի դիրքորոշման հետ»:

Կարսում, եթե Հայաստանից ես եկել, դժվար չէ գրուցակիցներ գտնել. մարդիկ իրենք են գտնում հյուրերին: Քաղաքը հազիվ ութսուն հազար բնակիչ ունի, մի քանի հյուրանոց, բոլորն իրար շատ լավ գիտեն, եւ երբ հյուրանոցներում օտարականներ են տեղավորվում, լուրն արագ տարածվում է: Բավական է օտարականը մի թեթեւ բացատրի, թե ինչ գործ ունի այնտեղ, հյուրանոցների աշխատակիցներն իրենք են գտնում համապատասխան մարդկանց եւ տեղեկացնում, որ իրենց հյուրերը եկել են:

Կարսեցիների համարյա բոլոր խավերի ու խմբերի հետ հայ-թուրքական սահմանի բացման գրեթե բոլոր խոսակցությունները, գրույցներն ու հարցազրույցները հանգում են ժողովուրդների բարեկամության մասին ժողովրդական բանահյուսությանը: Հասարակ մարդիկ, աշխատավորներն ու արհեստավորներն այս թեմայի շուրջ գրուցելիս բացատրում են, որ երբ մեկի ավանակը կորչում է, առաջինը հարեւաններն են միանում կորուստը գտնելու համար: «Օլջեկ» թերթի խմբագիր Սալի Շահինը ձեռքի մատների ավանդազրույցն է բերում, թե՛ մատները միշտ անհավասար են, տարբեր կան մերձավոր հարեւաններ, կան հեռավորներ, բայց բոլորն էլ... մի ձեռքին են, ինչպե՞ս կարելի է թշնամանալ միմյանց հետ... եւ այդպէս շարունակ:

Կարսում դժվար է գտնել մեկին, ով 2008-ի սեպտեմբերի 6-ին չի դիտել Հայաս-

տան - Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը: Պատճառը միայն թուրքական ֆուտբոլի վերելքն ու Կարսում ժամանցի պակասը չէ: Չնայած հայ-թուրքական սահմանի փակ լինելուն կամ փակ մնալու շուրջ ութսունամյա «ավանդությանը», Կարսի եւ նույնանուն նահանգի բնակիչների ճնշող մեծամասնությունն էական եւ անձնական շահագրգռություն ունի սահմանի վերաբացման հարցում: Այստեղ ուղղակի վստահ են, որ հարեանների հետ պետք է աշխատել, համագործակցել, գնալ-գալ, առետուր անել եւ այլն:

Երկաթե վարագույրի անկումից դեռեւս 18 տարի անց, սահմանամերձ մի 200 կիլոմետրանոց կտոր համարյա անձեռնմխելիորեն պահպանվում է՝ արգելափակելով Հասստան-Թուրքիա անցուղարձը:

- Մենք բոլոր սահմանամերձ երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման կողմնակիցներ ենք,- ասում են կարսեցի լրագրողների մեծ մասը:

Անցած 18 տարիներին Նախիջեւանից Կարսի նահանգ են տեղափոխվել եւ բնակություն են հաստատել տարբեր հաշվարկներով՝ 6-10 հազար մարդ: Նախիջեւանցիները հարմարվել են, զբաղվում են գործարարությամբ, գյուղատնտեսությամբ, դասախոսում են, լրագրողական գործով զբաղվում:

Սահմանը փակ պահելու կողմնակիցները հիմնականում արտահայտված են վերաբնակվածների այս խմբով, որոնք լիովին քաջալերվում են Կասում գործող Ադրբեյջանի հյուպատոսարանի հակահայկական պրոպագանդայով, տեղ-տեղ՝ հիստերիաներով, եւ թուրք ազգայնական կուսակցությունների տեղական մի քանի կառույցներով: Կարսի սոցիալիստներն ու կոմունիստներն ազգայնականներին երբեմն հեզնանքով ֆաշիստ են կոչում եւ հասկացնում, որ նրանց հետ հայ-թուրքական ոչ միայն բարեկամության, այլեւ անգամ հարաբերությունների հաստատման մասին խոսելն ավելորդ է, որեւէ զրույց չի ստացվի: Չնայած նրանց հետ զրուցելու իմ բոլոր ջանքերին, բոլորը հրաժարվեցին հանդիպումներից: Մեկը համաձայնեց, բայց վերջին պահին, զբաղվածությունը պատճառաբանելով, հանդիպմանը չեկավ:

Կարսում քաղաքական եւ հասարակական գործիչների հետ սահմանի եւ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման մասին բոլոր զրույցների եւ խոսակցությունների ընթացքում հստակ տպավորություն եւ ստանում, որ այս մարդիկ որքան էլ հյուրընկալ եւ ջանադիր են, մի խոսք, մի կարծիք ասելուց առաջ անպայման խորհրդակցում են մայրաքաղաքի իրենց վերադասների հետ: Իրենց տեսակետները համեմատաբար ինքնուրույն եւ ազատ էին հայտնում լրագրողները, արհեստավորներն ու գործարար մարդիկ:

Գյումուշխալլան հիշում է, որ պատանեկան տարիքում «հայ» բառը շրջապատում ընկալվում էր որպես հայիոյանք, բայց համարում է, որ այդ ժամանակներն արդեն մնացել են անցյալում:

- Հային այժմ ընդունում են որպես ուրույն ժողովրդի, իսկ անձամբ ես՝ նաեւ որպես բարեկամի... բայց Օսկանյանը ֆաշիստ է...:

Սա մեկ տարի առաջ էր:

«..Բայց ի՞նչ լավ նվազեց...»

Կարսի Արվեստի կետրոնի գլխավոր տնօրեն Իսրաֆիլ Փարլակ. «Ո՛չ Կարսը, ո՛չ Թուրքիան, ո՛չ էլ Հայաստանը կամ աշխարհի շատ այլ բնակավայրերի ժողովուրդներ-

րի՝ աշխարհագրական սահմաններով չէ, որ ճանաչում են: Ես պետք է իմանամ, թե Հայաստանի ժողովուրդն ինչպես է ապրում, Ավստրալիայի բնիկներն ինչպես են ապրում: Մարդկանց՝ հատկապես երեխաներին, պետք է ուսուցանել հարեան ժողովուրդների կյանքը, մշակույթը եւ դրա հանդեպ հետաքրքրություն սերմանել: Այստեղ երեխաների հետ ներկայացումներ ենք դնում, որոնց ծախսերը քաղաքապետարանն է հոգում: Սրտանց ուզում եմ մի բեմադրություն էլ Հայաստանում ներկայացնել:

Ջիվան Գասպարյանն այստեղ մի անգամ ելութ ունեցավ 2005 թվականին: Կարսից մի երաժիշտ էլ կար, ներկայացրին. հանդիսատեսները դուդուկի ձայնից խենթացել էին, հիացած էին: Համերգի ավարտին հանդիսատեսներից մեկն ասաց. «Հայ է, բայց կարծես իմ սրտից նվազեց»: Մեկ ուրիշն ասաց. «Հայ էր նվագողը, բայց ինչ լավ նվազեց»:

Այս ամենը մեզ պատմող Իսրաֆիլ Փարլակը մի քանի անգամ եղել է Հայաստանում եւ որոնում է Եղիշե Չարենցի բանաստեղծությունների թուրքերեն որեւէ թարգմանություն՝ պոեզիայի երեկո բեմադրելու նպատակով: Նա էլ ամենքի պես դիտել է Հայաստան - Թուրքիա ֆուտբոլային խաղը:

- Արվեստագետները քաղաքական գործիչներին չեն հասկանում: Բայց այսպիսի առաջընթացները շատ ուրախացնող են: Կուզենայի, որ այս մակարդակով այցելությունները հաճախակի լինեին: Հասարակ մարդիկ իրար հետ լավ են, մնում է, որ վերաներում իրար հետ լավ լինեն, - ասում է Իսրաֆիլ Փարլակը:

Հայաստան - Թուրքիա. 0:2

Այդ բացառիկ ֆուտբոլային հանդիպումը Սարգսյան - Գյուլ մակարդակով հետագա բանակցությունները շարունակական տեսնելու հույսեր է արթնացրել ինչպես այս արվեստագետի, այնպես էլ Կարսի լրագրողների շրջանում:

«Կարս Փոսթաս» օրաթերթը վեց տարեկան է: Տպաքանակը՝ 800 օրինակ: Սեֆեր Թանը գործող խմբագիրն է: Ինքն էլ է դիտել խաղը: Պատմում է, որ անգամ հաշիվն է գուշակել: Քաղաքական տեսանկյունից՝ տեղի ունեցած զարգացումը շատ դրական է գնահատում:

- Գյուլի այցելությունը Հայաստան շատ օգտակար եղավ: Ես ուզում եմ, որ սահմանը բացվի: Մի կերպ Ղարաբաղի հարցը լուծեք՝ թող սահմանը բացվի: Ժողովրդի մեջ թշնամություն չկա: Մի անգամ Երեւանում զրոսնում էի, մոլորվեցի, ճանապարհը շփոթեցի, ոստիկանությունը գտավ ինձ, բերեց հյուրանոց: Նման վերաբերմունք չէի սպասում: Հինգ տարի առաջ եմ եղել Հայաստանում: Այն ժամանակ ընտրություններ էին, անչափ հետաաքրքրված էի եւ որոշել էի գալ տեսնել ձեր երկիրը, զրոսնել...:

Սեֆեր Թանը գրույցի վերջում ասաց, թե որեւէ թշնամանքի դրսեւորման չի հանդիպել Երեւանում: Մի մարդ մեզ հացի հրավիրեց: Ժամանակը չունեինք, հրաժարվեցինք, չնեղացավ:

Թուրքիայում ՏԻՄ ընտրությունները տեղի են ունենում հինգ տարին մեկ անգամ: Կարսի քաղաքապետ Նայիֆ Ալիբեյօղլին, ով արդեն սպառում է պաշտոնավարման իր երրորդ ժամկետը, պատրաստվում է նոր ընտրությունների, որոնք կայանալու են 2009 թվականի մարտի 29-ին (այստեղ էլ մեզ չեն զիջում. ՏԻՄ-ում ով ինչքան կարո-

դանում՝ ընտրվում է): Նա չորս տարի առաջ նմանը չունեցող մի նախաձեռնությամբ էր հանդես եկել. Հայաստանի հետ սահմանը բացելու մասին պետական իշխանություններին հովելիք ուղերձի ստորագրահավաք էր կազմակերպել: Կարսի նահանգում, ուր բնակչությունը մոտ 350 հազար է, հավաքվել էր 50 հազար ստորագրություն, ըստ որում առաջինների շարքերում ստորագրել էին լրագրողները:

Ստորագրահավաքը լայնորեն լուսաբանել էին տեղի բոլոր լրատվամիջոցները: Պատմում էին, որ քաղաքի մեծ խաչմերուկներում սեղաններ էին դրվել, մարդիկ մոտեցել էւ ստորագրել էին, ապա հավաքված ստորագրություններն ուղարկել էին խորհրդարան:

Հայաստանում եղել էր քաղաքապետի եղբայրներից մեկը՝ Ալիջան Ալիբեյօղլին, ով մեզ հետ զրույցում իր զարմանքը հայտնեց Հայաստանում սննդի ցածր գների կապակցությամբ: Կարսում նրան, ինչպես նաեւ շատ այլ գործարարների հետաքրքրում են Հայաստանում ոչխարի, շինանյութի եւ վառելանյութի գները: Այս մարդիկ, կարելի է ասել, կազմ ու պատրաստ սպասում են սահանի բացմանը՝ Հայաստանի հետ աշխույժ առևտրի ակնկալիքով: Բացատրում էին նաեւ, որ սահմանի բացվելու դեպքում սահմանամերձ տարածքների հողակտորների գներն ակնթարթորեն կաճեն:

Կարսում առանց սեթելեթանքի եւ շատ հասարակ են մեկնաբանում սահմանը բացելու իրենց շահագրգռություններն ու սահմանի փակ մնալու անհեթեթությունը: Մարդիկ այստեղ ավելի շատ բողոքում են Անկարայի դեմ, ասելով, թե՛ ինչու պիտի Հայաստանի քաղաքացիներն ազատորեն ինքնաթիռով գան Ստամբուլ, բայց Կարս՝ ոչ: Ինչո՞ւ թուրքերը Ստամբուլից ազատ գնում-գալիս են Երեւան, իսկ Կարսից իրենք չեն կարող ուղիղ գնալ Գյումրի կամ Երեւան, անպայման պիտի Վրաստանով անցնել, ինչո՞ւ Վրաստանի տարածքով կարելի է միմյանց այցելել, իսկ ուղիղ՝ ոչ, եւ այլն:

Արդյո՞ք դրանով Անկարան ավելի շատ Կարսին եւ սահմանակից նահանգներին չի վնասում, քան Հայաստանին, արդյո՞ք դրանով Կարսի զարգացումն արհեստակաւորեն չի արգելակվում:

Այս անպատասխան հռետորական հարցերը զրույցների ընթացքում հնչեցնում են բոլոր նրանք, ովքեր արդեն մի քանի տարի իրենց կարեցածի չափով պայքարում են սահմանի բացման համար: Այս լույսի ներքո մեկնաբանելով Կարսում տիրող տրամադրությունները՝ հիրավի կարելի է ասել, որ Թուրքիո կենտրոնական իշխանությունները պետական շահի համար ինչ-որ տեղ զոհաբերում են Կարսի եւ Հայաստանին սահմանակից մյուս նահանգների շահերը: Ըստ այդմ, Անկարայի դժգոհությունն են հարուցում բոլոր նրանք, ովքեր խոսում են սահմանի բացման օգտին, այդ թվում՝ Կարսի քաղաքապետը: Համենայնդեպս, մինչեւ ֆուտբոլային հայտնի խաղն ու հայ-թուրքական դիվանագետների՝ հանրությունից փակ հանդիպումները, իրավիճակն այդպիսին էր:

Կարսի շինարարական ընկերություններն ու շինարարները լրջորեն հետաքրքրված են հայաստանյան շինանյութերով, հատկապես՝ տուֆով: Սրա հետ մեկտեղ, հենց Հայաստանից եկած մարդու են հանդիպում, այնպայման իրենց մտահոգությունն են հայտնում Անիի դիմաց՝ Ախուրյանի հանդիպակաց ավիին հայաստանյան (Անիպեմզա-յի) քարհանքում իրականացվող պայթեցումների վերաբերյալ:

Երբ հարցնում են, թե սահմանի փակ լինելու պարագայում այդ ի՞նչ ճանապարհով ենք Գյումրուց Կարս հասել, ու երբ պարզում են, որ 80 կիլոմետրանոց ճանապար-

հի փոխարեն եկել ենք 340 կիրմետրանոց ճանապարհով, աջ ձեռքով գլխի վրայով բռնում են ձախ սկանչն ու սկսում են ծիծաղել, իբր՝ ահա այս օրն եք ընկել, ուրեմն: Ընկել ենք, ուրեմն...

«Հուրյուրտ» թերթի խմբագիր Էրոլ Հուրյուրտը մեզ հետ ունեցած զրույցում իր գործընկերների պես ասաց, թե ուզում է, որ սահմանը բացվի: Բայց նշեց նաև, որ սա պետական նշանակության հարց է: Մոտ վաթսունամյա այս խմբագիրը համարում է, որ պետության ղեկավարներն ավելի լավ գիտեն:

- Այն հարցերը, որ առաջ եք քաշում (չի նշում, թե որ հարցերի մասին է խոսքը), մեզ նեղ դրության մեջ են դնում: Անգամ որևէ տեսակետ հայտնելով՝ մենք կարող ենք մեզ վնասել: Սահմանը 1192-1993-ին բաց էր, մարդիկ գնում-գալիս էին, առևտրականների համար էլ լավ էր: Աշխուժություն էր տիրում: Իմ հասկանալով, Ղարաբաղի խնդրի հետ կապված՝ մեր երկիրը նման դիրքորոշում որդեգրեց.- ասում է Էրոլ Հուրյուրտը:

Թերթն անընդմեջ լույս է տեսնում 1954 թվականից: Տպաքանակը 300-350 օրինակ է, որոնցից 250-ը ընթերցողներին է հասնում բաժանորդագրման համակարգով: Այս եւ այլ թերթերի լավ օրերն ընտրությունների ժամանակ են սկսվում: Տպաքանակն այդ ընթացքում հասնում է 1500-2000 օրինակի: Այս թերթի խմբագրության նախասարահը փոքրիկ թանգարան է հիշեցնում. հին տպագրական մեքենա, որ որպես անտիկվար մոտ 40.000 լիրա կամ 25.000 դոլար է գնահատվում, զանազան պատվոգրեր, գովասանագրեր եւ այլն:

Էրոլ Հուրյուրտը դիտել է ֆուտբոլային պատմական հանդիպումը: Իր կարծիքով Աբդուլլահ Գյուլի այցը քաղաքական չէր, այլ միայն սպորտային, ճիշտ է՝ աննախադեպ էր, բայց այդ հանդիպման արդյունքների վերաբերյալ լուրջ հույսեր փայփայելն անիմաստ է համարում:

«Ռուսաստանն էլ շարունակվում է քայքայվել ...»

Կարսի երեք տեղական ռադիոկայաններից մեկը՝ «Կավկազ» ռադիոկայանը (95.5 FM) տեղավորված էր մի բնակարանում, ուր մուտք գործելու համար ոտնամանները հանում են ինչպես աշխատակիցները, այնպես էլ հյուրերը. բացառություններ չկան: Ռադիոկայանը գործում է 1996 թվականից: Լուրեր, գովազդ, երաժշտություն է հաղորդում, կան նաև քաղաքապետարանի աշխատանքի հետ կապված հաղորդումներ, հարցազրույցներ ուղիղ հեռախոսակապով, ինչպես նաև հատուկ սոցիալ-կրթական ծրագրեր կանանց համար: Հաճախ հոգեբանների եւ բժիշկների են հրավիրում հարցազրույցի, հղիության, ծննդաբերության, կանանց կարիքների շրջանակներում խորհուրդներ են հաղորդում:

Տնօրենը՝ Լեւենտ Աթան, որ մոտ երեսունհինգ տարեկան է, ասաց, թե հավանել է Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը: Ողջունելի է համարում Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի այցը Հայաստան:

- Թուրք-հայկական խնդիր կա, դրանք պատմական հարցեր են, այս հարցերը պիտի կարողանանք հաղթահարել: Օսմանյան ժամանակներում հայերն ու թուրքերը գործընկերություն են արել. ինչ է, հիմա չե՞ն կարող: Պետք է հիշել, որ արյունն արյունով չի լվացվում, արյունը ջրով է լվացվում: Մեկմեկու հարեան ենք, պետք է երկխոսու-

թյան մեջ մտնենք: Կուզենայինք Հայաստանի նախագահին էլ այստեղ տեսնել որպես հյուր: Այդպիսով մեր հարաբերությունները կսկսեին քայլ առ քայլ լավանալ,- բացատրում էր Աթան:

Սահմանի վերաբացման հեռանկարների եւ ակնկալիքների մասին խոսելիս ռադիոկայանի տնօրենը նշեց, որ դա առեւտրական եւ այլ գործարար հարաբերությունների զարգացմանը խիստ կօգնի:

- Կարծում եմ, անգամ Վրաստանի համար շահեկան կլինի, որ սահմանը բացվի: Իսկ սահմանի բացման խոչընդոտներն արդեն սակավ են: Ռուսաստանը շարունակվում է քայքայվել: Ազգերի երկխոսությունների ժամանակն է գալիս: Արխագիա, Օսեթիա, Վրաստան ... գերակա ուժ չպիտի լինի: Կարծում եմ, Ռուսաստանը ոչ մի պարագայում Վրաստան չպիտի ներխուժեր:

Ռադիոկայանի տնօրենն ասաց, թե չի եղել Հայաստանում, բայց լավ բարեկամներ ունի այնտեղ. նրանք հիմնականում առեւտրականներ են եւ գալիս են Թուրքիա առեւտրի: Ասաց, թե Վրաստանում եղել է, բայց Հայաստան այցելելու մտահոգություն ունի, կարծում է, թե այնտեղ վատ վերաբերմունքի կարժանանա թուրք լինելու պատճառով:

Եվրատեսիլի մասով՝ փոքր պարտք ...

«Օլչեք» մշակութային թերթի խմբագիր Սայի Շահինը Թուրքիայի նախագահի այցը Հայաստան՝ ողջունելի քայլ է համարում եւ այդ ոգով հողված է տպել իր թերթում:

- Հայաստանը մեզ սահմանակից երկիր է, Վրաստանի եւ Ադրբեջանի հետ մենք բարեկամական կապեր ունենք: Երաժշտության եւ արվեստի ոլորտում, ժողովրդական բանահյուսության մեջ՝ ֆոլկլորում, մենք աղերսներ ունենք: Իմ ակնկալիքն այս ոլորտներում հնարավոր համագործակցությունն է: Առկա տարածայնությունները չեզոքացնողը վերին ատյաններն են: Քաղաքական գործիչները պարտավոր են ավելի իմաստուն լինել:

Դրա փոխարեն որոշ քաղաքական գործիչներ եւ քաղաքագետներ Հայաստանում էլ, Թուրքիայում էլ, մեր միջեւ առկա տարածայնություններից օգտվելով, Հայաստանի եւ Թուրքիայի քաղաքացիներին անհանգիստ վիճակի մեջ են պահում, խոչընդոտում են տնտեսական ու մշակութային համագործակցությանը:

Մեր նախագահի այցը Հայաստան՝ այդ տեսանկյունից շատերին դուր չի եկել: Սակայն հասարակության մեծ մասը նախագահ Արդուլահ Գյուլի՝ Հայաստան կատարած այցը շատ դրական է գնահատում: Այդ այցից հետո Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ լուրջ երկխոսություն ենք ակնկալում:

Տեղյակ եմ, որ մեր նախագահի այցը Հայաստանում որոշ տարածայնությունների տեղիք տվեց: Երբ ֆուտբոլի հեռուստահեռարձակման ժամանակ հնչեց մեր երկրի հիմնը, մեր նախագահին ծափահարողներ էլ տեսանք, դժգոհողներ եւ ոտքի չկանգնողներ էլ տեսանք: Մտածում էինք, թե տեսնես մարդկանց մեծ մասն ի՞նչ վերաբերմունք ունի մեր երկրի հանդեպ: Օրինակ, Եվրատեսիլի ժամանակ Թուրքիան որպես կանոն Հայաստանին շատ բարձր միավորներ է տալիս: Սակայն մենք նույն վերաբերմունքին չենք արժանանում հայաստանյան կողմից:

- Կարսի քաղաքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպված՝ Կարսի մշակութային փառատոնին Հայաստանից էլ են մասնակիցներ գալիս: Դա մեզ ուրախացնում է: Հայաստանցիներին կարսեցիները շատ մեծ ուշադրության են արժանացնում: Որակյալ կատարումներ ենք լսել, երաժշտությունն ենք շատ հավանում: Բայց չարակամներ էլ կան: Նրանք, իհարկե, փոքրամասնություն են կազմում: Ուզում ենք, որ այս բարեկաման մթնոլորտը շարունակվի: Ձեր այցը, մեր տրամադրություններն իմանալը, Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների զարգացման մասին մեր կարծիքներն իմանալը կարեւոր է: Սակայն որոշ թղթակիցներ դժգոհ են մեր այս հարաբերություններից,- ասում է Սալի Շահինը:

«Իմպերիալիստական»

Ումիդ Քըլըջը Ժողովրդական դեմոկրատական կուսակցության (DTP Democrati Topulumm Parti) Կարսի մարզային կառույցի ղեկավարն է: Կարելի է ասել, որ կուսակցությունների տեղական կառույցների ղեկավարներից նա թերեւս միակն էր, ով համաձայնեց հանդիպել եւ զրուցել մեզ հետ. մյուսները զանազան պատճառաբանություններով նախընտրեցին իրենց կարծիքները պահել միայն մերձավորների համար:

DTP կուսակցությունը ստեղծվել է 2005-ին, 550 անդամ ունեցող Թուրքիայի խորհրդարանում ներկայացված է քսանմեկ պատգամավորով: Կուսակցության գաղափարախոսությունը սոցիալիստական է: Կուսակցությանն անդամակցում է երկու միլիոն մարդ, նրանց թիվը գնալով աճում է: 48 վիլայեթներում բյուրոներ ունեն: Հույս ունեն, որ խորհրդարանական հաջորդ ընտրություններում 100-150 պատգամավորական տեղ կգրավեն: Հարավ-արեւելյան Անատոլիայի 55 համայնքների պետեր, այդ թվում Բատմանի, Դիարբեքիրի, Վանի համայնքապետերն այս կուսակցության անդամներ են: Կուսակցության ակտիվիստները նպատակադրվել են այս տարածաշրջանում մարտին կայանալիք ՏԻՄ ընտրությունների ժամանակ հարյուր հինգ համայնքներում նվաճել համայնքապետերի պաշտոնները:

Ումիդ Քըլըջը քաղաքական հալածանքներից պատսպարվելու համար որոշ ժամանակ ապրել է Բելգիայում: Այնտեղ համագործակցել է ինչպես հայերի, այնպես էլ այլ ազգերի ներկայացուցիչների հետ:

Ֆուտբոլի մասին՝ ներողություն խնդրելով ասաց. «Այս հարցում «իմպերիալիստական» մոտեցում ունեմ. որ թիմը ուժեղ է՝ նրան եմ պաշտպանում: Ով ավելի լավ խաղաց՝ նրա երկրպագուն եմ դառնում»:

Նախագահ Ա. Գյուլի՝ Հայաստան կատարած այցի մասին ասաց. «Հայաստանը մեր ամենամոտ հարեանն է: Միրտս ուզում է վեր կենալ ու գնալ Երեւան, զրոսնել եւ վերադառնալ: Անցյալում տհաճ բաներ են եղել: Եղածը հարկավոր է մոռանալ եւ համագործակցել՝ երկու պետությունների շահերից ելնելով: Արեւելյան սահմանի բացվելուց կհարստանան եւ Հայաստանը, եւ Կարսը, եւ մեր նահանգը: Ոչ մի ժամանակներում ժողովուրդները միմյանց թշնամիներ չեն լինում, միշտ որոշակի պայմաններ են ստեղծվում ժողովուրդների թշնամացման համար: Կարծում եմ, որ եթե ժողովուրդներն իրար ավելի լավ ճանաչեն, թշնամությունը կվերանա»:

«Պո ռուսկի զնայեմ»

Կարսեցի գործընկերներիս խնդրեցի՝ ինձ տանել Կարսի տարեցներից մեկի հետ հանդիպման: Պայմանավորվեց, զնացինք: Հին քաղաքում էր տունը, սրբատաշ սեւ քարից. հիմա այդպիսի տներ չեն սարքում Կարսում: Սենյակների հատակներին թաղիքեղեն եւ փալասներ էին փռած, նախասրահում պլաստիկից տարաների մեջ մի քանի հարյուր լիտր ջուր կար պաշարած, պատերն անխնա ներկված էին դեղնավուն: Տան կահկարասին հին էր, չարքաշ առաստաղի գերանները հարյուր տարում ճկվել-կախվել էին, մի կես մետր գոգ էին տվել. վերանորոգման հետք անգամ չկար:

Ծերունին պառավի հետ էր սպրում: Պառավը թեյ մատուցեց: Պատերին որդիների նկարներն էին: DVD նվագարկիչն իր պատվավոր տեղում էր, այստեղ գրեթե բոլոր բնակարաններն ու կացարաններն էլ արբանյակային անհատական ալեհավաքներով էին հագեցած այնպես, ինչպես ամենուր պարտադիր թեյ էին մատուցում...

Քյարրաշ Դուրմուշը 89 տարեկան է, Չաքմաք գյուղի Չալգավուր թաղից: Սովորել է մոլդկանների հետ սպրելուն: Պատմում է, որ իրենց գյուղում հայեր են սպրել: Անուններ է հիշում՝ Արամ Վարդանյան, Խաչիկ...

- Պո ռուսկի զնայեմ,- անակնկալ ասում է ծերունին, ու վրա բերում «սամավար», «վալինկա», «կլեռուշկա»: Հորից լսել է, թե ինչպես են հայերը գաղթել: Տեսել է Քեմալ Աթաթուրքին: 1938-ին է մահացել: Ասում է, թե իրենց տունը ռուսական տուն է: Հայթորքական սահմանը բացելու մասին ասում է, որ եթե սահմանը բացվի, էլ իրար խփել-ջարդել չի լինի...

Ձիասարքերի բավականաչափ հարուստ խանութի հաղթանդամ տերը, որ նաև որոշ ձիասարքեր պատրաստող վարպետ էր ու խանութի գործակատարը, մեզ տեսնելով, մեր ով լինելն իմանալով՝ շատ ուրախացավ, խանդավառվեց, սկսեց մեկ առ մեկ իր սպրանքն ու աշխատանքները ցուցադրել: Հետո ծնողների ու իր սիրած եւ ունեցած նժույզների լուսանկարները ցույց տվեց, վերջում աննման անմիջականությամբ ասաց. «Միշտ երագել եմ, որ սահմանը բացվի ու կարողանամ Հայաստանում նման խանութ բացել ... ձեզ մոտ էլ ձիեր կան, չէ՞»:

- Այն էլ ինչպիսի..., - ասացի:

Մինչդեռ հասարակ մարդկանց ցանկություններն ու երագանքները շարունակում են էական հակասությունների մեջ մնալ իշխանությունների տրամադրությունների եւ երկրի կառավարման՝ հանրությանը հայտնի ու անհայտ շահերի հետ: Կարսում իմ գրուցակից մոտ երկու դյուժին մարդիկ էլ շատ լավ հասկանում ու պատկերացնում են, որ պատմական հիշողության արժեվորման իմաստնության կարիքը, կարծրատիպերից հրաժարվելու երկուստեք կամքի եւ համապատասխան ջանքերի անհրաժեշտությունը, Ղարաբաղի չլուծված կոնֆլիկտը, Ադրբեջանի էներգակիրները, Ռուսաստանի անթաքույց շահերը քրդական գործոնի անկանխատեսելի զարգացումների եւ Թուրքիայի եվրախնտեզրման ճանապարհին հայոց ցեղասպանության հաղթաթղթի շահարկումների հետ մեկտեղ՝ սահմանն այնքան երկար են փակ պահելու, որքան պետք լինի:

Ոչ հայաստանյան, ոչ էլ թուրքական կողմից որեւէ սերունդ այս հատվածում բաց սահման չի հիշում, եւ այստեղ ու այնտեղ ոչ ոք հոգեբանական անհաշտություն չունի այս երկու հարեանների սահմանի գոցության առնչությամբ:

Ավստրալիան ու Նոր Զելանդիան մեզ հոգեբանորեն ավելի մոտ են, քան Կարսը կամ Կարսի նահանգը՝ որպես ժամանակակից աշխարհագրական միավորներ: Նույնիսկ Ստամբուլն է շատ ավելի մոտ ընկալվում, քան Ախուրյանից մի կիլոմետր դեմը:

Կարսի այժմյան բնակիչների համար նույն երկրները հոգեբանորեն ավելի մոտ են, քան Գյումրին, որ հիշում են իրենց պապերի պատմածներով:

Հայաստանը թուրքական իշխանությունների «դարդերի» ցուցակների առաջին տասնյակում էլ չկա, առաջին տասնյակում Սփյուռքն է՝ համապատասխան պատճառներով ժառանգված գլխացավանքով, կամ ցեղասպանության ճանաչման-չճանաչման գլխացավանքն է՝ հայկական Սփյուռքի մատուցմամբ... Այս թնջուկն այնքան է գանգուր, որ հեռվանց մի կետ է երևում միայն՝ որպես սահանք բացել-չբացելու հարց: Համատեղելի՞ ենք, թե՛ չենք: Եթե՛ չենք, ապա ներողություն, ո՞վ է տեղափոխվելու եւ մոտավորապես՝ ո՞ր: Ասում են՝ բոլոր տեղերը զբաղված են: Կա՞ն հավերժական թշնամիներ, թե՞ չկան: Մինչեւ այս հարցերի պատասխանները չառկայ՝ ծեն երկու երկրների քաղաքական մտքերում՝ սահմանը փակ է մնալու: Ավելի շատ՝ փակ, քան բաց:

Ային ՕԶԻՆՅԱՆ

Քաղաքագետ է, ծնվել է Ստամբուլում, ներկայումս ապրում է Հայաստանում: Ուսանում է Երեւանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայում:

Կովկասյան տարածաշրջանին եւ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող վերլուծություններով մշտապես հանդես է գալիս է թուրքական «Չաման» օրաթերթում եւ հայկական տարբեր լրատվամիջոցներում: Ային Օզինյանը Թուրք-հայկական գործարար կապերի զարգացման խորհրդի մամուլի համակարգողն է, ինչպես նաեւ Կովկասի բիզնեսի զարգացման ցանցի տարածաշրջանային ծրագրի համակարգողը:

ԱՐՏԱԳԱՂԹ ԳԵՊԻ ՓԱԿ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ԵՐԿԻՐ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայաստանյան ապօրինի աշխատուժի խնդիրը եւ արդյունքները

Ներկայիս աշխարհում միլիոնավոր մարդիկ շատ տարբեր պատճառներով, օրինական կամ անօրինական ճանապարհներով լքում են իրենց երկիրը: Այլ կերպ ասած՝ արտագաղթի փաստը եւ արդյունքներն ինչպես նախկինում, այնպես էլ մեր օրերում, ամենակարեւոր իրողություններից են:

Միջազգային ամենակարեւոր խնդիրներից մեկը՝ տարբեր պատճառներով իրենց ծննդավայրը լքող, օրինական կամ էլ անօրինական ճանապարհներով այլ երկրներ մեկնող միլիոնավոր մարդիկ, անկասկած, իրենց հետ շատ խնդիրներ են առաջ բերում: Միջազգային ասպարեզում շատ լուրջ չափերի հասնող եւ կարեւոր խնդիրների վրա ներգործող այս հարցը Թուրքիայի համար կարեւորվում է հիմնականում հայ - թուրքական հարաբերությունների տեսանկյունից:

Թուրքիայում առկա «օտարերկրյա ապօրինի աշխատուժը» եւ դրա առաջացրած խնդիրներն ընդհանուր առմամբ անհանգստացնում են Թուրքիային, սակայն «հայաստանցի ապօրինի աշխատուժի» խնդիրը, գոյություն ունեցող «օտարերկրյա ապօրինի աշխատուժի» համեմատությամբ, դիտարկվում է այլ հարթության վրա:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից կարճ ժամանակ անց երկրի բնակչության մի մասը տնտեսական խնդիրների եւ գործազրկության պատճառով աշխատանք գտնելու հույսով սկսեց մեկնել հարեւան երկրներ: Այդ երկրներից առաջինը եղավ Թուրքիան: Հայաստանցի գործազուրկ մարդկանց համար Թուրքիան դարձավ նախընտրելի, քանի որ մոտ է Հայաստանին, բեռնափոխադրումները մատչելի են, եւ կյանքն էժան է: Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ գոյություն ունեցող խնդիրների պատճառով՝ աշխատելու եկած Հայաստանի քաղաքացիները չեն կարողանում օրինական աշխատանքի եւ կացության թույլտվություն

ստանալ, սակայն չեն հեռանում Թուրքիայից եւ փորձում են այնտեղ մնալ անօրինական ճանապարհով:

Չնայած հստակ հայտնի չէ, թե որքան է Թուրքիայում անօրինական ճանապարհով աշխատող Հայաստանի քաղաքացիների թիվը, սակայն ըստ Արդուլլահ Գյուլի 2005 թվականին արած հայտարարության՝ այն կազմում է 30.000 (երեսուն հազար), իսկ 2006 թվականին մի քանի պատգամավորներ նշեցին, որ այդ թիվը 70.000 (յոթանասուն հազար) է: Թուրքիայում աշխատող Հայաստանի քաղաքացիների խնդիրը երկու կողմերի համար դիտվում է որպես խաղաքարտ, քանի որ վերջին շրջանում հաճախակի են դարձել այդ աշխատողներին երկրից արտաքսելու մասին խոսակցությունները:

Թուրքիան գաղթականների հետ կապված քաղաքականության հարցում ստիպված է լինում տարբեր մոտեցումներ հանդես բերել հատկապես արեւելքից եւ արեւմուտքից եկողների նկատմամբ: Թուրքիայում սպասվում էր, որ արեւելյան հարեաններից՝ միջինարեւելյան եւ ասիական երկրների ժողովուրդները գաղթելու են դեպի Թուրքիա, այդ պատճառով էլ, համաձայն 1951 թվականի Ժնեւի համաձայնագրի՝ աշխատանքի եւ բնակվելու թույլտվություն է տրվում միայն թուրքական ծագում ունեցողներին եւ վերոհիշյալ երկրներից եկողներին, իսկ մյուսներին թույլտվություն չի տրվում: Թույլատրվում է միայն Թուրքիայով տարանցիկ մեկնել երրորդ երկիր: Սակայն սառը պատերազմի ժամանակաշրջանից ի վեր Արեւելյան Եվրոպայի երկրներից դեպի Թուրքիա գաղթականների հոսքը սահմանափակ թվով, սակայն իրականացվել է:

Թուրքիայում ինչպես գաղթի մասին օրենքները, այնպես էլ գաղթի եւ մաքսանենգության հարցերում քաղաքական գործիչների եւ հասարակական կազմակերպությունների առաջնորդների տեսակետները նույնպես բավական կարեւոր են:

Իսկ այս հարցում հետաքրքիրն այն է, որ «հայաստանցի ապօրինի աշխատողների խնդիրը» հիմնականում օրակարգ է բերվում երկու երկրների միջեւ քաղաքական խնդիրներ ծագելու պարագայում, եւ եթե քաղաքական հարցերը չեն սրվում, այդ խնդիրը չի քննարկվում: Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ամենամեծ քաղաքական հարցը, ինչպես հայտնի է, այլ երկրների խորհրդարանների կողմից ցեղասպանությունն ընդունող օրենքի բանաձեւերն են: Նմանատիպ բանաձեւերի օրակարգ գալով եւ դրանց դեմ ձեռնարկվելիք քայլերի մասին մտածելիս, անշուշտ, նախ եւ առաջ մտաբերվում է «հայաստանցի ապօրինի աշխատողների խնդիրը»: Նրանց նպատակը ոչ թե խնդիրը լուծելն է, այլ այն, որ երկրից հայաստանցի ապօրինի աշխատողներն արտաքսվեն:

Այս կապակցությամբ առաջին անգամ հակազդեցություն է ցուցաբերել Ճճմարիտ ուղի կուսակցության առաջնորդ Թանու Չիլերը, երբ 2000 թվականի հոկտեմբերի 8-ին ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնաժողովում քննարկվում էր ցեղասպանության բանաձեւը: Ճճմարիտ ուղի կուսակցության առաջնորդ Չիլերը որպես հակազդեցություն առաջարկում էր արտաքսել Թուրքիայում աշխատող Հայաստանի քաղաքացիներին:

Չիլերի առաջարկը որոշ շրջանակների կողմից արժանացել է հավանության, իսկ ոմանք էլ այն համարել են գռեհկություն: Շատ հետաքրքիր էր այն տեղեկատվությունը, որ նրանց թիվը կազմում է 30 հազար (տեղյակ չենք, թե արդյո՞ք նա նկատի ուներ նաեւ Թուրքիայի քաղաքացի հայերին): Թանու Չիլերը չհայտնեց տեղեկատվության աղբյուրը:

Քանի դեռ մտորում են, թե ինչ է լինելու ապօրինի աշխատողների ճակատագիրը, հետաքրքրական է նաև այդ աշխատողների իրական թվաքանակը: Մինչ 2006 թվականը «հայաստանցի ապօրինի աշխատողների խնդիրը» բավական քիչ էր օրակարգ բերվում: Խնդիրը դարձյալ օրակարգ մտավ 2006 թվականի հոկտեմբերի 12-ին, Ֆրանսիայի ազգային ժողովի կողմից Ցեղասպանության բանաձևի ընդունումից անմիջապես հետո:

2006 թվականին «արտաքսելու հարցը» առաջին օրակարգ բերեց Ժողովրդահանրապետական կուսակցության պատգամավոր Շյուքրու Էլեքդադը: Նա Թուրքիայի ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) 2006 թվականի հոկտեմբերի 17-ի նիստին իր ելույթում ասաց. «Հարգարժան ընկերներ, այսպես կոչված հայոց ցեղասպանության ժխտումը դատապարտող օրինագիծը, որը նախատեսում է բանտարկություն և դրամական տուգանք, ըստ ամենայնի հիմարություն է, անտրամաբանական և կրում է ժողովրդավարական արժեքները խաթարող բնույթ: Իմ կարծիքով այս օրինագիծը խոչընդոտելու համար ամենաազդեցիկ միջոցներից մեկը Հայաստանի դեմ սանկցիա կիրառելն է: Թուրքիան պետք է ապօրինի աշխատող 70 հազար հայաստանցիներին ուղարկի իրենց երկիր»:

Այսպիսով, ապօրինի աշխատող հայերի թիվը 30 հազարից թռավ 70 հազարի, սակայն ոչ ոք չհայտնեց այդ տեղեկատվության աղբյուրը:

Էլեքդադի այս կարծիքին համամիտ էր նախկին դեսպան, Արդարություն և զարգացում կուսակցության Դյուզլեի պատգամավոր և ԹԱՄԺ-ի ԵՄ ինտեգրման հարցերի հանձնաժողովի նախագահ Յաշար Յաքըշը: Նա 2007 թվականի նոյեմբերի 9-ին Թուրքիայում ապրող Հայաստանի քաղաքացիների առնչությամբ նույն առաջարկությունն արեց և պահանջեց ապօրինի աշխատող 70 հազար հայերին հետ ուղարկել Հայաստան: Դյուզլեի Արդյունաբերողների և գործարարների միության կողմից Թաշը հյուրանոցում կազմակերպված «2006 թվական, Դյուզլեն և տնտեսությունը» թեմայով քննարկմանը մասնակցող Յաքըշը խոսեց հետեյալ կերպ. «Թուրքիայում ապօրինի աշխատում է 70 հազար հայ: Հիմա եթե թուրքական իշխանությունները կիրառեն օրենքները և ասեն՝ «ապօրինի և աշխատում, չես կարող աշխատել», նրանք կհայտնվեն անելանելի վիճակում: Եթե Թուրքիայում ապօրինի աշխատող հայերը հետ ուղարկվեն, Հայաստանը դժվար կացության մեջ կընկնի: Հիմա կասեք, թե սխալը թույլ է տվել Ֆրանսիան, սակայն պատժվում է Հայաստանը, բայց Հայաստանն էլ պետք է գիտակցի իր պատասխանատվությունը»:

Խնդիրը սկսեց քննարկվել մտավորականների և գրողների կողմից

Մուրադ Բերիթոյուն 2006 թվականի հոկտեմբերի 22-ին իր հոդվածում գրեց հետեյալը. «Ալե Ալաթլի, Գյունդուգ Աքթանի և Շյուքրու Էլեքդադի նման՝ նախկին դեսպանները պահանջում են ձեռնարկել ամենախիստ միջոցները... Բանը կհասնի այնտեղ, որ բոլոր հայերը կհարձակվեն ու կասեն, թե՛ «վախենում եմ Թուրքիայից»: Եթե չեմ սխալվում, Շյուքրու Էլեքդադն անսպասելիորեն Թուրքիայում ապրող հայերի (Թուրքիայի քաղաքացի չհամարվող) թվաքանակը 30 հազարից հասցրեց 70 հազարի: Բոլորը սկսեցին շրջանառել այս թիվը: Հետաքրքիր է, արդյոք այդպիսի պաշտո-

նական տվյալ կա՝ Արդյո՞ք դա լեզվի սայթաքում էր, թե՞ դա ուղերձ էր Արեւմուտքին: Այդ տողերի արանքում ասվում է, որ արտաքսում ենք ոչ միայն Հայաստանի քաղաքացիներին, այլև Թուրքիայի քաղաքացի հայերին նույնպես: Գիտեմ, կարող եք ասել, որ ընդհանուր ծրագիր է, սակայն այդպես մտածում են քչերը»:

Քաղիր Դիքքաշը 2006 թվականի հոկտեմբերի 13-ին լույս տեսած՝ «Հայ ապօրինի աշխատողների հիշեցրածները» վերտառությամբ «Չաման» օրաթերթի հոդվածում փորձում է խնդիրը ներկայացնել տարբեր տեսանկյուններից:

«...Ֆրանսիան պնդում է թշնամաբար: Օրինագիծը երեկ խորհրդարանում հաստատվեց: Հաջորդը սենատն է: Այժմ Թուրքիան քննարկում է, թե ինչ միջոցներ կարող է ձեռնարկել դրա դեմ: Քննարկվող տարբերակներից մեկն էլ Թուրքիայում ապօրինի աշխատող մոտ 40-ից 70 հազար համարվող Հայաստանի քաղաքացիներին երկրից արտաքսելու հարցն է: Մինչ այժմ չքննարկված այս հարցն օրակարգ մտավ՝ Ֆրանսիայի խորհրդարանի կողմից «ցեղասպանություն չի եղել» ասողներին մեղադրելու վերաբերյալ օրինագծի ընդունմանը զուգընթաց: Դժվար է հասկանալ, թե ինչու աչք փակեցին ապօրինի աշխատողների վրա, եւ ինչու ոչ մի պայքար չեղավ դրա դեմ, եւ դա այն պարագայում, երբ Հայաստանը եւ Ֆրանսիան թեկուզեւ քաղաքական նկատառումներով՝ թուրքերին անվանում են «ցեղասպան» եւ այդ ուղղությամբ վարում են հատուկ քաղաքականություն»:

Անահիտ Հազարյանն էլ փորձեց խնդիրն մոտենալ այլ տեսանկյունից. «Սոցիալիստական ռեժիմի փլուզմանը զուգընթաց՝ աշխարհում ժամանակակից ստրկական վիճակում հայտնված ժողովուրդներից մեկի՝ Հայաստանի եւ հայերի համար աշխատանքի եւ կերակրի հույսի հիմնական վայրը վերջին տարիներին հանդիսանում է Թուրքիան: Այսպիսով, ճնշված տեղացիներին (Թուրքիայի քաղաքացի հայերին) ավելանում են նաեւ 50 եւ 60 հազար հայաստանցի հայերը:

Թուրքական պետությունը, որը կասկածանքով է վերաբերվում իր երկրի քաղաքացիներ հանդիսացող հայերին, հայտնվում է հայաստանցի աղքատ հայերի ներկայության փաստի առաջ: Հայաստանցի աղքատը, ինչպես բոլոր սոցիալիստական երկրների ժողովուրդները, ստրուկի կարգավիճակում հայտնվելուն եւ ամեն պահի արտաքսվելու վտանգին զուգընթաց՝ ստիպված է դիմանալ նաեւ հետեւյալ արտահայտություններին. «Մեզ մեղադրում եք ցեղասպանություն գործելու մեջ, բայց մենք ձեզ սիրահոժար ընդունում ենք»:

ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի 2007 թվականի հոկտեմբերի 10-ի նիստում, 2007 թվականի հոկտեմբերի 30-ին Կալիֆոռնիայի սենատոր պարոն Շիֆֆի եւ նրա ընկերների ներկայացրած օրենսդրական առաջարկը (Հայոց ցեղասպանության) 21 դեմ եւ 27 կողմ քվեներով ընդունվեց: Ամեն անգամ նման բանաձեւերի ընդունումից հետո անմիջապես օրակարգ է բերվում այս հարցը. «Ի՞նչ անենք ապօրինի աշխատող հայաստանցիներին»:

Այս անգամ առաջինը հարցին անդրադարձավ դոկտոր, պրոֆեսոր Քեմալ Չիչեքը. «Հայոց ցեղասպանության» պնդմանն իրենք առաջարկեցին լուծման սահմանափակ մոդել: 2007 թվականի հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, «Չաման» օրաթերթում տպագրված նյութում առաջարկվող «լուծման» ամենաչարագործ մասը հետեւյալ կերպ էր արտահայտվում. «Այդ դեպքում, որպեսզի կարճ ժամկետում կանխվի հայկա-

կան օրինագիծը ներկայացուցիչների պալատի օրակարգ մտցնելու գործընթացը, պետք է միջոցառումներ ձեռնարկվեն ո՛չ թե Թուրքիայի, այլև Հայաստանի եւ Սփյուռքի հայերի դեմ: Հայաստանից աշխատելու նպատակով Թուրքիա եկած ապօրինի աշխատողներն անմիջապես պետք է արտաքսվեն երկրից: Այս քայլը Հայաստանում ապրող հայերին կստիպի հակադրվել Սփյուռքին, եւ նրանց միջեւ հակասությունը գնալով կմեծանա»:

Այս ընթացքում հայ ապօրինի աշխատողների խնդիրն օրակարգ չբերվեց, սակայն Հասան Քանբուրաթի 2007 թվականի հոկտեմբերի 9-ին լույս տեսած հոդվածում այդ հարցին անդրադարձ եւ նպատակաուղղվածություն նկատվում է. «Չնայած Հայաստանի բացասական պահվածքին, Թուրքիան թույլատրում է կազմակերպել ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ Սեւ ծովի շրջանով, Վրաստանի տարածքով՝ դեպի Հայաստան: Հայաստանին թույլատրվում է օգտագործել Տրապիզոնի նավահանգիստը՝ արտահանումներ եւ ներկրումներ իրականացնելու նպատակով: 2002 թվականի հոկտեմբերի 10-ին Թուրքիան հանեց վիզային խստացված ռեժիմը: Թուրքիայում աչք են փակում մոտ 100 հազար ապօրինի աշխատող հայաստանցիների գործողությունների վրա»:

«Հայաստանցի ապօրինի աշխատողների» խնդիրը չափազանց կարեւորվում է եւ Թուրքիայիում հանդիսանում է լուրջ քննարկման առարկա: Դա չի դիտարկվում որպես առաջին հերթին երկրի ներքին «օտարերկրյա ապօրինի աշխատողների» խնդիր: Հարցը վերջին տարիներին բավական քաղաքականացվել է, եւ եթե նույնիսկ հստակեցվեն խնդրի լուծման ճանապարհները, միեւնույն է, այն դիտարկվում է որպես Հայաստանի հետ հարաբերություններում մի ժեստ: «Հայաստանցի ապօրինի աշխատողների» խնդիրը հիմնականում օրակարգ է բերվում այն ժամանակ, երբ օտարերկրյա խորհրդարաններում քննարկվում է Հայոց ցեղասպանության օրինագիծ. «Արտաքսե՞նք 30 հազար հայերին, բայց չե՞ որ 70 հազար խեղճ աղքատ հայերը ոչ մի կապ չունեն: Նրանք բարեխիղճ կերպով աշխատում են»:

Քանի որ «հայաստանցի ապօրինի աշխատողների» խնդիրը դեռեւս մանրամասն չի ուսումնասիրվել, գտնվում է բավական ցավոտ մի գործընթացում: Սա, ինչպես նախկինում, ավելի շատ ոչ թե ապօրինի աշխատուժի խնդիր է, այլ քաղաքական մի ժեստ է, կամ էլ ներկայացվում է որպես մեծահոգություն: Անհրաժեշտության դեպքում օգտագործվում է նաեւ որպես խաղաքար: Ապօրինի աշխատողների թվաքանակի հստակ չիմանալը կամ էլ այն չբացահայտելը, ինչպես նաեւ ծագումով հայ Թուրքիայի քաղաքացիներին գիտակցաբար կամ էլ անգիտակցաբար այդ թվաքանակի մեջ ներառելն անհանգստացնում է հայ հասարակայնությանը:

Վերջիհան ՁԻՖԼԻՕՂԼՈՒ

Անգլերեն լեզվով հրատարակվող *Hurriyet Daily News* եւ *Economic Review* պարբերականների թղթակիցն է 2007-ից: Նա 10 տարի (1998-2007 թթ.) աշխատել է թուրքերենով հրատարակվող «Յյուրիեթ»-ում: Մինչ այդ թղթակցել է Ստամբուլում հրատարակվող հայկական «Մարմարա», «Ժամանակ», «Ակոս» եւ «Նոր Սան» պարբերականներին: Գրում է արտասահմանյան քաղաքական խնդիրների, մասնավորապես թուրք-հայկական հարաբերությունների մասին: 2008-ին Վերջիհան Ձիֆլիօղլուն արժանացել է Շվեդական ինստիտուտի՝ Աննա Լինդ հիմնադրամի «Մշակութային երկխոսություն» մրցանակին: 2009-ին Հայաստան-Թուրքիա հարաբերություններին նվիրված հրապարակման համար Վերջիհանին շնորհվել է նաեւ Անկարայի Ժամանակակից լրագրողների ասոցիացիայի «2008 թվականի լավագույն ռեպորտաժի համար» մրցանակը:

ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ Է ՓՇԱԼԱՐԵ ՑԱՆԿԱՊԱՏԸ

ԵՐԵՎԱՆ: Չնայած նախագահ Գյուլի երեսնյան այցից հետո վերջին ամիսներին սկզբնավորվող դիվանագիտական հարաբերություններին, Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանը շարունակում է փակ մնալ: Մարդիկ, ովքեր հիշում են, թե ինչպես էին ժամանակին նախաճաշում Թուրքիայում, իսկ ճաշում՝ Հայաստանում, այժմ բախվում են փշալարե ցանկապատին:

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կա մի լիճ, որը բաժանում է երկու երկրները: Հայերն այն կոչում են Ախուրյան, իսկ թուրքերը՝ Արփաչայ: Լիճը շատ հարուստ է ձկներով: Ո՛չ հայերը, ո՛չ էլ թուրքերը, սակայն, չեն կարող ձուկ որսալ այդտեղ: Լճից ընդամենը 20 րոպեում հասնում ես փշալարին, որը երկու մասի է բաժանում երկաթուղին:

Սա Հայաստանի եւ Թուրքիայի միջով անցնող խոշոր երկաթուղու մի հատվածն է սուկ: Լճի հյուսիսում գտնվող Հայկաձոր գյուղի մոտքը վերահսկում են ռուս եւ հայ զինվորները: Խստորեն հսկվում է գյուղի սահմանը: Շարքային հային արգելված է մտնել գյուղի եկեղեցի՝ անգամ կիրակնօրյա արարողություններին մասնակցելու համար: Գրանց մասնակցելու միակ ուղին գյուղ մտնելու հատուկ թույլտվություն ստանալն է:

Մեքենայով, որի դեկին պարոն Սուրենն էր, արեւածագից առաջ ուղեորվեցինք դեպի Գյումրի՝ Թուրքիայի հետ սահմանին մոտակա կետը եւ Հայաստանի՝ մեծությամբ երկրորդ քաղաքը: Ամբողջ ընթացքում խոսում էինք պարոն Սուրենի հետ, իսկ ժամանակ առ ժամանակ կանգնում էինք՝ զրուցելու գյուղացիների հետ: Գյուղացիների 90 տոկոսն ասում էր, որ 1915 թվականի իրադարձությունների ժամանակ հայերն

Անատոլիայի տարբեր քաղաքներից ու ավաններից, հատկապես Կարսից՝ փախել են Հայաստան, որն այն ժամանակ Ռուսաստանի իշխանության տակ էր:

Նրանք խոսում են Անատոլիայի բարբառով: Յուրաքանչյուր գյուղն ունի իր սեփական բարբառը: Դրա հետեանքով հարեան գյուղերի բնակիչները երբեմն դժվարությամբ են հասկանում միմյանց: Գյուղերը, ինչպես եւ գյուղացիները գրեթե ոչնչով չեն տարբերվում տիպիկ անատոլիական գյուղերից ու գյուղացիներից: Իրենց նոր բնակավայրերը նրանք անվանել են անատոլիական այն քաղաքների ու ավանների անուններով, որտեղից եկել են: Գրեթե բոլոր գյուղացիները հասկանում են թուրքերեն, անգամ եթե չեն խոսում:

Եկեղեցիների պահպանությունը

Այս գյուղերի համար մեծ հիմնախնդիր է կանոնավոր ջրամատակարարումը: Թեև Երեւան՝ Հայաստանի խիստ ժամանակակից ու եվրոպական արտաքինով մայրաքաղաք այստեղից կարելի է հասնել ընդամենը 40 րոպեում, այս գյուղերում դեռես չկան ջրամատակարարման խողովակաշարեր: Գյուղերում մեծ բարդություններ են առաջանում նաեւ ձնռանը, երբ ջերմաստիճանն իջնում է մինչեւ -40: Ջեռուցումը նույնքան մեծ հիմնախնդիր է, որքան ջրամատակարարումը:

Երեւանից Գյումրի հասանք երկու ժամում՝ անշտապ, կանգառներով: Իսկ Գյումրիում Hurriyet Daily News-ի առաջին կանգառը լրագրողների «Ասպարեզ» ակումբն էր: Առանց հապաղելու ակումբի նախագահ Լեոն Բարսեղյանի հետ շարունակեցինք ճանապարհը դեպի սահմանը: Ճանապարհին Բարսեղյանը մեզ ծանոթացնում էր քաղաքին: Բարսեղյանն ասաց, թե Գյումրիի ու Կարսի փողոցներն ու տները նման են իրար. «Հայերը Կարսից եկան Գյումրի՝ իրենց հետ այս քաղաք բերելով սեփական ոճը»:

Բարսեղյանի պապը ծնունդով Կարսից էր: Մինչեւ սահմանի փակումը նրանք հաճախ գնում էին Կարսում նախաճաշելու ու վերադառնում էին Գյումրիում ճաշելու: Բարսեղյանի խոսքով, խորհրդային կառավարությունը պահանջում էր քանդել Գյումրիի եկեղեցիները, բայց մարդիկ խելամտորեն բարձրահարկ շենքեր էին կառուցում եկեղեցիների շուրջը՝ դրանք թաքցնելով բակերում: Այս եղանակով նրանք բազմաթիվ հազարամյա եկեղեցիներ են փրկել ոչնչացումից: Իսկ երբ Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունն անկախացավ, այդ շենքերը քանդվեցին, ու եկեղեցիները կրկին տեսանելի դարձան:

Խորհրդային տարիներին Գյումրին կոչվում էր Լենինական՝ ի պատիվ Լենինի: Բարսեղյանն ասաց, որ մարդիկ այժմ երկու անուններն էլ գործածում են: Դեռես տեսանելի են 1988-ի երկրաշարժի հետքերը:

Ի վերջո, Բարսեղյանի ուղեկցությամբ մոտեցանք Թուրքիայի սահմանին:

Փշալարին մոտենալիս Բարսեղյանը զգուշացրեց, որ թաքցնենք մեր լուսանկարչական եւ կինոխցիկները: Մի քանի րոպեից կտրեցինք ճանապարհն ու քայլեցինք երկաթուղու երկայնքով, որը շարունակվում էր արդեն Թուրքիայի տարածքում: Հասանք երկու երկրների միջեւ սահմանին, եւ ես, Հայաստան մեկշաբաթյա այցիս ավարտին, խիտ փշալարերի միջով նայեցի հայրենի երկրիս:

Կովկասյան գինի

Երևան: Կովկասյան պանիր արտադրելուց հետո հայ գործարարն ու խաղաղության ջատագովը ծրագրում է ամբողջ տարածաշրջանում աճող խաղողից ստանալ կատարյալ կովկասյան գինի: Նրա համոզմամբ, լավ սնունդը ախորժակ է բացում, որը երկար ճանապարհ անցնելուց հետո առաջացնում է նաև խաղաղության ախորժակ:

Թուրքիայի, Ադրբեջանի եւ Հայաստանի խաղողի այգիների բերքը համաստեղ մշակումից հետո դառնալու է կատարյալ կովկասյան գինի, որը կլինի Կովկասով մեկ սփռված մի խումբ գործարարների վերջին ջանքերի արդյունքը:

Նախաձեռնությունը հնչեցվեց ընդամենը մի քանի ամիս այն բանից հետո, երբ նույն գործարարներն արտադրեցին առաջին կովկասյան պանիրը՝ Վրաստանի, Թուրքիայի եւ Հայաստանի միացյալ ապրանքանիշով:

Անցյալ մայիսին թուրքերեն, հայերեն եւ վրացերեն պիտակներով վաճառքի հանված պանրի արտադրման գաղափարը Հակամարտությունների լուծման ոչ ավանդական մեթոդների կենտրոնինը եւ դրա հիմնադիր նախագահ Արտուշ Մկրտչյանինն է:

Մկրտչյանը Hurriyet Daily News-ին եւ Economic Review-ին պատմեց իր առաջիկա ծրագրերի մասին:

«Պանրային դիվանագիտություն» անվանումը ստացած ջանքը սկիզբ դրեց մի շարք այլ գործողությունների, որոնք նշանակալիորեն խթանեցին փոխադարձ կապը երկու պետությունների միջև:

Նախագահ Աբդուլլահ Գյուլի՝ սեպտեմբերի 6-ի այցը Հայաստանի մայրաքաղաք՝ դիտելու Հայաստանի եւ Թուրքիայի ազգային հավաքականների ֆուտբոլային հանդիպումը, եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարի՝ այդ շաբաթ կայացած այցը Ստամբուլ՝ մասնակցելու Սեւծովյան տնտեսական համաժողովին, սուկ առավել տեսանելի դրսևորումներն էին վերջին շրջանում երկու հարեան երկրների միջև հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերի:

Գյուլի այցը, թերեւս, արդյունք էր դիվանագետների կողմից տարիներ շարունակ կատարված աշխատանքի, բայց կարող են գտնվել մարդիկ, ովքեր կասեն, որ այն տեղի ունեցավ կովկասյան պանրի՝ շուկա մուտք գործելուց ընդամենը մի քանի ամիս հետո: Դա են արտացոլում նաև վերջին մի քանի տարիներին հաստատվող մշակութային եւ առևտրային կապերը, որոնցում առաջատար դերակատարություն ունեն գործարարներն ու արվեստի մարդիկ:

Ձեռներեցները՝ ում համար ժամանակը փող է, չեն կարող համակերպվել պաշտոնական կապերի բարելավման ձգձգման հետ, եւ վրացի, հայ եւ թուրք գործընկերները որոշել են չսպասել:

Կովկասյան պանրի՝ վաճառասեղաններին հայտնվելուց անմիջապես հետո Մկրտչյանը սկսեց աշխատել գինու մի տեսակի արտադրմանն ուղղությամբ, որը դեռևս անուն չունի: Օգտագործելով Ադրբեջանի, Թուրքիայի եւ Հայաստանի խաղողի այգիներում աճեցված բերքը, նա մեկ շում հավաքեց ադրբեջանական, թուրքական եւ հայկական խաղողի համերը: Գինին շուկայում կհայտնվի մի քանի ամսից՝ երեք լեզվով տպագրված պիտակով:

Մկրտչյանն ասում է, որ գինու արտադրությանն իրեն մղել է Աստվածաշունչը: «Աստծո խոսքը խաղողի եւ գինու մեջ է: Իմ սիրտը բարեկամության ու խաղաղության կողմն է», - ասում է նա:

Մկրտչյանն արդեն աշխատում է նոր աղանդերի ստեղծման ուղղությամբ, որը ստացվելու է կովկասյան երկրների մրգերից: Այդ նախագիծը նա կսկսի իրականացնել շուկայում կովկասյան գինու հայտնվելուց անմիջապես հետո:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐՆ ԱՐՎԵԼ ԵՆ 1995-ԻՆ

ԵՐԵՎԱՆ: Հայաստանի ու Թուրքիայի միջև հաշտեցման գործընթացը սկսվել է նախագահի Գյուլի՝ երեսանյան այցից շատ առաջ. առաջին քայլերն արվել են Փարիզում, 1995-ին, Հայկական Սփյուռքի հետազոտական կենտրոնի եւ «Թուրք-հայկական ժողովրդավարական երկխոսություն» շարժման կողմից:

Տարիներ շարունակ որոշ հայ եւ թուրք անհատներ կենսական դերակատարություն են ունեցել երկու հասարակությունների միջև իրենց քարքարոտ անցյալի շուրջ հաշտության հասնելուն ուղղված երկխոսություն խթանելու հարցում:

Բաֆֆի Հերմոնը մեկն է այն անհատներից, ովքեր 1995-ից ի վեր մեծ ջանքեր են գործադրել միմյանց նկատմամբ օտարացած ժողովուրդների միջև կապերն ընդլայնելու ուղղությամբ: Հերմոնի խոսքով, ինքը Թուրքիայի լրագրողների միությունում 1970-ականների վերջին գրանցված՝ հայկական ծագում ունեցող միակ լրագրողն է: Նա Ֆրանսիայում հաստատվել է 1980 թվականի ռազմական հեղաշրջումից անմիջապես առաջ, բայց շարունակում է փայփայել իր երազանքը, որ, չնայած անցյալի բոլոր ողբերգություններին, թուրքերն ու հայերը մի օր կրկին բարեկամներ կդառնան:

Նա առաջատար դերակատարություն է ունեցել Ֆրանսիայում տեղ գտած սոցիալական զարգացումներում՝ ուղղված այդպիսի երկխոսություն խթանելուն, մասնավորապես՝ Հայկական Սփյուռքի հետազոտական կենտրոնի (Centre de Recherche sur la Diaspora Armenienne) եւ «Թուրք-հայկական ժողովրդավարական երկխոսություն» շարժման հիմնադրման գործում:

Հետագայում նա միացել է Ժան Կլոդ Քեբաբչյանին, ում անունը հայտնի է Ֆրանսիայում 1968 թվականի շարժումից: Հերմոնը Hurriyet Daily News-ին եւ Economic Review-ին պատմեց վերջին 12 տարիների իր գործունեության մասին. «90-ականների կեսերից մենք նախաձեռնեցինք «Թուրք-հայկական ժողովրդավարական երկխոսություն» շարժումը, կազմակերպություն, որը [նախկին նախագահ] Ժակ Շիրակն անվանեց «ժողովրդի դիվանագիտություն»:

Հայաստանն ընդդեմ Սփյուռքի

Քերարչյանն ու Հերմոնը կարողացան բազմաթիվ թուրք մտավորականների, մասնավորապես «Բելջե» հրատարակչության հիմնադիրներից Այզենուրին ու Ռաջիպ Ջարակոլեին ներկայացնել ֆրանսահայ Սփյուռքին: Այդուհանդերձ, ոչ բոլոր քայլերը հասան հաջողության, ու նրանք բազմաթիվ դժվարությունների բախվեցին երկխոսությունը սկսելուն ուղղված իրենց փորձերում:

Դրանցից մեկը Թուրք-հայկական երկխոսության կոնգրեսը կյանքի կոչելն էր 2000 թվականին, երբ Ֆրանսիայի խորհրդարանը քննարկում էր Յեղասպանության վերաբերյալ հայկական պնդումները ճանաչելու հարցը: «Ֆրանսահայերը սկսեցին ճնշում գործադրել Հայաստանի վրա, որպեսզի [կոնգրեսի] մասնակիցներին ելքի արտոնագրեր չտրվեն: Ճնշում էր գործադրվում նաև Երեւանում Ֆրանսիայի հյուպատոսի վրա, որպեսզի վերջինս նրանց ելքի արտոնագրեր չտրամադրեր», - ասաց Հերմոնը:

Նա ասաց, որ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ու արտգործնախարար Վարդան Օսկանյանն այն ժամանակ անսպասելի հայտարարությամբ հանդես եկան: Քոչարյանն ու Օսկանյանը հայտարարեցին, թե թուրք-հայկական երկխոսությանն աջակցող ցանկացած ջանք օգտակար է. «Թող հայ երիտասարդները զբաղվեն դրանով, դա որեւէ վնաս չի տա»:

Արգելված գիրքը

Հերմոնի խոսքով, դա առաջին քայլն էր թուրք-հայկական հաշտեցման վերջին զարգացումներում: «Կոնգրեսը տեղի ունեցավ Ֆրանսիայի սենատի դահլիճներից մեկում: Մասնակիցների թվում էին Ժիրայր Լիպարիտյանը՝ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի խորհրդականը, ինչպես նաև Երեւանի Յեղասպանության թանգարանի նախկին տնօրեն Լավրենտի Բարսեղյանը: Նրանք նախագահությունում նստած էին թուրք մտավորականների կողքին»:

Հերմոնի կյանքի ընթացքը փոխեց 1994-ին Թուրքիայից ստացած հեռախոսագանգը: Ջանգահարողը Պարս Թյուգլասին էր՝ հայկական ծագում ունեցող մի թուրք, որը պատմեց շուտով Թուրքիայում լույս տեսնելիք՝ հայկական հարցի նկատմամբ ոչ ավանդական մոտեցումներով մի գրքի մասին:

Իվ Թերմոնի Ermeni Tabusu («Հայկական տաբու») գիրքը հրատարակեց «Բելջե» հրատարակչությունը: «Չհավատացի ականջներիս, երբ լսեցի, որ նման աշխատություն է հրատարակվել», - ասաց Հերմոնը:

Մեկ ամիս չանցած՝ Հերմոնն իմացավ, որ Ջարակոլու ամուսինները հետապնդվում են, իսկ հրատարակչության շենքը պայթեցվել է: Հերմոնը որոշեց գործել. նա մի փաստաթուղթ պատրաստեց Ջարակոլու ամուսինների հետ պատահածի վերաբերյալ եւ այն ներկայացրեց մի շարք ֆրանսիական հաստատությունների: Հերմոնի խոսքով, 16 հաստատություններ՝ այդ թվում Ֆրանսիայի նախկին նախագահ Ֆրանսուա Միտերանի տիկնոջ՝ Դանիել Միտերանի հիմնադրած France Liberte-ն, հաստատեցին փաստաթուղթը: Ջարակոլու ամուսիններին ներկայացված մեղադրանքը վերանայելու

խնդրանքով փաստաթուղթը հանձնվեց այն ժամանակ Թուրքիայի վարչապետ Թան-սու Չիլերին՝ վերջինիս փարիզյան այցի ընթացքում:

«Հայերի համար «լավ թուրք» գոյություն չունի, այնուամենայնիվ, ես ներկայացնում էի մի թուրքի, ով մեզ համար վտանգել էր իր կյանքը», - ասաց Հերմոնը: Նրա խոսքով, իրենք Ջարակոլու ամուսիններին հրավիրել էին 1915 թվականի իրադարձությունների 80-րդ տարելիցին, եւ «անգամ դաշնակցականները չէին առարկել»:

Հերմոնն ամփոփեց հարցին նվիրած իր 12 տարիները. «Ես գիտակցաբար երկխոսության կոչը հնչեցրեցի Ֆրանսիայից: Գործում էի Ֆրանսիայի միջոցով, ինչը խիստ կարեւոր էր: Այլսպես, շատ ավելի մեծ բարդությունների առաջ կկանգնեի: Այդ ընթացքում բազմաթիվ սպառնալիքներ եմ ստացել: Հայկական Սփյուռքը պնդում էր, թե չի կարող լինել «լավ թուրք»: Բայց նրանք սխալվում էին»:

Նագեհան ԱԼՁԸ

«Ակշամ» օրաթերթում մշտական խորագիր է վարում: Քաղաքագիտություն եւ միջազգային հարաբերություններ է ուսանել Ստամբուլի «Բոսֆորում» համալսարանում: Նագեհանը «Ակշամ»-ում հանդես է գալիս շաբաթական երեք սյունակով, ունի նաեւ հարցազրույցի էջ, որտեղ հյուրընկալում է քաղաքական հայտնի գործիչների եւ գիտնականների: Ներկայումս զբաղվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերով:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՁԵԶ՝ ՋԱՆԱՆ ԱՐԸԹՄԱՆ

Արամը Երեւանում փոքրիկ մի բար է աշխատեցնում: Երբ նայում ես դրսի աչքով, նա կարծես «ռոքեր» լինի: Արեւմտյան կեցվածքով երիտասարդ է. յուրահատուկ հագուկապով, ձեռքին մատանիներ եւ գարեջրի գավաթ, որը երբեք վայր չի դնում: Երբ սկսում ես խոսել հետը, հասկանում ես, որ եվրոպացի իր նմանների համեմատ՝ բոլորովին այլ աշխարհից է եկել:

* * *

Արամը ծնվել է Բեյրութում: Ընտանիքը թուրքերից փախչելով՝ բնակություն է հաստատել Լիբանանում: Սակայն այնտեղ չեն կարողացել ստեղծել իրենց ուզած պայմանները եւ տեղափոխվել են Ֆրանսիա: Տասը տարի էլ սպրել է Փարիզում: Այդպես, կյանքի 28 տարիների ընթացքում շարունակ նամակներ է գրել աշխարհի տարբեր վայրերում ապրող իր հարազատներին՝ թերի հայերենով եւ հետագայում սովորած անգլերենով...

* * *

Նամակների հիմնական թեման եղել է իր ձեռքի մատանին: Իր պապին պատկանած արծաթե մի մատանի: Արամի պապին 1915 թվականին Հաթայի իր տնից ստիպողաբար տարել են: Այլեւս հետ չի վերադարձել, սակայն ինչ-որ ճանապարհով տարիներ հետո իր մատի մատանին փոխանցել է կնոջը: Նա էլ մատանին տվել է որդուն: Այդ մատանին արդեն երեք սերունդ փոխանցվում է ընտանիքի տղամարդկանց: Մատանին այժմ Արամի մատին է, սակայն ոչ որ չգիտի, թե որտեղ եւ ինչպես է մահացել մատանու տերը՝ պապը...

* * *

Գիտեմ, ձեզանից ոմանք հարցնում են. «Լավ, բա մերոնցի՞ց մահացածների պատմությունները: Ինչո՞ւ այդ մասին չես պատմում...»: Ինչ որ է, իմ վիշտը «նրանցը» չէ...: Նրանցից կամ մերոնցից ոմանց սիրտն այս հողերում ժամանակին շատ է վառվել, վառված սրտերի պատճառով բավական շատ մարդիկ տարբեր կողմեր են սիռվել: Խառնաշփոթ է եղել: Մարդիկ փոխել են իրենց անձնագրերը: Միգուցե փոր-

ձել են փոխել նաև իրենց լեզուն և կրոնը, բայց վերջիվերջո այդպես էլ լիովին չեն կարողացել...

* * *

Սա բացատրելը կարևոր է: Շատ ավելի ճիշտ կլինի ցույց տալ, որ այս ամենը երկու կողմերի հետ էլ պատահել է: Գիտեմ, որ հնարավոր է հասկանալ պատմությունների ցավալի իրողությունը և տեսնել, որ այդ ցավը միակողմանի չի եղել: Հասկանալու ճանապարհը փոխադարձ շփումներն են...

* * *

Երեսնամյա ինձ հանդիպած մարդիկ, լսածս պատմությունները, երաժշտությունը, ամեն ինչ «մերի» նման էր: Իրենք իրենց «ազգայնական» համարող և մեր հանդիպման առաջին պահին՝ անգամ ինձ հետ միեկնույն սեղանին նստել չցանկացող մարդիկ մի քանի թույլ գրուցելուց հետո ընկերանում էին: Հասկացա, որ երբ քաղաքականությունը մեջտեղից հանում ենք, համարյա մերկ ենք մնում: Հենց այդ մերկությունն է, որ բացահայտում է մեր նմանությունները:

* * *

Բայց մենք դա չգիտենք: Եվ քանի որ չգիտենք, երբեք չենք հասկանում այն պատմությունները, որոնց գլխավոր դերակատարները փոխված են ներկայացվում երկու կողմերում: Ինչքան չլինի, միմյանց հանդեպ թշնամանքով դաստիարակված սերունդների պտուղներն ենք բոլորս: Դա է պատճառը, որ դուք նույնպես իրավացի եք: Մեզ համոզում են, որ եթե ծնված օրից չորս կողմից մեր գլուխները լցրած քարոզներից բացի որեւէ այլ բան լսենք, պետք է վախենանք և անցնենք պաշտպանության:

* * *

Այդ պատճառով, անցած շաբաթ այս երկրում տեղի ունեցած զարգացումները ես դնում եմ «հայ» վերտառության ներքո և որակում որպես «պայմանների բախում»: Եվ քանի դեռ այդպես է, ես սա նվիրում եմ Ձեզ, պարոն Ջանան Արքթման: Դուք այն բազմաթիվ սերունդների տիպիկ ներկայացուցիչն եք, ում գլուխները լցված են միայն «մենք և մեզ համար» պատասխանատվության զգացումով: Այն, որ դուք այդպիսին եք, ձեր մեղքը չէ: Քանի որ դուք չեք ձգտել հետագա որեւէ ճշգրտման, ձեզ սաված ամեն մի արտահայտություն դրվել է համապատասխան դարակում. «հայ» բառը դուք դրել եք «թշնամի» վերտառությամբ դարակի վրա:

* * *

Մինչև այս կետը՝ պրոբլեմ չկա: Պրոբլեմն այն է, որ ձեր անունը տեղ է զբաղեցնում մի դարակում, որի վրա գրված է՝ «մտավորական»:

ԵՍ ՆՈՒՅՆՊԵՍ ՀԱՅ ԵՄ

Հրանտ Դինքի մահվան 2-րդ տարելիցին մնացել է երկու օր

«Ինձ կյանքը տրվել է այլոց արժանապատվությունը չտոնահարելու համար»:
Այս խոսքերն ասած մարդուն այս երկիրն ասիական կերպով ոտնահարեց: Փաստորեն,
մի քանի անգամ: Եվ վերջում՝ սպանեց նրան: Վերջը տվեց: Վերացրեց: Երկու տարի
է՛ Հրանտ Դինքը չկա:

* * *

Դինքին սպանողներին թվացել է, թե իրենք «տղամարդ են»: Նկատի չունեն մի-
այն ձգանը քաշողին: «Արյուն» բառով ուղեղները թմրեցնողներին եւ աշխարհը որպես
«թուրքեր» եւ «ուրիշներ» բաժանողներին նկատի ունեն:

* * *

Այս մոլորյալների խումբն ամենուր է եւ ամենքի մեջ... Երբ Դինքը մահացավ,
նրանք եւ իրենց նման վիժվածքներն իրար թիկունք էին թփթփացնում: Վայելեցին
«խսկական տղամարդկանց կարգում» դասվելու հաճույքը, եւ «ոտնատակ կանենք մեր
դեմը կտրողներին» բղավոցներով՝ հասարակության մեջ իրենք իրենց հայրենասեր
հռչակեցին:

* * *

Դինքը նրանց առանց այդ էլ վաղուց էր բացահայտել: Մի անգամ այսպես էր
ասել. «Քո անձը մյուսի գոյությամբ պայմանավորելը հիվանդություն է: Եթե անձդ սպ-
րեցնելու համար քեզ թշնամի է հարկավոր, ուրեմն քո ինքնությունը հիվանդ է»:

* * *

Այս հիվանդ անձինք մեզանից տարան մի հայրենասերի: Ավելին, իրենց անջա-
տողականությունը հանդգնեցին անվանել «հայրենասիրություն»: Նույնիսկ՝ անամո-
թաբար հռչակով: Նողկալիորեն քննադատելով...

* * *

Քամահրաբար քննադատեցին այն մարդկանց, ովքեր տխրեցին Դինքի համար:
«Թուրքեր» եւ «ուրիշներ» առանձին խմբերի պարագայում՝ «ուրիշների» մեջ հայտն-
վելու համար քննադատեցին նույնիսկ սպանության դեմ ըմբոստացողների՝ «բոլորս
հայ ենք» արտահայտությունը: Շահարկումներ արեցին: Նույնիսկ վիշտը սպանանե-
ցին: Մարդկանց տարակուսանքի մեջ գցեցին:

* * *

Երկու տարի եղավ: Անցյալ տարի այս օրերին նույն թեմայով հոդված էի գրել.
365 օր է անցել, ոչ մի լավ լուր: Սկզբնական շրջանում ընդվզում եղավ, բայց հետո,
երկու տարվա ընթացքում կրկին գլուխ բարձրացրեց արդեն իսկ սկսված անջատողա-
կանությունը, եւ սպանությունը, ցավոք, չբացահայտվեց: Կամ էլ չցանկացան բացա-
հայտել: Քանզի նրանք դեռեւս շատ են «տղամարդ»: Եվ այդ խելված էությանը

«տղամարդը» «թշնամու» կարիք ունի: Ինչեւէ, այդ թշնամին նրանց ուղեղներում է: Դրան չես կարող վերացնել...

* * *

Վերջին շրջանում հուսադրող մի քանի նշաններ կան: Հոսանքին հակառակ պարզաբանումներ: Խիզախորեն անցկացվող հարցաքննություններ: Այս երկրի վրա կան մարդիկ, ովքեր ունեն խիղճ, ողջամտություն եւ ցանկանում են լավ բաներ անել: Կան մարդիկ, ովքեր գիտեն ներողություն խնդրել եւ կարող են կրել իրենց երկրի ամոթը...

* * *

Տարվա այս ժամանակահատվածում ես նույնպես հայ եմ: Ինչպես անցած տարի, այնպես էլ հիմա, քանի դեռ մարդասպանը կամ մարդասպանները չեն ձերբակալվել, ամեն տարի նույնն է լինելու: Ով ինչ ուզում է՝ թող ասի...

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՆԱԲԱՆԵՑ ՆԵՐՈՂՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔԸ

Նախադրյալները: Հայաստանում հետաքրքիր գործընթաց է տեղի ունենում: Սովորական պայմաններում Թուրքիային ոտնատակ տալով առաջ գնացող Հայաստանում նման իրավիճակներում կյանքը սովորաբար ակտիվանում է: Շունչները պահած սպասում են, թե ներողության ստորագրահավաքն ինչպես է ազդելու հայ - թուրքական հարաբերությունների վրա:

Երեւանում մեզ հանդիպած քաղաքական գործիչները մեկ հարցում համամիտ էին. ոչ ոք չէր ցանկանում, որ սահմանների բացման գործընթացը ձգձգվի: Նույնիսկ նշում էին, որ այդ հարցում իրենց դիրքորոշումը մեղմացել է:

Այսպիսի բացահայտ մեղմացում ամենաշատը նկատվում է դաշնակցականների մեջ:

Դաշնակցություն կուսակցությունը հայտնի է նաեւ որպես հայերին Սփյուռքում ներկայացնող, սոցիալիստական խորը ավանդույթներով, ծայրահեղ ազգայնական կուսակցություն: Դա մի քաղաքական խումբ է, որը երբեք չի հրաժարվում ցեղասպանության պնդումներից եւ նախագահ Գյուլի այցի ընթացքում աչքի ընկավ կազմակերպված ցույցերով: Միաժամանակ, Դաշնակցությունն այս պահին կոալիցիոն կառավարության մաս է կազմում: Սովորաբար նրանք թուրք լրագրողների հետ չեն հանդիպում, սակայն անցած ուրբաթ երեւանյան գրասենյակում մեզ ընդունեց կուսակցության միջազգային հարցերով պատասխանատու, գլխավոր քարտուղար Կիրո Մանոյանը:

Պարզ էր, որ նրանց համար այդքան էլ հարմար ժամանակ չէր: Նրանք ան-

հանգստացած էին, որ Թուրքիայում ազգայնական ուժերը ստորագրահավաքի դեմ լուրջ պայքար էին սկսել: Նրանք վախենում էին, որ կոադարտեցվի Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սկսված երկխոսությունը, եւ սահմանը չի բացվի: Այդ պատճառով, քանի դեռ Թուրքիայում որոշակի խնդիրներ կան, նրանք թեկուզ ավելի մեղմ, բայց շարունակում են ցեղասպանության ճանաչման վերաբերյալ պնդումները:

Ընթացող զարգացումները չպետք է խոչընդոտ հանդիսանան սահմանի բացման համար

«Ներողություն եմ խնդրում» ստորագրահավաքը Դաշնակցություն կուսակցությունից Մանոյանին նույնպես անհանգստացնում է: Ընթացող զարգացումները չպետք է խոչընդոտ հանդիսանան երկխոսության եւ սահմանի բացման համար:

Ն.Ա.- Դաշնակցականները պատմությունից եկող՝ ագրեսիվ խմիջ ունեն: Կուսակցությունը հայտնի է իր խիստ տեսակետներով: Նույնիսկ ոմանք ձեր կուսակցության հիմնումը ներկայացնում են որպես Հայկական հարցի արդյունք: Այժմ Թուրքիայում սկսված ներողության ստորագրահավաքը ձեր մտածելակերպը փոխե՞լ է:

Կ.Մ.- Նախ ասեմ, որ մեր նախկին փորձերից ելնելով, մենք Թուրքիայում տեղի ունեցող զարգացումներին միշտ լուրջ ենք մոտենում: Սակայն ստորագրահավաքը մեր կարծիքով դրական է: Հասարակության մի մասը սկսել է հանդես բերել խիզախություն եւ պատմությանը երես առ երես նայել: Մի մոռացեք, որ մեր նշած պատմությունը միայն թուրքերին չի վերաբերում: Դա նաեւ մեր պատմությունն է: 1919 թվականին Օսմանյան կառավարությունն ինքը քննադատեց 1915 թվականին տեղի ունեցածը, սակայն հետագայում, որոշ քաղաքական դրդապատճառներից ելնելով, գործի դրվեց մերժման քաղաքականությունը: Եվ դա մինչ օրս շարունակվում է: Եթե Օսմանյան կառավարության բռնած ուղին շարունակվեր, այսօր ամեն բան այլ կերպ կլիներ: Ինչեւէ, հիմա դարձյալ հույս կա:

Ն.Ա.- Կարծում եմ, հույս ասելով՝ նկատի ունեք ստորագրահավաքը: Հայտարարված տեքստը ձեզ բավարարո՞ւմ է:

Կ.Մ.- Այս ստորագրահավաքի կազմակերպիչներ Բասքրն Օրանը եւ Ջենգիզ Աքթարը օտարերկրյա լրագրողներին տված հարցազրույցներում «Հայոց ցեղասպանություն» արտահայտության փոխարեն կիրառել են «մեծ ողբերգություն» արտահայտությունը: Քանի որ դա նույն իմաստով ենք հասկանում, ապա գործընթացի հետ կապված խնդիր չկա: Սակայն մենք կնախընտրեինք, որ տեքստում կիրառվեր ցեղասպանություն բառը:

Հայերին թաքցնողների երեխաները

Ն.Ա.- Եթե թուրքական կառավարությունն այդպիսի մի տեքստի տակ ստորագրեր, դա ձեզ կգոհացնե՞ր:

Կ.Մ.- Իհարկե չէր գոհացնի: Սակայն այս պահին մենք մեկ այլ բան ենք նկատել: Այդ տեքստի տակ ստորագրողները հասարակության շատ փոքր մասն են կազ-

մում: Իսկ դրա դեմ սկսված ստորագրահավաքը շատ ավելի մեծ է: Կարծես թե ստորագրել են այն թուրքերի ժառանգները, ովքեր 1915 թվականի իրադարձությունների ընթացքում հայերին թաքցրել են իրենց տներում: Հասարակության մեջ նրանց թիվը մոտավորապես այդքան է: Ինչեւէ, Հրանտ Դինքի հուղարկավորությունից հետո հարյուր հազարավոր մարդիկ էին երթի դուրս եկել: Նրանք դեռ այդ տեքստի տակ չեն ստորագրել:

Ն.Ա.- Ըստ ձեզ՝ ինչո՞ւ:

Կ.Մ.- Ազգայնականների հակազդեցությունը շատ մեծ է, այդ պատճառով: Մի-աժամանակ, ստորագրահավաքի կազմակերպիչների մեծ մասը «ցեղասպանություն» բառին հիմնականում դեմ չեն, սակայն չեն կարողանում արտահայտվել: Մենք չենք ցանկանում, որ այս վերջին շրջանի հակազդեցությունները խոչընդոտեն երկու երկրների միջև սկսված երկխոսությանը: Որպես Դաշնակցություն կուսակցություն՝ մենք կողմ ենք Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների հաստատմանը եւ սահմանների բացմանը: Այս ընթացքում ստորագրահավաքը չպետք է կազմակերպվի միակողմանի: Հայաստանում էլ մի խումբ մտավորականներ Գյուլին նամակ են գրել եւ պահանջել ճանաչել ցեղասպանությունը:

Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԿՔ) իշխանության ընթացքում առաջխաղացում է եղել:

Ն.Ա.- Այսինքն, այս շարժումը երկու կողմերն էին կազմակերպել:

Կ.Մ.- Ես այդպես չեմ ասում, սակայն երկու կողմում միանման ջանքեր են գործադրվում: Արդյունքում մենք ունենք սխալ ընկալում: Սա միակողմանի լուծելու խնդիր չէ: Դա ձեզ նույնպես վերաբերում է: Այդ պատճառով դժվարանում եմ հասկանալ Թուրքիայի վարչապետի արձագանքը: Մի կողմից պատմաբանների հանձնաժողովի մասին է խոսում, մյուս կողմից էլ ասում է՝ մենք ոչինչ չենք արել:

Ն.Ա.- Դուք նկատի ունեք, որ Էրդողանի ռեակցիան երկու երկրների հարաբերություններն ավելի՞ կրարդացնի, Թուրքիայի մեղմացող քաղաքականությունը նորից կփոխվի՞:

Կ.Մ.- Ո՛չ, Էրդողանը ստորագրահավաքի հետ կապված ելույթ ունեցավ: Մեր հարաբերություններում բոլոր դրական տեղաշարժերն արձանագրվել են Արդարություն եւ զարգացում կուսակցության իշխանության շրջանում: Մենք չենք կարծում, որ այդ պատճառով մեկ ակնթարթում կարող են լինել հետքայլեր:

Մենք Գյուլի այցելության կապակցությամբ բողոքի ակցիա չենք կազմակերպել

Ն.Ա.- Դա ձեզանից լսելն սաշեցնում է, քանի որ նախագահ Գյուլի՝ Երեւան կատարած այցի ընթացքում ցուցարարները դուք էիք:

Կ.Մ.- Այդ ցույցերը սխալ ընկալվեցին: Մենք չէինք բողոքում Գյուլի այցելության դեմ: Մենք ցույց էինք կազմակերպել, որպեսզի հայտնենք մեր պահանջների մասին: Մենք ասում էինք, որ եթե չիրականանան այցելության առաջացրած հույսերը, ավելի վատ կլինի:

Ն.Ա.- Ըստ ձեզ՝ այցելությանը հետեւած գործընթացն ինչպե՞ս զարգացավ:

Կ.Մ.- Դրական մի ժամանակահատված էր: Սակայն ստորագրահավաքը մի քիչ խառնաշփոթ առաջացրեց: Սակայն ահա Թայիի Էրդողանը հավատում է հակառակ իրավիճակին: Կարծում եմ, որ այս նախաձեռնությամբ հարաբերությունները կվտանգվեն:

Ն.Ա.- *Քաղաքական առումով դուք Սիյուքի ամենամոժեղ ձայնն եք: Վերջին զարգացումների վերաբերյալ նրանք ի՞նչ են մտածում:*

Կ.Մ.- Նախ՝ ուղղենք մի սխալ: Տարածված մի համոզմունք, կարծիք կա, որ Սիյուքը Հայաստանից շատ ավելի համառ եւ զգացմունքային է: Դա ճիշտ չէ: Շատ կարետոր է, որ թուրքերն իրենց պատմությանը նայեն երես առ երես:

Ն.Ա.- *Ինչո՞ւ: Այսօր որեւէ վտանգ եք տեսնում:*

Կ.Մ.- Իհարկե, եթե տեղի ունեցածը չի ընդունվում, ապա նույնը կրկնվելու հավանականությունը կա: Հիշեք 1993 թվականը: Չիլերը Հայաստանի վրա հարձակման ծրագիր էր մշակում: Չգիտենք, թե վաղը ինչ կլինի:

Ն.Ա.- *Ենթադրենք, որ իրոք վտանգ կա: Իրականում ես ոչ մի վտանգ չեմ տեսնում: Եթե Թուրքիան ընդունի ձեր ուզածը, ինչպե՞ս կվերանա այդ վտանգը:*

Կ.Մ.- Նայեք գերմանացիներին. նրանք սերնդե սերունդ այդ մասին են խոսել: Թուրքերի մեջ էլ տեսակետները կամաց-կամաց փոխվելու է: Մենք էլ այդպիսով մեզ ավելի ապահով ենք զգալու: Մենք միայն այդպես կարող ենք ազատվել մեր ենթագիտակցության մեջ մնացած վախից:

Ն.Ա.- *Այսինքն ցեղասպանություն բառի կիրառումը նո՞ւյնպես ավելի շատ՝ ապագայում անվտանգության երաշխիք ստանալու համար է:*

Կ.Մ.- Իհարկե, մեր պահանջն ուղղված է հանուն ներկայի եւ ապագայի: Մեր նպատակը միայն մեր խիղճը հանգստացնելը չէ:

Բերիվան ԹԱՓԱՆ

Ավարտել է Ստամբուլի «Բիլգի» համալսարանի քաղաքագիտության բաժինը:

Այժմ Haberturk Media-ի խմբագիրն է:

Մինչ այդ 5 տարի «Ջումհյուրիեթ» օրաթերթում

խմբագիր է աշխատել:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԹՈՒՐԲԻԱՎ «ԵՐԻՏԱՍԱՐԴ» ՀԱՅԱՑՔ

ԱՄՆ-ի նոր սեւամորթ նախագահ Բարաք Օբամայի դիտարժան նախընտրական արշավի կարևոր բաղադրիչներից մեկը՝ հայ համայնքին տված՝ «ցեղասպանությունը ճանաչելու» խոստումը, վերջին շրջանում Հայաստանի եւ Թուրքիայի միջև օրակարգ մտած «Նաբուկո» (Nabucco) նախագիծը եւ ցամաքային սահմանների բացումը... Այս պահին Հայաստանում համաշխարհային ճգնաժամից հետո ամենահաճախ քննարկվող թեմաները սրանք են: Հայկական քաղաքական շրջանակների պահվածքի եւ ապրիլի 24-ի հետ կապված զարգացումների կապակցությամբ Թուրքիայի հետ հարաբերությունները շարունակում են մնալ զգացմունքային:

Երբ ուսումնասիրում ես Հայաստանի արտաքին քաղաքականության անփոփոխ ուղենիշը հանդիսացող «ցեղասպանության» գործընթացը, հասկանում ես, որ հայ երիտասարդության համար ցեղասպանության խնդիրը «գլխացավանք» է: Իսկ ժողովուրդը հիմնականում հետաքրքրված է ցամաքային սահմանների բացման հարցով: Խորհրդային Միության փլուզումից հետո համատարած գործազրկության եւ տնտեսական ճգնաժամի խորանալու պատճառով հայ երիտասարդները ստիպված են լինում աշխատանք փնտրել արտերկրում:

Հայաստանի պետական վիճակագրական տվյալների համաձայն՝ գործազրկության ցուցանիշը շատ ցածր է: Մակայն դրա պատճառներից մեկն այն է, որ գործազուրկների մեծ մասը մեկնում է արտերկիր, մյուսը՝ որ գործազուրկներին չեն գրանցում: Բազմաթիվ հայ կանայք աշխատանք են փնտրում Թուրքիայում: Մեծամասամբ՝ որպես մարմնավաճառ:

Վերջին շրջանում Երեւանում եւ մայրաքաղաքից դուրս շքեղ առանձնատներ են կառուցվում սիյուռքահայերի եւ տեղացի հարուստների համար: Ըստ որում, Սիյուռքը գործազրկության նվազեցմանն ուղղված ներդրումներից խուսափում է:

Թուրքիայի, ինչպես նաեւ Հայաստան - Թուրքիա հարաբերությունների եւ տնտեսական խնդիրների հետ կապված մեր հարցերին Հայաստանում պատասխանեցին երիտասարդ գիտնականներ, ուսանողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ շարքային քաղաքացիներ:

«Ցեղասպանության հարցը ոչ թե մենք ենք օրակարգ բերում, այլ՝ Սփյուռքը»

Երեւանի պետական համալսարանի վերլուծաբան Հայկ Քոչարյանը պատմում է հետեւյալը. «Մենք առավուտից իրիկուն ցեղասպանության մասին չենք խոսում: Այդ խնդիրն օրակարգում պահողները հիմնականում արտերկրում գտնվող հայկական համայնքներն են: Ես չեմ հավատում, որ երկու երկրների հարաբերությունները կկարգավորվեն կառավարությունների ջանքերի շնորհիվ: Դա կարող է կարգավորվել միայն երկու երկրների շարքային քաղաքացիների եւ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ: Օրինակ, շատ թուրք գործարարներ գալիս են Հայաստան, բիզնես են հիմնում եւ արդյունքում՝ ընկերներ են ձեռք բերում: Այսպիսի քաղաքացիական նախաձեռնությունների շնորհիվ՝ պատմությունից եկող, սակայն այժմ մոռացված հարաբերությունները նորից ծիլ են տալիս»:

«Մենք չենք վիճում, նրանք են վիճում»

Երեւանի կենտրոնում գտնվող «Հայկական խոհանոց» կոչվող ռեստորանի տեր Արտուշ Բաբայանն իմանալով, որ եւ Թուրքիայից եւ եկել, սկսում է պատմել, խոսել Խորհրդային Միությունից հետո շուկայական տնտեսությանն անցնելու դժվարություններից: «Սովետական շրջանում մարդիկ մարդու նման էին ապրում, իսկ հիմա երիտասարդներն անգործ են», - ասում է Բաբայանը: Նրա փաստաբան որդին՝ Գարիկը, որը նոր սերնդի ներկայացուցիչ է, ժպտալով լսում է հոր խոսքերը եւ ավելացնում. «Սովետական ժամանակաշրջանում ապրած բոլոր մարդիկ այսպես են ասում: Սակայն հիմա մեզ համար ամեն ինչ նոր է, եւ մենք շատ գոհ ենք»:

Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ անվերջ շարունակվող վեճերի պատճառով Բաբայանը քաղաքական գործիչների վրա բարկացած է. «Մենք՝ ժողովուրդներս, չենք վիճում: Նրանք են վիճում: Պարզ է, որ այդ վեճերը քաղաքական գործիչների համար հաց վաստակելու միջոց են: Թուրքերին չսիրողները թող մի անգամ գնան Թուրքիա: Դրանից հետո կհասկանան: Շատ թուրք ընկերներ ունեւ եւ նրանց շատ եւ սիրում»:

Նրան ամենից շատ ոչ քաղաքական գործիչների վեճերն են վշտացրել, ոչ էլ մեկ այլ բան: «Ամենաշատը նեղվել եմ Հրանտ Դինքի սպանության համար: Երանի թե չսպանեին»:

Մեր գրույցի վերջում Բաբայանը համառորեն ցանկանում է ինձ ցույց տալ իր եւ բոլոր հայաստանցիների հպարտությունը համարվող Արարատը:

«30 հազար մարմնավաճառ»

Մի պատմաբան, որի հայրը խորհրդային շրջանում եղել է դիվանագետ, խուսափելով նշել իր անունը, պատմում է հետեւյալը. «Սովետական վարչակարգը կաշառակերության վարչակարգ էր: Նույնիսկ համալսարանում կաշառակերություն կար: Պարկերով փողերը բերում էին մեր տուն, եւ հետո դրանք բաժանվում էին բյու-

րուրատների և դիվանագետների միջև: Համակարգը փոխվեց, և այժմ վաստակում ենք մաքուր փող:

Սակայն նոր համակարգն իրեն դեռ լիովին չի արդարացնում, քանի որ գործազրկության պատճառով շատ մարդիկ գնում են արտերկիր՝ աշխատանք փնտրելու: Հիմնականում տղամարդիկ են գնում: Այստեղ մեկ տղամարդուն հասնում է մոտ 10 կին: Կանանց մեծ մասը, չկարողանալով գտնել ամուսին և աշխատանք, գնացել են Թուրքիա: Ներկայումս Ստամբուլում, Տրապիզոնում, Էրզրումում և Անթալիայում մոտ 30 հազար մարմնավաճառ և երեխա խնամող հայ կին է ապրում: Ցավոք»:

«Եթե սահմանը բացվի, թմրաբիզնեսի բարոններն ի հայտ կգան»

Պատմաբանը նշում է, որ նույնիսկ սահմանի բացման պարագայում հայերի կողմից շարունակվելու են ցեղասպանության ճանաչման պահանջները, և եթե երկկողմ հարաբերություններում որեւէ խնդիր առաջանա, ապա սահմանը դարձյալ կփակվի: Մեր այն հարցին, թե սահմանի բացման պարագայում ինչեր կփոխվեն, նա պատասխանում է. «Եթե սահմանը բացվի, Իգդիրին, Ադրբին և Կարսին ամենամոտ հիվանդանոցն այստեղ՝ Հայաստանում է լինելու: Օրինակ, սրտի վիրահատություններն այստեղ կատարվում են շատ էժան՝ մոտ 2 հազար դոլարով, այդ պատճառով Երեւանին մոտ Թուրքիայի քաղաքներից բնակիչները գալու են այստեղ բուժվելու: Այս իմաստով, սահմանի բացումը Թուրքիային ոչ մի օգուտ չի բերի: Միայն, օրինակ, Ստամբուլից բերվող ապրանքները, եթե Իգդիրից միանգամից Երեւան մտնեն, թուրքական բեռնափոխադրող ընկերությունների համար ավելի մատչելի կդառնան: Եթե առաջիկայում Ամերիկյան Իրանը ռմբակոծի, պարսիկները կփախչեն Հայաստան: Սակայն այդ պարագայում Հայաստանն անվտանգության նկատառումներով կփակի Իրանի հետ սահմանը: Այդ պատճառով Թուրքիան Հայաստանի համար դեպի ամբողջ աշխարհ դուրս գալու երրորդ այլընտրանքային ճանապարհն է՝ Վրաստանից հետո: Սահմանի բացմանը զուգընթաց՝ Վանից դեպի Հայաստան թմրանյութեր էլ կտեղափոխվեն: Շուտով Հայաստանում նույնպես կհայտնվեն թմրաբիզնեսի բարոններ»:

«Մենք փոքր երկիր ենք...»

«Ռոք» բարի մեներջեր Հարութ Արաբյանը նշում է, որ հայաստանցի շատ երիտասարդներ դեմ են սահմանի բացմանը: Պատճառը հիմնականում վախն է. «Մենք փոքր երկիր ենք: Տե՛նց որ սահմանները բացվեն, մենք կարող ենք կորցնել մեր լեզուն և մշակույթը»:

Արաբյանը՝ պատմելով, որ իր ազգանունը գալիս է օսմանյան ժամանակաշրջանում համիդյան զորախմբերի դեմ կռված, ծագումով արաբ իր պապից, մեզ հայտնեց նաև ցեղասպանության մասին իր կարծիքը. «Ես նույնպես ցանկանում եմ մոռանալ ցեղասպանության թեման: Բայց ինչպե՞ս: Այդ մասին մեզ սովորեցնում են

նախակրթարաններում, հետագայում մեր մեծերն են որոշ պատմություններ պատմում: Մենք այդպես ենք մեծացել: Տեղի ունեցածների համար ես մեղադրում եմ Օսմանյան պետությանը, այլ ոչ թե ներկայիս Թուրքիայի Հանրապետությանը: Ինչո՞ւ են պաշտպանում օսմանցիների գործած մեղքը: Մենք փոքր երկիր ենք: Մեզանի՞ց են վախենում: Դա էլ չեմ հասկանում»:

Արաբյանը մեզ ցույց տվեց իր պապին պատկանող՝ Օսմանյան կայսրության տարածքում մնացած անշարժ գույքի սեփականության փաստաթղթեր, եւ ասաց, որ ցանկանում է տեր կանգնել իր ժառանգությանը: Մեզ հետ զրուցող մյուս հայ երիտասարդները սկսեցին ծիծաղել:

«Թուրքիան թող անդամակցի ԵՄ-ին»

Երբ «Հենակետ» կոչվող երիտասարդական կազմակերպության նախագահ Սերգեյին հարցրի, թե համաշխարհային ճգնաժամն ինչպիսի ազդեցություն կունենա Հայաստանի վրա, եւ ինչ միջոցներ են ձեռնարկվելու սպասվող գործազրկությունը կանխելու համար, նա փորձում էր հերքել բոլոր վիճակագրական տվյալները եւ պնդում էր, որ ճգնաժամը չի ազդելու Հայաստանի վրա:

Սերգեյն ասում էր, որ Ամերիկայում եւ Ռուսաստանում ապրող սփյուռքահայերը մեծ ներդրումներ են անում երկրում, եւ հիմնականում վերջին երկու-երեք տարիներին տնտեսությունը նկատելիորեն զարգացել է: Սերգեյը՝ հայտնելով, որ մուսուլմանական երկրների միջեւ հայտնված Հայաստանի խնդիրները հարեանների հետ, չնայած աշխարհագրական դիրքին, չեն բխում կրոնի տարբերությունից, միաժամանակ կարեւորում էր Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը. «Թուրքիան պետք է դառնա ԵՄ երկիր: Այսպիսով, Եվրոպայում ապրող սփյուռքահայերի հետ հարաբերությունները կլինեն ավելի սառնարյուն, եւ երկկողմ հարաբերությունների զարգացման տեսանկյունից դրական արդյունքներ կարող են արձանագրվել: Թուրքիան Իրանի նման փակ երկիր չէ: Իրանի հետ մեր սահմանները բաց են, սակայն երկրի քաղաքական վարչակարգի փակ լինելու պատճառով մեր հարաբերություններն էլ ինչ-որ մի տեղ «փակ» են: Բացի այդ, ցամաքային սահմանների բացման դեպքում կապահովվի երկրների տնտեսական զարգացումը: Սակայն այդ հարցին պետք է նայել ոչ միայն տնտեսական տեսանկյունից, այլ՝ որպես մեր համատեղ ապագայի համար կարեւոր մի քայլ»:

«Դինքի սպանության պատճառով Թուրքիայի մասին կարծիք կազմելն անմտություն է»

Սերգեյն անդրադարձավ նաեւ «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի սպանությունից հետո երկրում տիրող մթնոլորտին. «Հրանտ Դինքի սպանության համար մեղավոր են միայն մի քանի արմատական ահաբեկիչներ: Բոլոր թուրքերին այդ պատճառով մեղադրելը ճիշտ չէ: Ափսոս, որ բոլոր ազգություններում էլ նման մարդիկ կան»:

«Դաշնակցությունը կենտրոնամետ է»

Սերգեյը պատմում է, որ ազգայնական գաղափարներով հայտնի Դաշնակցություն կուսակցությունը վարում է կենտրոնամետ քաղաքականություն եւ կողմնակից է Թուրքիայի հետ երկխոսությանը: «Ցեղասպանության հարցում խիստ դիրքորոշում ունենք, սակայն դա մեզ համար ոչ թե քաղաքական, այլ հիմնականում զգացմունքային խնդիր է: Մեր ցավերը չենք մոռանա, սակայն պատրաստ ենք բացելու մի նոր էջ: Ես հավատում եմ, որ երկու երկրների միջեւ փոխայցելությունների վերաբերյալ սխալ ընկալումը կվերանա»: Սերգեյն իր խոսքն ավարտում է այսպես. «Ամենավատ խաղաղությունը նույնիսկ ամենալավ պատերազմից լավ է»:

«Գյուլը եկավ, բայց մենք էինք կանչել»

Չնայած այն բանին, որ թուրքական մամուլը նախագահ Աբդուլլահ Գյուլի՝ Հայաստան կատարած այցելությունը գնահատում են որպես մի մեծ քայլ, այնուամենայնիվ, Սերգեյը նշում է, որ նրան հրավիրել էր Հայաստանը, եւ դա Հայաստանի կողմից երկու երկրների հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլ էր:

«Երկու երկրների միջեւ կան վիճելի հարցեր»

- Եթե փողոցում հարցնեք, թե որն է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ գոյություն ունեցող ամենակարեւոր խնդիրը, ձեզ կասեն՝ ցեղասպանությունը: Սակայն իրականությունն այլ է, - ասում է ակադեմիկոս Տիգրան Մաթոսյանը: Գիտնականը նշում է. «Թուրքիայի համար այսպես կոչված ցեղասպանության խնդիրն այդքան էլ կարեւոր չէ: Երկու երկրների կողմից բանակցությունների սեղանին դրվող խնդիրները տարբեր են: Այդ պատճառով էլ կան վիճելի հարցեր: Քանի որ նախապայման համարվող խնդիրները տարբեր են, այդ պատճառով էլ երկու երկրների միջեւ երբեք տեսական համաձայնություն չի կայանում: Հայաստանում կան մարդիկ, ովքեր մտածում են, որ քանի դեռ Թուրքիան չի ճանաչել ցեղասպանությունը, հայերը հետագայում կարող են հայտնվել երկրորդ աղետի դեմ հանդիման: Հիմնականում, սակայն, ժողովրդի ամենամեծ ցանկությունը ցամաքային սահմանի բացումն է: Եթե տնտեսական տեսանկյունից նույնիսկ չպաշտպանեն ցամաքային սահմանի բացման կարեւորությունը, ապա կարծում եմ, որ երկու երկրները զարգանալու են երկկողմ պատմական արժեքները հարգելու ճանապարհով»:

Մաթոսյանը մեկնաբանում է նաեւ, թե ինչու է դեմ սահմանի բացմանը. «Սահմանի բացվելուց հետո Հայաստանում լինելու են շահողներ եւ տուժողներ: Եթե սահմանը բացվի, հայկական շուկա կբերվեն շատ էժան ապրանքներ, եւ դրա պատճառով հայ արտադրողները կհայտնվեն ծանր իրավիճակում»:

Սեւակ Քարամյանը մեզ սպասարկում էր Ստամբուլից գնված աչքաուլունքի պատկերով թելի բաժակներով եւ ժպտալով պատմում, որ առաջին անգամ Ստամբուլ գնալիս վախենում էին, որ իրենց կսպանեն: Ըստ նրա՝ թուրքական մամուլում սխալ տեղեկատվության պատճառն այն է, որ շատ մեծ ուշադրություն են դարձնում Դաշ-

նակցություն կուսակցության մեկնաբանություններին. «Թուրք - հայկական հարաբերությունների առնչությամբ Դաշնակցություն կուսակցության ձայնն ավելի շատ է լավում: Սակայն հայտնի է, թե որքան է այս կուսակցության ստացած քվեն հայ հասարակության շրջանում: Իրականում այս կուսակցությունը հասարակության մեջ համարժեք համարում չունի»:

«Չորս միլիոնանոց բնակչությունն ունի հարյուրից ավելի քաղաքական կուսակցություն»

Քարամյանն ասում է, որ երրորդ սերունդն արդեն ցեղասպանության թեմայով խոսել չի ցանկանում: Չնայած 4 միլիոնանոց բնակչություն ունեցող երկրում 100-ից ավելի քաղաքական կուսակցություն կա, այնուամենայնիվ, երիտասարդներն ապաքաղաքականացված են:

Քարամյանը կարծում է, որ Օբաման չի կատարելու ընտրություններից առաջ հայկական համայնքներին տված՝ ցեղասպանության ճանաչման վերաբերյալ իր խոստումը: Ըստ նրա՝ հայկական համայնքներն անտեղի են սպասում ապրիլի 24-ին: Քարամյանը դա մեկնաբանում է հետեւյալ կերպ. «Քանի որ դա վտանգելու է Թուրքիայի հետ հարաբերությունները, իսկ ԱՄՆ-ը դա երբեք թույլ չի տա»:

Քարամյանի կարծիքով, եթե Հայաստանը Nabucco նախագծին մասնակցի, ապա հնարավոր է, որ վատանան Ռուսաստանի հետ հարաբերությունները: Ըստ նրա՝ կզարգանա մասնավոր սեկտորը, եւ երիտասարդներն աշխատանք կփնտրեն մասնավոր հաստատություններում եւ միջազգային կազմակերպություններում: «Սովետական վարչակարգի փլուզման ժամանակ մեր ընտանիքներն աշխատում էին պետության համար: Սակայն Սովետական Միության փլուզումից հետո այդ գործարանները փակվեցին, եւ բոլորը մնացին անգործ: Երբ որեւէ ապրանքատեսակ էր արտադրվում, դրա մեկ դետալը պատրաստվում էր Հայաստանում եւ ուղարկվում էր Ռուսաստան: Դուք չէիք կարող ամբողջությամբ արտադրել մեկ ամբողջական ապրանքատեսակ: Այդպես է անում նաեւ «Ֆորդ» ընկերությունը»:

Թուրքիայի վերաբերյալ իր գիտելիքները ցուցադրելով՝ Քարամյանը թվարկում էր Օրհան Փամուքի, Նազրմ Հիքմեթի, Թարքանի, Հասան Շաշի անունները եւ պատմում, որ Հայաստանում հայտնի Կիլիկիա գարեջրի անվանումը Թուրքիայի Կիլիկիա շրջանի անվանումն է: Երեւանում մի գիշերային ակումբում տարբեր երկրներից եկած լրագրողների հետ խոսում էինք Հայաստանի եւ Թուրքիայի մասին: Այստեղ նույնպես սովոր են խնդիրները լուծել խմիչքի սեղանի շուրջ: Ծագումով հայ, Անգլիայի քաղաքացի Օնիկը ժպտալով հայտնում է երկու երկրների վերաբերյալ իր լավատեսական հայացքները. «Այս սեղանի շուրջ այնքան շատ ենք, որ կարող ենք լուծել այդ խնդիրը»:

«Աբդուլլահ Գյուլի՝ Երեւան կատարած այցի ընթացքում Դաշնակցություն կուսակցության անդամների բողոքի ակցիան էական նշանակություն չունեք: 100 կամ էլ 200 հոգի էին: Դա մեծ խնդիր չէ: Երբեք չեմ կարող մոռանալ թուրքական դրոշակով ավտոմեքենան, որն անցավ հայկական անվտանգության ուժերի ուղեկցությամբ. կարեւորը սա է», - ասում է Օնիկը:

Օնիկը լրջորեն կասկածում է, որ ցեղասպանություն բառն արտացոլում է 1915 թվականի իրադարձությունները: Նա ասում է, որ հայ երիտասարդների մի մասի համար ցեղասպանության խնդիրը գլխացավանք է. «Նրանք ցանկանում են ազատ լինել եւ արդեն չեն ուզում դրա մասին մտածել»: Այստեղ հնչող որոշ հայկական երգերի երաժշտությունն անկախության քայլերգ է հիշեցնում: Գուցե այդ պատճառով էլ երիտասարդներն ավելի շատ լսում են ամերիկյան երաժշտություն: Սովետական վարչակարգն արդեն անցյալում է, սակայն որոշ սովետական ավանդույթներ որպես ժառանգություն մնացել են. «Եթե ուզում եք դիմացիկին վստահել, սպա առանց օղի խմելու ոչ մեկի հետ մի խոսեք»:

«Ոչ մեկի միջնորդության կարիքը չունենք»

Միջազգային հարաբերությունների բաժնի մագիստրատուրայի ուսանողուհի Անի Գրիգորյանը կարծում է, որ Թուրքիան երբեք չի ճանաչելու ցեղասպանությունը:

- Ընդունելու համար առաջ է բերելու Լեռնային Ղարաբաղի հարցը, - ասում է նա: Գրիգորյանն ընդգծում է, որ ցեղասպանության խնդիրն իրենց համար ոչ թե պատմական, այլ հասարակագիտական խնդիր է: Գրիգորյանը շարունակում է հետեւյալ կերպ. «Առանց այլ երկրների միջնորդության երկու երկրները կարող են լուծել իրենց հարցերը: Երկու ժողովուրդների միջեւ էական խնդիր չեմ տեսնում: Միայն քաղաքական գործիչների մակարդակով քննարկումները կարող են մեծ խնդիրներ առաջացնել: Այստեղ մարդիկ ցանկանում են, որ ցեղասպանությունն ընդունվի առանց նախապայմանների: Ներողության ստորագրահավաքը մեզանում սպասվածի նման մեծ արձագանք չունեցավ: Շատ խոսեցին այդ մասին, սակայն դա չկարեւորվեց որպես մի մեծ իրադարձություն: Սփյուռքահայերն այս հարցում զրուցակից չունեն, քանի որ այն երկրները, որտեղ նրանք ապրում են, իրենցը չէ, եւ այս հարցին կարողանում են տեր կանգնել միայն զգացմունքային եւ հայրենակարոտության տեսանկյունից: Ես կարծում եմ, որ երկու երկրների միջեւ կա սխալ տեղեկատվություն: Դա էլ տարբեր եւ սխալ ընկալումների պատճառ է դառնում: Հայկական խնդրի մասին խոսում են միայն հայկական համայնքները: Երկու երկրները կարող են առանց այլ պետությունների միջնորդության լուծել իրենց հարցերը: Ոչ մեկի միջնորդության կարիքը չունենք»:

«Երիտասարդները մեծանում են ամերիկյան մշակույթով»

Մի սրճարանում որպես մատուցող աշխատող Ավի Գալուստյանը հայ երիտասարդների փոփոխվող տեսքի մասին պատմում է հետեւյալը. «Տասը տարի առաջ, երբ դեռ սովետական կարգերն էին իշխում, այստեղ նեղ ջինսեր հագնողների վրա ծիծաղում էին: Արեւմտյան ոճ էր՝ այդ պատճառով: Հիմա բոլորն այդ ոճով են հագնվում: Երիտասարդ հայ աղջիկներն իրենց մազերը հիմնականում կտրում են նույն ոճով եւ հագնվում են միանման: Հայաստանում աղջիկների եւ տղաների հարաբերակցությունում անդունդ կա: Այդ պատճառով այստեղի աղջիկները չափազանցված են հագնվում եւ գրիմ անում: Ներկայումս հագնվելու ամերիկյան ոճն ինքնուրույն է: Երիտասարդները մեծանում են ամերիկյան մշակույթով»:

Իվեր ԵԶԳԱՆԻ

Ստամբուլում հրատարակվող «Միլլիյեթ» օրաթերթի արտասահմանյան քաղաքականության գծով թղթակիցն է: Ավարտել է Մարմարայի համալսարանի տեղեկատվության ֆակուլտետը:

Մագիստրատուրան ավարտել է Լոնդոնի Սիթի համալսարանում:

8 տարի աշխատել է Ստամբուլի «Զումհյուրիեթ» օրաթերթում, 1 տարի՝ Լոնդոնի Մամուլի ասոցիացիայի հեռուստատեսային լրատվության բաժնում, «Բի-Բի-Սի»-ի վավերագրական հեռուստանախագծերում: Նա 2008-ին Knight Wallace ընկերակցության ծրագրով ուղարկվել է ԱՄՆ՝ մեկ քննաշրջան Միչիգանի համալսարանում վերապատրաստվելու:

«ՍԱՀՄԱՆԸ ՄԻ ՔԱՆԻ ԱՄՍՈՒՄ ԿԲԱՑՎԻ»

Աղքատությունից եւ անգործությունից տառապող հայ ժողովուրդը ցանկանում է, որ սահմանը բացվի...

Ռ-ազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Կիրակոսյանն ասում է. «Պետք է վերջ տալ գաղտնի հանդիպումներին: Մեկ - երկու ամսում հայ - թուրքական սահմանը բացվելու է: Մայիսից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում հաստատվելու են դիվանագիտական հարաբերություններ»:

Նախաբան. Հայաստանը երկար տարիներ Թուրքիայի համար եղել է խոչընդոտ հանդիսացող երկրներից, իսկ հայկական հարցն էլ «արգելված թեմաներից» մեկն է համարվել: Սակայն վերջին մի քանի տարիներին Թուրքիայի եւ Հայաստանի միջև հարաբերությունների բարելավման ուղղությամբ փոխադարձ կարեւոր քայլեր են կատարվել:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով նախագահ Աբդուլլահ Գյուլի՝ 2008 թվականին Հայաստան - Թուրքիա ֆուտբոլային մրցախաղը դիտելու նպատակով Հայաստան կատարած այցելությամբ սկսված գործընթացն արդեն այնքան է արագացել, որ Թուրքիա - Հայաստան սահմանի բացումը շատ մոտ է գրեթե անվերապահ է համարվում:

Լավ, իսկ Հայաստանի ժողովուրդն ինչպե՞ս է գնահատում փոխադարձ բարելավման այս գործընթացը: Թուրքիայի հետ «ֆուտբոլային դիվանագիտությունը» հասարակության մեջ ի՞նչ տրամադրություն ստեղծեց: Թուրքիայում մի խումբ մտավորականների սկսած՝ «Ներողություն ենք խնդրում» ստորագրահավաքը Հայաստանում ի՞նչ արձագանք ունեցավ: Հայ ժողովուրդն ինչպե՞ս է վերաբերվում սահմանի բացման գաղափարին: Այս հարցերի պատասխանը ստանալու ակնկալիքով Հայաստանում ամենուր հանդիպեցի անսպասելի ջերմության եւ մտերմիկ ընդունելության, չնայած որ եւ թուրք լրագրող էի:

Տեղի ունեցող զարգացումները հայ հասարակության մեջ փոխել են Թուրքիայի եւ թուրքերի նկատմամբ ունեցած «սպառնալիքի» նախատրամադրվածությունը: Ինչ-

քան էլ որ նրանք ասեն, թե «հնարավոր չէ մոռանալ անցյալում տեղի ունեցածը...», շարքային հայ քաղաքացու և ազգությամբ թուրքի հանդիպումը ջերմ է լինում: Ցեղասպանության խնդիրը հայերի համար դեռևս շատ կարեւոր է, սակայն մեծամասնությունը Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավումն ու սահմանների բացումը և ցեղասպանության խնդիրը համարում են առանձին թեմաներ:

Մեզ հանդիպած գրեթե բոլոր մարդիկ հետևյալ կերպ էին մտածում. «Երկու երկրների միջև պետք է հաստատվեն դիվանագիտական հարաբերություններ, և որքան հնարավոր է շուտ պետք է սկսվի սահմանային առևտուր»:

Քաղաքական վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսյանը Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) տնօրենն է: ԱՄՆ-ի քաղաքացի, ծագումով հայ և երկու տարի Հայաստանում ապրող Կիրակոսյանը միաժամանակ որպես խորհրդատու է աշխատում ամերիկյան բանակում (ԱՄՆ - Թուրքիա ռազմական հարաբերությունների վերաբերյալ) և Միջազգային հակաճգնաժամային խմբում (Հայաստան - Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ):

Կիրակոսյանը վստահ է, որ մի քանի ամսում հայ - թուրքական սահմանը բացվելու է: Նա նշում է, որ արդեն մի քանի ամիս է, ինչ Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների բացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման նպատակով բարձրաստիճան դիվանագետներն աշխատում են մի գաղտնի ծրագրի մշակման վրա:

Համատեղ հանձնաժողով

Նշելով, որ գաղտնի հանդիպումներն արդեն ավարտվել են, Կիրակոսյանն ասում է. «Մեկ-երկու ամսում Հայաստան - Թուրքիա սահմանը բացվելու է, այնուհետև մայիսից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում հաստատվելու են դիվանագիտական հարաբերություններ»:

Ըստ Կիրակոսյանի՝ այս քայլերին հետևելու է երկու երկրների միջև համատեղ «միջկառավարական հանձնաժողովի» ստեղծումը: Քանի որ հայերը «պատմաբանների հանձնաժողով» ստեղծելուն դրական չեն վերաբերվում, սա չի կոչվելու «պատմաբանների հանձնաժողով», որպեսզի հայերն ընդունեն հանձնաժողով ստեղծելու գաղափարը: Այս զարգացումների արդյունքում, որպես 4-րդ քայլ, դարաբաղյան խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով կազմվելու է ճանապարհային քարտեզ:

Ըստ Կիրակոսյանի՝ այս զարգացումների լույսի ներքո ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ապրիլի 24-ին «ցեղասպանություն» բառը չի հնչեցնելու: Սակայն Կիրակոսյանը վստահ է, որ տարեվերջին Հայոց ցեղասպանության բանաձեռը քննարկվելու է ԱՄՆ-ի Կոնգրեսում:

«Սահմանը բացվելու է»

Նախագահ Սերժ Սարգսյանի ղեկավարած Հանրապետական կուսակցության անդամ և ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը նույնպես

անդրադառնում է այս խնդրին: Շարմազանովը սահմանների բացման կապակցությամբ ասում է, որ հայ եւ թուրք դիվանագետների միջեւ շարունակվում են հանդիպումները: Նա վստահաբար նշում է հետեւյալը. «Շատ հեռու չէ, մոտ սպագայում սահմանները բացվելու են»:

Շարմազանովն ընդգծում է այն հանգամանքը, որ պետք է Հայաստանը տարբերել հայկական Սփյուռքից, քանի որ Հայաստանն անկախ պետություն է եւ ունի իր շահերը:

Գասպարյան. «Տատիս փրկել են թուրքերը»

«Մենք տարիներ ի վեր ապրել ենք միասին... » Չնայած ես դեռ չէի ուղղել իմ հարցերը, սակայն աշխարհահռչակ դուդուկահար Ջիվան Գասպարյանն այսպես սկսեց իր խոսքերը: Նրա հետ զրուցում էինք իրեն պատկանող գեղեցիկ, հին հայկական ոճով կառուցված քարակերտ առանձնատանը:

Պատին կախված էին տարբեր երաժշտական գործիքներ. պարզ երեւում էր, որ դրանք հաճախակի են օգտագործվում: Չնայած Գասպարյանը բազմիցս է այցելել եւ համերգներով հանդես եկել Թուրքիայում, այնուամենայնիվ, ես անհանգստանում էի, թե «արդյոք ի՞նչ է ասելու»:

Մեր զրույցի ընթացքում պարզվեց, որ նա ոչ միայն երաժիշտ է, այլ միաժամանակ նաեւ գիտնական է...

Գասպարյանին պատմեցի մեր ընտանիքի անցյալից. «Մենք ադրբեջանցի ենք: Գյանջայում դաշնակցականներից փախչող մորս պապին փրկել է նրա հայ հարեաններից մեկը»:

Իսկ Գասպարյանը պատասպանեց. «Ինչպիսի գուգադիպություն. իմ տատին էլ փրկել է թուրք հարեանը, երբ նա երեխա ժամանակ փախչելիս է եղել 1915 թվականի ցեղասպանությունից»:

Ներկայացնում ենք Գասպարյանի ընտանիքի պատմությունը:

«Թաքցրել են գոմում»

Մենք արմատներով Մուշից ենք: Տատս 1915 թվականի ձեր ասած «ցավալի իրադարձությունների», իսկ մեր ասած ցեղասպանության ժամանակ փոքրիկ երեխա է եղել: Նրան եւ ընտանիքի մյուս երեխաներին թուրք հարեանները թաքցրել են գոմում, կովերի հետեւում: Այդպես է տատս ողջ մնացել: Հետագայում ուրիշ ընտանիքների հետ եկել է Հայաստան: Սակայն մենք դեռ չենք կարողացել գտնել այնտեղի մեր արմատները: Շատ կան փրկվելու նմանատիպ պատմություններ:

Թուրքիայում ինձ շատ լավ ընդունեցին: Առաջին անգամ գնացի 2000 թվականին: Համերգ էի տալիս Ստամբուլում, դեռ ազգանունս չստացած՝ հանդիսատեսը ոտքի կանգնեց եւ սկսեց ծափահարել: Ես կանգնածս տեղում սկսեցի դողալ: Նախատեսված էր, որ պետք է մնայի մեկ օր, սակայն թուրքերն ինձ այնքան լավ ընդունեցին, որ մնացի մեկ շաբաթ: Երբ այնտեղ էի, չէի զգում Թուրքիայում եմ, թե՞ Երեւանում:

«Սարը գելին» (Մարի աղջիկ) երգի հեղինակը հայտնի չէ

«Սարը գելին» ժողովրդական երգը թուրքերը, հայերը, ադրբեջանցիները, պարսիկները, բոլորն ասում են՝ «մեր երգն է»: Ինչեւէ, «Սարը գելին»-ը ժողովրդական երգ է, եւ հայտնի չէ, թե ով է այն ստեղծել: Դա նույնիսկ կարեւոր էլ չէ: Եւ ադրբեջանցի շատ ընկերներ ունեն, նախկինում այստեղ էինք հանդիպում, հիմա միայն Մոսկվայում ենք կարողանում հանդիպել եւ միասին մի բաժակ օղի խմել:

Վատ հայկական ֆիլմը եւ վատ թուրքական ֆիլմը նույն բանն են

Հայաստանում ամեն տարի կազմակերպվող «Ոսկե ծիրան» կինոփառատոնի նախագահ, հայ ռեժիսոր Հարություն Խաչատրյանը մտաղիւր է թուրքերի հետ համատեղ ֆիլմ ստեղծել: Փառատոնի ընթացքում մեծ թվով թուրքական ֆիլմերի է տեղ հատկացրել: Իմ այն հարցին, թե արդյոք նմանություն տեսնո՞ւմ է հայկական եւ թուրքական ֆիլմերի միջեւ, Խաչատրյանը պատասխանեց. «Թուրքական վատ ֆիլմերը եւ հայկական վատ ֆիլմերն իրար շատ նման են: Հիմնականում երկու ֆիլմերում էլ չափազանցված հույզեր են լինում»:

Ամենից նախատրամադրվածը համալսարանական երիտասարդներն են

Հայաստանում իմ ունեցած հանդիպումների շարքում կար մի խումբ, որն ինչպես նախկինում, այնպես էլ այժմ նախատրամադրված էր Թուրքիայի եւ թուրքերի դեմ: Թուրքագետ երիտասարդները: Երեւանի պետհամալսարանում ինձ հետ խոսող երիտասարդների մեծ մասը բավական կոշտ էր արտահայտվում. «Մենք չենք ցանկանում, որ սահմանները բացվեն, քանի որ թուրքերին չենք վստահում»: Նրանց նախատրամադրվածությունը չէր փոխվել նույնիսկ այն պարագայում, երբ Հրանտ Դինքի թաղմանը երթի էին դուրս եկել հարյուր հազարավոր մարդիկ: Դասախոս Ռուբեն Մելքոնյանն ինձ հանգստացնելով ասում էր. «Նրանց այս տեսակետը գալիս է անտեղյակությունից»:

«Ֆեներբախչե»-ի երկրպագու բարմենը

Վարդան Վարդանյանը, ով բարմենություն է անում Երեւանի հյուրանոցներից մեկում, «Ֆեներբախչե» ֆուտբոլային ակումբի ջերմ երկրպագուներից է: Հազել է «Ֆեներբախչե»-ի գուլպաներ: Ըստ նրա՝ իր սենյակի բոլոր պատերը զարդարում են այդ ակումբի դրոշակները: Վարդանը 6 տարի աշխատել է Թուրքիայում, այդ ընթացքում մտերմիկ հարաբերություններ է հաստատել թուրքերի հետ եւ հասցրել է դառնալ «Ֆեներբախչե»-ի երկրպագու: